



**Ժողովրդական մեղադրանքի
ինստիտուտի ներդրման և զարգացման
հեռանկարները հայկական քրեական
դատավարությունում**

Արտակ Ղազարյան

**Երևան
2019**



Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

**Ժողովրդական մեղադրանքի ինստիտուտի ներդրման և
զարգացման հեռանկարները հայկական քրեական
դատավարությունում**

Արտակ Ղազարյան

Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ քաղաքականության կրթաթոշակներ նախաձեռնության ծրագրի շրջանակներում: Հոգվածում տեղ գտած վերլուծություններն արտահայտում են հեղինակի տեսակետը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի դիրքորոշումների ու տեսակետների հետ:

Բովանդակություն

Ներածություն	4
1. Ժողովրդական մեղադրանքի ինստիտուտի էությունը և դրա նշանակությունը	
1.1 Ի՞նչ է իրենից ներկայացնում մեղադրանքը քրեական դատավարությունում	7
1.2 Մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքի տեսակների պատմական զարգացումն ու դրանց տարանջատման չափանիշը.....	9
1.3 Ի՞նչ նշանակություն ունի ժողովրդական մեղադրանքը և ի՞նչ տեսակներ կարող է ունենալ	15
1.3.1. Ժողովրդական մեղադրանքի նշանակությունը.....	15
1.3.2. Ի՞նչ տեսակներ կարող է ունենալ ժողովրդական մեղադրանքը	18
2. Ի՞նչ կերպ է արտահայտվել ժողովրդական մեղադրանքի ինստիտուտը պատմական և համեմատաիրավական հարթությունում	
2.1 Ի՞նչ կերպ է ժողովրդական մեղադրանքի ինստիտուտը դրսևորվել Հռոմում և ինչ նշանակություն է այն ունեցել.....	24
2.2 Ինչպե՞ս է մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքը դրսևորվել անգլոսաքսոնական և մայրցամաքային քրեադատավարական համակարգի երկրներում.....	29
2.2.1 Ինչպե՞ս է մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքը դրսևորվել անգլոսաքսոնական իրավունքին պատկանող երկրներում (Մեծ Բրիտանիա (Անգլիա, Ուելս), ԱՄՆ).....	29
2.2.2. Ժողովրդական մեղադրանքը մայրցամաքային քրեադատավարական համակարգի երկրներում (Գերմանիա, Ֆրանսիա, Իսպանիա).....	37
2.4 Ժողովրդական մեղադրանքի կազմակերպումը խորհրդային դատավարությունում	47
3. Հնարավոր է արդյոք, և ինչպե՞ս (ի՞նչ չափաբաժինով) ներդնել ժողովրդական մեղադրանքի ինստիտուտը հայկական քրեական դատավարությունում	
3.1 Ի՞նչ կերպ է քրեական դատավարության գործող օրենսգրքով և նախագծով կազմակերպվում մեղադրանքը. ոչ պրոֆեսիոնալ մեղադրանքի կազմակերպման ինչպիսի հնարավորություններ են ընձեռում դրանք.	53
3.2 Ի՞նչ խոչընդոտներ են առկա, ի՞նչ կերպ է հնարավոր հաղթահարել դրանք և ի՞նչ չափով է հնարավոր ներդնել ժողովրդական մեղադրանքը հայկական քրեական դատավարությունում	59
Եզրակացություն.....	66
Առաջարկություններ	67
Օգտագործված գրականության ցանկ.....	70

Ներածություն

Քրեական դատավարությունում մեղադրանքը ունի առանցքային նշանակություն, մեղադրանքն է հանդիսանում վարույթի շարժիչ ուժը, որն էլ ապահովում է հանցանք կատարած անձանց քրեական պատասխանատվության ենթարկելը:

Գիտակցելով հանցագործությունների հանրային իրավական նշանակությունը՝ մեղադրանքի այդ դժվար և պատասխանատու գործառույթը մեր ժամանակներում պետությունները վերցրել են իրենց ձեռքը, այլ կերպ ասած՝ այժմ մեղադրանքը հանդիսանում է պետական գործառույթ, այն իրականացնում են պաշտոնատար անձինք ու պետական մարմինները:

Սակայն պետական մեղադրանքի ձևով մեղադրանքի կազմակերպումը, իր դրական կողմերի հետ մեկտեղ, որոշակի բացասական հետևանքներ է ունենում.

1. Առաջանում է մեղադրանքի «քաղաքականացվածության» վտանգը, որը կարող է արտահայտվել ինչպես «դրական», այնպես էլ «բացասական» եղանակով (օրինակ՝ քրեական հետապնդում իրականացնել՝ որոշակի քաղաքական դրդապատճառներից ելնելով, կամ հակառակը՝ նույն դրդապատճառներից ելնելով՝ քրեական հետապնդման հիմքերի առկայության դեպքում քրեական հետապնդում չիրականացնել՝ քրեական հետապնդումը դադարեցնելու եղանակով): Եվ եթե առաջին դեպքում՝ քաղաքական շարժառիթով պայմանավորված քրեական հետապնդման հարուցման և իրացման դեպքում դրա չեզոքացման իրավական մեխանիզմները առկա են առնվազն պաշտպանության և դրա իրավունքի ապահովման ձևով (հարցն այլ է, թե որքանով են նման դեպքերում արդյունավետ այդպիսի իրավական մեխանիզմները գործում), ապա երկրորդ դեպքում արդեն հանրությունը (դրա անդամները) զրկված են հանցանք կատարած անձի նկատմամբ քրեական պատասխանատվությունն ապահովելու իրավական միջոցներից, դրանք բացակայում են:
2. Պետական մեղադրանքը փաստացիորեն «դուրս է մղում» հանրությանը հանցագործությունների և դրանք կատարած անձանց բացահայտման և հետապնդման գործից. այդպիսով հասարակությունը (դրա անդամները) քրեական հետապնդման գործում սկսում է զբաղեցնել «երկրորդական», «պասիվ» դեր՝ հանցագործությանը արձագանքելու ակտիվ դերակատարի գործառույթը վերապահելով պետական մարմիններին ու պաշտոնատար անձանց: Քրեական հետապնդման գործում «դերերի» այդպիսի բաշխումը իր հերթին ձևավորվում է ընդհանուր այն մտայնություն, որ հանցագործությանը արձագանքելը ոչ թե հանրության, այլ պետության, դրա առանձին մարմինների և ոչ թե հասարակության անդամների գործն է: Այդպիսի մտայնությունը նպաստում է հասարակության անդամի մոտ հանցագործության (այն կատարած անձի) բացահայտման ու հետապնդման (պատասխանատվության ենթարկելու) հանդեպ «անտարբերության» գիտակցության ձևավորմանը և որպես հետևանք՝ հասարակության ընդհանուր իրավագիտակցության անկմանը:
3. Հանցավորության աճի համընդհանուր միտումների և պետական ռեսուրսների սահմանափակվածության պայմաններում պետական մեղադրանքի դեպքում դժվար, իսկ շատ դեպքերում օբյեկտիվորեն անհնար է դառնում ապահովել կատարված յուրաքանչյուր հանցագործություն անպատասխան չթողնելու, յուրաքանչյուր հանցագործությանը քրեական հետապնդում հարուցելու ու իրացնելու, որպես արդյունք՝ հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցերը: Այլ կերպ ասած՝ պետական մեղադրանքի դեպքում միջոցների սղության պատճառով անհնար է դառնում ապահովել յուրաքանչյուր հանցանք կատարած անձի քրեական պատասխանատվությունը¹, որ հասարակության (դրա անդամների) քրեական հետապնդման գործառույթում «երկրորդական» և «պասիվ» դերի պայմաններում շատ դեպքերում հանգեցնում է քրեական դատավարության նկատմամբ ընդհանրապես, և մասնավորապես քրեական հետապնդման մարմինների նկատմամբ հանրային վստահության անկման՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

¹ Ուստիև ստեղծվում են քրեական հետապնդման տարատեսակ այլընտրանքներ:

Թվարկված հարցերի լուծման համար առաջանում է մեղադրանքի իրականացմանը մասնավոր անձանց ներգրավելու անհրաժեշտություն, այսինքն՝ պետական (պրոֆեսիոնալ) մեղադրանքին զուգահեռ ոչ պետական (ոչ պրոֆեսիոնալ) մեղադրանքի կազմակերպման անհրաժեշտություն, որն էլ իր հերթին կարող է կազմակերպվել երկու՝ մասնավոր և/կամ ժողովրդական մեղադրանքի եղանակով:

Սույն հետազոտությունը հիմնական նպատակը ինչպես երևում է վերնագրից, հայկական քրեական դատավարությունում ժողովրդական մեղադրանքի ներդրման ու զարգացման հնարավորության հարցը ուսումնասիրելն է:

Առաջադրված նպատակին հասնելու համար հաջորդականությամբ պետք է լուծել հետևյալ խնդիրները

- Պետք է քննարկել ու որոշակիացնել այն հարցը, թե հանցագործության հանրային իրավական ընկալման նարկայիս պայմաններում հնարավոր է արդյոք մեղադրանքի հնարավորություն ընձեռել մասնավոր անձին:

Առանց այս հարցի պատասխանի հետազոտության առաջընթացը և հետևաբար հայկական դատավարությունում ժողովրդական մեղադրանքի ներդրման հնարավորության հարցի քննարկումը անհնար է դառնում: Քանի որ միայն հարցի դրական պատասխանն է հիմք ծառայելու քննարկումը խորացնելու և այն հայկական քրեական դատավարություն թևակոխելու համար:

- Հաջորդիվ պետք է պատասխանել նաև մասնավոր անձի կողմից իրականացվող երկու տեսակ մեղադրանքների՝ ժողովրդական և մասնավոր մեղադրանքի տեսակների տարանջատման հարցին՝ հստակ որոշելով մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքի երկու տեսակների դասակարգման հիմքում դրվող չափանիշը:

Չափանիշի հստակ սահմանումը և ըստ այդմ՝ այդ երկու մեղադրանքների տարանջատումը հնարավորություն կտա երկու ինստիտուտները միմյանցից առանձնացնել, որն էլ հիմք կհանդիսանա արդեն անցնելու հաջորդ խնդրի լուծմանը, այն է՝

- Բացահայտել ժողովրդական մեղադրանքի ինստիտուտի նշանակությունը:
- Ժողովրդական մեղադրանքի նշանակության պարզումից հետո պետք է քննարկել այդ մեղադրանքի կազմակերպման հնարավոր տեսակների հարցը՝ որոշելով յուրաքանչյուր տեսակի համար դասակարգման չափանիշները:

Ժողովրդական մեղադրանքի տեսակների և ենթատեսակների առանձնացումը հնարավորություն կտա հետագայում ինստիտուտի հնարավոր թերությունները բացահայտելիս ընտրել հայկական քրեական դատավարության համար ժողովրդական մեղադրանքի կազմակերպման մեր՝ հայկական իրականության համար «ամենարդյունավետ ու անվնաս» մոդելը՝ հնարավորինս չեզոքացնելով ինստիտուտի կիառման ընթացքում առաջ եկող վտանգները:

- Վերոնշյալ խնդիրները լուծելուց հետո պիտի ուսումնասիրել ժողովրդական մեղադրանքը ժամանակի (պատմական) և տարածության (համեմատախրավական) հարթության մեջ: Եվ պետք է փորձել պարզել արդյո՞ք ժողովրդական մեղադրանքը տեղ է գտել (գտնում) կոնկրետ պետության(ների) իրավական համակարգում, ինչ արտահայտություն է այն ունեցել, ինչ վտանգներ է առաջացրել և դրանց դեմ պայքարի ինչ մեխանիզմներ են մշակվել:

Այս հարցերի պատասխանը խիստ կարևոր է. պատմական փորձի և տարբեր երկրների գործող օրենսդրության մեջ ժողովրդական մեղադրանքի ինստիտուտի ուսումնասիրությունը թույլ կտա հայկական քրեական դատավարությունում ժողովրդական մեղադրանքի կազմակերպման մոդելն ուրվագծելիս ընտրել դրա կազմակերպման եղանակներ, որ հնարավոր լինի խուսափել այնպիսի կանոնակարգումներից, որոնք ինքին կվտանգեն ինստիտուտի գործնականում կիրառելիությունը և/կամ «կհեղինակագրկեն» նշված մեղադրանքը:

Մյուս կողմից դա նաև թույլ կտա մեզ հետագայում մշակել նշված մեղադրանքի չարաշահման վտանգները չեզոքացնելու մեր տարբերակը՝ հաշվի առնելով արդեն այլ երկրների փորձը այս հարցում:

- Լուծելով վերոնշյալ խնդիրը՝ այնուհետև պետք է անդրադառնալ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքին, ինչպես նաև նախագծին, քննարկել ու վերլուծել դրանցում մասնավոր անձի

կողմից իրականացվող (ոչ պրոֆեսիոնալ) մեղադրանքի կազմակերպման հարցերը՝ փորձելով պարզել, թե ինչ կերպ է այն կարգավորվում օրենսգրքով ու նախագծով:

- Պետք է քննարկել նաև ժողովրդական մեղադրանքի ինստիտուտի ներդրման հնարավոր խոչընդոտները հայկական քրեական դատավարությունում, բացահայտել հնարավոր վտանգները, և դրա հիման վրա առաջարկել ժողովրդական մեղադրանքի ներդրման սեփական մեխանիզմը՝ ուրվագծելով նաև դրա հետագա զարգացումը:

Ուսումնասիրությունը հիմնականում կիրականացվի պատմական, փաստաթղթերի վերլուծության, փորձագիտական հարցազրույցների ու հարցման մեթոդների հիման վրա:

1. Ժողովրդական մեղադրանքի ինստիտուտի էությունը և դրա նշանակությունը

1.1. Ի՞նչ է իրենից ներկայացնում մեղադրանքը քրեական դատավարությունում:

Քրեական հետապնդումը (մեղադրանքը՝ դատավարական իմաստով²-Ա.Ղ.) քրեական դատավարության առանցքային գործառույթն է առանց որի, մեծ հաշվով, ընդհանրապես անհնար է պատկերացնել այն: Քրեադատավարագիտության մեջ առկա տեսակետի համաձայն՝ մեղադրանքն է այն հիմքը, որի վրա կառուցվել է քրեական դատավարությունը³: *Հենց քրեական հետապնդումն է հնարավոր դարձնում հանցագործություն կատարած անձի նկատմամբ քրեական պատասխանատվության վրա հասնելը:*

Որպեսզի հնարավոր լինի անձին ենթարակել քրեական պատասխանատվության, անհրաժեշտ է նախ ապացուցել հանցագործության կատարման փաստը, հիմնավորել կոնկրետ անձի կողմից այդ հանցավոր արարքի կատարումը և ապացուցել վերջինիս մեղավորությունը այդ արարքում:

Քրեական հետապնդումը այն գործառույթն է, որ ուղղված է կոնկրետ անձին հանցագործության կատարման մեջ մերկացնելուն ու նրա մեղավորությունը հանցագործության (հանրորեն վտանգավոր արարքի) կատարման մեջ հիմնավորելուն և արժանի պատիժ (քրեաիրավական ներգործության միջոց) ապահովելուն:

Այս իմաստով կարելի է ասել, որ քրեական հետապնդումը հանդիսանում է հանցագործություն կատարած անձի քրեական պատասխանատվության վրա հասնելու անհրաժեշտ նախադրյալ:

Մեղադրանքը ծագմամբ քրեական դատավարությունում միաժամանակ ծագում է հակառակ գործառույթը՝ պաշտպանության գործառույթը:

Այլ կերպ՝ մեղադրանքի սկիզբը ծնում է նաև պաշտպանությունը իրավունքը՝ հնարավորություն ընձեռելով պաշտպանության գործառույթի իրականացման համար: Եվ որպեսզի անձը, ում նկատմամբ սկսվել է քրեական հետապնդում, կարողանա արդյունավետ կերպով պաշտպանել իր իրավունքներն ու օրինական շահերը, մեջտեղ է գալիս մեղադրանքի ոչ թե ձևական, այլ բովանդակային իմաստով ընկալման անհրաժեշտություն:

Քրեական հետապնդումը կարևորագույն դեր է կատարում նաև արդարադատության իրականացման գործում:

Քրեական հետապնդման իրացման արդյունքում ձևավորվում է **նյութաիրավական իմաստով մեղադրանքը**, այսինքն՝ որոշակի անձի կողմից քրեական օրենսգրքով չթույլատրված կոնկրետ

² Սույն աշխատանքում մեղադրանք տերմինը կկիրառենք առավելապես դատավարական իմաստով՝ այն նույնացնելով քրեական հետապնդման հետ, հետևաբար՝ այդ երկու հասկացությունները կօգտագործվեն իբրև հոմանիշներ: Մեղադրանք տերմինի՝ նյութաիրավական իմաստով հազվադեպ կիրառման դեպքում հատուկ նշում կարվի դրա մասին: Մեղադրանքը նյութաիրավական իմաստով իր ամրագրում է ստացել ՀՀ քր.դատ.օր-ի (այսուհետ նաև՝ քր.դատ.օր.-Ա.Ղ.) 6-րդ հոդվածի 20-րդ կետում:

³ Ավելի մանրամասն տե՛ս **Фаткуллин Ф.Н., Зинатуллин З.З., Аврах Я.С.** Обвинение и защита по уголовным делам. Казань, Изд-во Казанского ун-та. 1976. էջ 5:

արարքի կատարման մասին ներկայացված հիմնավորումը, կազմվում է մեղադրական եզրակացությունը, **որի շուրջն էլ կառուցվում է ամբողջ դատական քննությունը**⁴:

Այս առնչությամբ մեջբերենք ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը. «(...) գործի դատական քննությունը սահմանափակված է այն անձանց շրջանակով, որոնց նկատմամբ կայացվել է դատական քննություն նշանակելու մասին որոշում և այդ անձանց նկատմամբ առաջադրված մեղադրանքի ծավալով: Սա պայմանավորված է, մի կողմից, մեղադրյալի (ամբաստանյալի) պաշտպանության իրավունքն իրական և արդյունավետ կազմակերպելու անհրաժեշտությամբ, իսկ, մյուս կողմից, այն հանգամանքով, որ դատարանը, որպես արդարադատություն իրականացնող մարմին, չի կարող ինքնուրույն ձևակերպել նոր մեղադրանք՝ փոխարինելով քրեական հետապնդման մարմիններին: (...)»⁵: Իր մեկ այլ որոշման մեջ ՀՀ վճռաբեկ դատարանը նկատում է. «Մեղադրողը օբյեկտիվորեն կրում է դատարան ներկայացրած մեղադրանքի, այդ թվում՝ մեղսագրվող արարքին տրված քրեաիրավական որակման հիմնավորվածության ռիսկը և օրենսդրական կարգավորման մակարդակով ստանում է առաջին ատյանի դատարանում այն փոփոխելու իրավական հնարավորություն: Դատախազի կողմից վերոնշյալ հնարավորությունը չօգտագործելու դեպքում դատարանն իրավասու չէ իր վրա վերցնել մեղադրողի գործառույթները և դուրս գալ ամբաստանյալին նախաքննության ընթացքում առաջադրված մեղադրանքի սահմաններից: Դատական քննության փուլում դատարանի խնդիրն է ստուգել ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունն ու ապացուցվածությունը, և եթե ապացույցների հետազոտման արդյունքում մեղսագրվող արարքը կհաստատվի, դատարանը պարտավոր է կայացնել համապատասխան դատական ակտ այն քրեաիրավական որակման սահմաններում, որը նշված հանցավոր արարքին տրվել է մեղադրական եզրակացությամբ՝ անկախ այն հանգամանքից, թե հաստատված փաստական հանգամանքների պայմաններում ամբաստանյալի արարքը պետք է լրացուցիչ որակվեր նաև այլ հոդվածներով, թե ոչ»⁶:

Ավլածի լույսի ներքո պետք է համաձայնվել գիտության մեջ հնչած այն տեսակետին, համաձայն որի **մեղադրանքի գործառույթից ածանցյալ են ոչ միայն պաշտպանության գործառույթը, այլ նաև՝ արդարադատության իրականացման գործառույթը**⁷:

⁴ Քր.դատ.օր-ի 309-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «Գործի քննությունը դատարանում կատարվում է միայն ամբաստանյալի նկատմամբ և միայն այն մեղադրանքի սահմաններում, որով նրան մեղադրանք է առաջադրվել»:

⁵ Տե՛ս Արկադի Պատվականի Պապյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թ. նոյեմբերի 5-ի թիվ ՏԳ/0115/01/09 որոշման 23-րդ կետը:

⁶ Տե՛ս Արմեն Ջիվանի Բաբայանի և Սուրեն Ռազմիկի Թումանյանի գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0044/01/11 որոշման 23-րդ կետը:

⁷ Տե՛ս, օրինակ, **Бобылев М.П.** Обвинение как предмет уголовного правосудия в современной России. Автореф. Дисс. ...канд. юрид. Наук. Уфа, 2004, էջ 15, Ղամբարյան Ա. Քրեական հետապնդումը (մեղադրանքը) մինչդատական վարույթում: Ուսումնական ձեռնարկ: Եր.: 2016, էջ 34:

1.2. Մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքի տեսակների պատմական զարգացումն ու դրանց տարանջատման չափանիշը

Հայտնի է, որ վաղնջական ժամանակներում, ինչպես նախքան պետության, պետական իշխանության առաջացումը, այնպես էլ դրանց ծագման սկզբնական շրջանում, գոյություն ունեին հանցագործության մասնավոր-իրավական ընկալում, համաձայն որի հանցագործությունը ոչ թե վնասում էր հանրությանն ընդհանրապես, այլ՝ կոնկրետ անձին, նրա ընտանիքին (տոհմին, ցեղին), և հետևաբար՝ ոչ թե ամբողջ հանրության, այլ հանցագործությունից տուժողի (նրա ընտանիքի, տոհմի, ցեղի անդամների) խնդիրն էր դառնում հանցագործությանն արձագանքելը: Ուստիև՝ հանցագործության այսպիսի մասնավոր-իրավական ընկալման պայմաններում հանցագործությանն արձագանքելը՝ պատժելը, նույնպես մասնավոր բնույթ էր ստանում որոշ դեպքերում հագուրդ տալով լոկ տուժողի (նրա մերձավորների, հարազատների) բավարարվածությանը (Privatsatisfaction):

Մա նկատի ունենալով Ա.Կ. ֆոն Ռեզոնը գրում է. «Նախկին ժամանակներին հայտնի էին մասնավոր հանցագործություններ՝ *delicta privata*, *privatverbrechen*, որոնք հանդիսանում էին ոչ թե ընդհանուր հասարակական կարգի, այլ՝ մասնավոր անձանց իրավունքների ու շահերի խախտումներ, այդ պատճառով դրանց պատիժները ձեռք էին բերում ոչ թե խախտված օբյեկտիվ կարգը վերականգնելու, այլ տուժողի մասնավոր վարձահատուցման նպատակ՝ *poena privata* և չէին առաջացնում ոչ մի հասարակական հետևանք»⁸:

Հանցագործության մասին վաղ ժամանակների այդպիսի հայացքներն ունեին իրենց պատճառները:

Նախքան պետության ծագումը եղած հանցագործության մասնավոր պատկերացումները հաջող է բնորոշել Ա.Ֆ. Կիստյակովսկին, ըստ որի այդ ժամանակներում հանցագործությունը չէր կարող ընկալվել այլ կերպ, քան մասնավոր իրավախախտում, քանի որ չկար այնպիսի իշխանություն, որը կկարողանար հանցագործությանն ու պատժին անձնական և տոհմային, ցեղային շահերից վեր բնույթ տալ⁹:

Այս առումով Գ.Վ.Ֆ. Հեգելը նշում է. «Այնտեղ, որտեղ հանցագործությունները հետապնդվում և պատժվում են ոչ թե իբրև *crimina publica*, այլ իբրև *privata* (ինչպես օրինակ գողությունն ու կողոպուտը հին հրեաների և հռոմեացիների մոտ...) պատիժը ինչ-որ չափով շարունակում է կրել վրեժի բնույթը... Պատիժը, հասարակության այդ վիճակում, որտեղ չկան ոչ դատավորներ, ոչ օրենքներ, միշտ պահպանում է վրեժի ձևը, և այդ ձևը շարունակում է անկատար մնալ, քանի որ այն **հանդիսանում է սուբյեկտիվ կամքի արարք...**»¹⁰

Սակայն պետության ծագումն իսկ դեռևս բավարար չէր այդպիսի ընկալումների ակնթարթային վերացման համար: Բանն այն է, որ շատ դեպքերում ստեղծվող պետությունները արտաքին վտանգներից պաշտպանվելիս էին միայն կենտրոնացնում իրենց ջանքերը և այդ իսկ

⁸ Տե՛ս **Фон-Резон А. К.** О преступлениях, наказуемых только по жалобе потерпевшего по русскому праву. - СПб., 1882, էջ 2:

Վաղ ժամանակներում հանցագործության և պատժի մասնավոր իրավական ընկալման մասին տե՛ս նաև **Случевский В.** Учебник русского уголовного процесса. Судостроительство -судопроизводство (издание 4-е, дополненное и исправленное). - С.-Петербург, типография М. М. Стасюлевича, 1913, էջ 36, **Фойницкий И. Я.** Курс уголовного судопроизводства. Том I (издание 4-е). - С.-Петербург, типография товарищества "Общественная польза", 1912. էջեր 8, 68-69:

⁹ Տե՛ս **Кистяковский А.Ф.** О пресечении обвиняемому способов уклоняться от следствия и суда. СПб., 1868, էջեր 9-10:

¹⁰ Տե՛ս **Гегель Г. В. Ф.** Философия права. Пер. с нем.: Ред. и сост. Д. А. Керимов и В. С. Нерсесянц; М.: Мысль, 1990, էջ 151:

պատճառով դեռևս «ներսում» մասնավոր անձանց հարաբերությունները կարգավորելու բավարար «ներուժ» չունեին¹¹:

Հանցագործության (delicta privata) և պատժի (poena privata) մասնավոր-իրավական ընկալումները ծնունդ են տալիս մասնավոր մեղադրանքին. հետապնդման իրականացումն ամբողջովին վերապահվում են մասնավոր անձին՝ հանցագործությունից տուժողին (նրա ընտանիքի անդամներին և այլն)՝ հանուն իր (իրենց) մասնավոր շահերի պաշտպանության:

Այսպիսով՝

մասնավոր կհամարվի այն մեղադրանքը, որը իրակացացվում է տուժողի (նրա ընտանիքի անդամների և այլն) կողմից ուղղակիորեն նպատակ ունենալով պաշտպանել տուժողի (նրա ընտանիքի անդամների) **մասնավոր շահերը:**

Սակայն, ինչպես ցույց է տալիս պատմությունը, հանցագործության և պատժի նման սաղմնային պատկերացումները աստիճանաբար, պետական իշխանության ամրապնդմանը զուգահեռ սկսում են իրենց տեղը զիջել հանցագործության և պատժի հանրային իրավական ընկալումներին: Սկսում է գիտակցվել հանցագործության հանրային վտանգավորությունը:

Աստիճանաբար մարդկանց մտապատկերում ձևավորվում է հանցագործությամբ ողջ հասարակությանը վնաս պատճառելու ընկալումը, դրա հանրայնության գիտակցումը:

Այսպիսի աստիճանական իմաստավորումը մասնավոր հանցագործությունների կողքին (delicta privata) ծնունդ է տալիս այսպես կոչված հանրային հանցագործություններին՝ հոմոնեական իրավունքի տերմինաբանությամբ՝ delicta publica-ին:

Մյուս կողմից՝ հանցագործության հանրային-իրավական նշանակության գիտակցումը, իր հերթին, իր հետքն է թողնում այդպիսի հանցագործություններով («հանրային հանցագործություններով») **քրեական հետապնդման իրացման վրա. այն առաջ է բերում ինչպես մեղադրանքի կազմակերպման այլ եղանակներ, այնպես էլ հանգեցնում է ընդհանրապես քրեական դատավարության հանրայնացմանը:**

Հանցագործությունների հետապնդման անհրաժեշտության (հանրային շահի) գիտակցումն իր հերթին ավելի ուշ փուլում պայմանավորում է պետության հանրային իրավական մարմինների ստեղծման անհրաժեշտությունը, որոնց վրա դրվում է յուրաքանչյուր հանցագործության դեպքում ի պաշտոնե քրեական հետապնդում իրականացնելու պարտականություն¹², այդպիսով՝

հանցագործության հանրային իրավական նշանակության գիտակցումը պայմանավորում է պետական (պրոֆեսիոնալ) մեղադրանքի ծնունդը:

¹¹ Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Покровский И.А.** Право и факт в римском праве. Часть 2, Генезис преторского права. – Киев, 1902, էջ 66:

¹² Ի տարբերություն մասնավոր վրեժի շարժառիթով գործող անձանց՝ արդեն հանցագործության հանրային իրավական ընկալումների պայմաններում գործող անձինք, որոնք գործում են հանրային շահերից, բոլորովին այլ «կամք» են արտահայտում: Այս առումով Գ.Վ.Ֆ. Հեգելը նկատում էր. «Անձինք, որոնք գործում են դատարանում, ճիշտ է նույնպես անձ են, սակայն նրանց կամքը հանդիսանում է օրենքի համընդհանուր կամք, և նրանք չենք ձգտում պատժի մեջ ընդգրկել այն, ինչ բացակայում է բնության մեջ», տե՛ս **Гегель Г. В. Ф.** Философия права. Пер. с нем.: Ред. и сост. Д. А. Керимов и В. С. Нерсисянц; М.: Мысль, 1990, էջ 151:

«Քրեական դատավարության պատմությունը սկսվում է դրանում մասնավոր ելակետի գերիշխանությամբ և քրեական դատավարության ու քաղաքացիական դատավարության ամբողջական համընկնմամբ. կողմերի հայեցողությունը և գործի քննության ձևականացումը դառնում են դրա բնութագրական հատկանիշներ: Աստիճանաբար հստակեցվում և զարգանում է քրեական դատավարության հանրային սկիզբը, այն դառնում է **հասարակության, պետության գործը...**»¹³:

Սա ակնհայտ փաստ է, բայց մեր հետազոտման այս մասի համար նշանակություն չունեցող:

Մեզ այստեղ հետաքրքիր է ուրիշ հարց. արդյո՞ք հանցագործության և պատժի հանրային իրավական ընկալումները միայն հանրային մարմինների կողմից իրականացվող (պրոֆեսիոնալ) մեղադրանքի կազմակերպման հնարավորություն են ընձեռում ու բացառում են մասնավոր (ոչ պրոֆեսիոնալ) անձանց կողմից իրականացվող մեղադրանքի կազմակերպման հնարավորությունը:

Այլ կերպ ասած՝ արդո՞ք քրեական հետապնդման կազմակերպումը մասնավոր անձի կողմից վկայում է հանցագործության հանրային-իրավական նշանակության գիտակցության բացակայության մասին:

Հարցին, մեր համոզմամբ, պետք է տալ ժխտողական պատասխան: Այն գիտակցումից, թե հանցագործությամբ վնաս է պատճառվում ոչ միայն տուժողին (չէ՞ որ այն այլևս չունի մասնավոր բնույթ), այլև հանրությանը, հին հասարակությունում սկսում է ձևավորել մի իրավացի մոտեցում, ըստ որի *հենց հանրությունն էլ, հանձինս իր անդամների (քաղաքացիների կամ որոշ դեպքերում դրանց միավորումների), պետք է իրավունք ունենա հետապնդելու ենթադրյալ հանցանք կատարած անձին՝ ի պաշտպանություն հենց հանրային շահի:*

Եվ հասարակության մեջ հանցագործության հանրային իրավական գիտակցումը հիմք է հանդիսանում հանրության ամեն անդամի համար կատարելու իր քաղաքացիական և բարոյական պարտականությունը՝ «հսկելու ընդհանուր բարօրությունը»՝ իրեն հայտնի ամեն հանցագործության դեպք չթողնելով անպատասխան և հանդես գալով իբրև մեղադրող՝ ժողովրդական մեղադրող¹⁴:

Հենց հանցագործությունների հետապնդման ընդհանուր անհրաժեշտության, հանրային շահի գիտակցման գաղափարից էլ ծնվում է **ժողովրդական մեղադրանքը**, այսինքն՝

մեղադրանքը, որը իրականացվում է հանրության (քաղաքացիների, նրանց միավորումների) կողմից, որն անմիջականորեն ուղղված է հանրային շահի պաշտպանությանը:

*Եվ հենց մեղադրանքով պաշտպանվող շահն էլ այն հիմնական չափանիշն է, որով միմյանցից պետք է տարբերակել մասնավոր անձի (անձանց) կողմից իրականացվող այս երկու մեղադրանքները՝ մասնավոր մեղադրանքը և ժողովրդական մեղադրանքը:*¹⁵

¹³ Տե՛ս **Фойницкий И. Я.**, նշվ. աշխ., էջ 16:

¹⁴ Այստեղից էլ առաջանում է մեղադրանքի այս տեսակի անվանումը «ժողովրդական մեղադրանք» (actio popularis):

¹⁵ Այստեղ մենք «մասնավոր շահ» և «հանրային շահ» կատեգորիաները գործածում ենք ոչ թե քրեադատավարական քաղաքականության, այլ քրեադատավարական տեխնիկական իմաստով: Ծախերի այս իմաստներով տարբերակման մասին տե՛ս տե՛ս **Козлова А.Н.** նշվ. աշխ., էջ 123-135 էջեր:

Միևնույն ժամանակ, տարանջատելով «հանրային և մասնավոր շահ» կատեգորիաները քրեադատավարական տեխնիկական իմաստով և դրանց, որոշ դեպքերում, «հակադրությունը» ընդունելով, չենք բացառում նաև, որ **ուղղակիորեն** գործելով հանրային շահի ապահովման և պաշտպանության նպատակով, հնարավոր է նաև **անուղղակիորեն** պաշտպանել մասնավոր շահերը և հակառակը՝ **ուղղակի** գործելով մասնավոր շահերով՝ **անուղղակիորեն** ապահովել հանրային շահի պաշտպանությունը:

Հենց այդ է պատճառը, որ նույնիսկ ներկայումս հանցագործության հանրային իրավական ընկալման գիտակցության առկայությունը ոչ մի կերպ չի խանգարում մասնավոր և ժողովրդական մեղադրանքների տարանջատման գործում առաջնորդվել՝ հիմք ընդունելով պաշտպանվող **առաջնայինը** «շահի» չափանիշով: Բանն այն է,

Ու քանի որ ժողովրդական մեղադրանքը իրականացվում է *անմիջականորեն հանրային շահի* պաշտպանության նպատակով, այստեղ արդեն այն սկզբունքներն տարբերվում է մասնավոր մեղադրանքից. ժողովրդական մեղադրանքի դեպքում մենք գործ ենք ունենում *մասնավոր անձի կողմից իրականացվող հանրային հետապնդման հետ*:

Տվյալ դեպքում հանրային և մասնավոր հետապնդման տարանջատման հիմքում պետք է դնել *ոչ թե անձնային հատկանիշը* (սուբյեկտային հատկանիշը, որն, ինչպես մասնավոր, այնպես էլ ժողովրդական մեղադրանքի դեպքում էլ մասնավոր մասնակից է), այլ՝ *հետապնդմամբ անմիջականորեն պաշտպանվող շահը*:

Նման մոտեցման պարագայում կարող է *հանրային մեղադրանքը կազմակերպվել ինչպես պետական (պաշտոնական), այնպես էլ մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքի (այսինքն՝ ժողովրդական մեղադրանքի) ձևով*:

Իսկ ահա մասնավոր մեղադրանքը կարող է իրականացվել միայն և միայն վարույթի մասնավոր մասնակցի (տուժող, նրա ներկայացուցիչ և այլն) կողմից (քանի որ վարույթի հանրային մասնակիցները գործում են *անմիջականորեն հանրային շահերի ապահովման համար*, և եթե նրանց կողմից իրականացվող հետապնդմամբ անուղղակիորեն ապահովվի տուժողի մասնավոր շահերի պաշտպանություն, մենք չենք ունենա մասնավոր հետապնդում, քանի որ կրացակայի նշված երկու մեղադրանքների տարանջատման վերը բերված *անմիջականության* շահի պաշտպանության հատկանիշը):

Ընդ որում՝ պետք է փաստենք, որ որոշակի յուրօրինակ սոցիալ-քաղաքական պայմաններում կարող է նպատակահարմար համարվել հանրային հետապնդման ոչ թե պետական մեղադրանքի ձևով կազմակերպումը (որտեղ հետապնդումն իրականացնողները պետական պաշտոնատար անձինք են), այլ՝ ժողովրդական մեղադրանքի ձևով կազմակերպումը (որտեղ որպես մեղադրող կարող է հանդես գալ ցանկացած անձ): Եվ դա, հաշվի առնելով որոշակի յուրօրինակ պայմանները, կարող է *վկայել հանրային հիմքի գերանի, հանրային շահի առավել հետևողական պաշտպանության ապահովման նկրտումների մասին*¹⁶:

Հենց հանրային շահի պաշտպանության նպատակով էլ մասնավոր անձանց իբրև մեղադրող (ժողովրդական մեղադրող) գործելը, ինչպես ցույց է տալիս պատմությունը, գոնե սկզբնական շրջանում խիստ պատվաբեր գործունեություն է համարվել և, օրինակ, Հռոմի քաղաքացիների համար դա դիտարկվել է իբրև բարոյական-քաղաքացիական պարտք¹⁷: Որոշ դեպքերում նույնիսկ այդ «պարտքը» կարող էր ձեռք բերել պարտականության հատկանիշներ (Օրինակ, Հռոմում մեղադրանք չներկայացնելը խայտառակություն էր համարվում¹⁸):

Ընդ որում, ժողովրդական մեղադրանքով հանրային շահի պաշտպանության տեղ է գտել ոչ միայն հին, վաղնջական ժամանակներում, այլ նաև համեմատաբար նոր և ներկա ժամանակներում.

որ մասնավոր մեղադրողը, ինչպես արդեն նշեցինք, գործում է **ուղղակի** իր անձնական, մասնավոր շահերով, որը չի բացառում իր անձնական շահերի համընկնում, արդեն **անուղղակիորեն**, հանրային շահի հետ:

¹⁶ Որպես օրինակ կարող է հանդիսինալ Հռոմի հանրապետության շրջանում հանրային մեղադրանքը միայն հիմնական ժողովրդական մեղադրանքի ձևով կազմակերպումը: Բանն այն է, որ Հռոմում, հանրապետության ուշ շրջանի մագիստրատները, որոնք պաշտոնավարում էին մեկ տարուց ոչ ավել ժամկետով, առավելապես զբաղված էին քաղաքականությամբ ու կուսակցական տարաձայնություններով և բավարար ուշադրություն չէին հատկացնում ընթացիկ գործերին. այս կամ այն գործի հանդեպ հազվադեպ ուշադրությունն էլ բխում էր կուսակցական կամ զուտ սուբյեկտիվ նկրտումներից, (տե՛ս **Покровский И.А.** Частная защита общественных интересов в Древнем Риме // Древнее право. IVS ANTIQVVM. - М.: Спарк, 1999, № 2 (5), էջ 198), հետևաբար էլ այսպիսի պայմաններում հիմնական ժողովրդական մեղադրանքի կազմակերպումը, բնական է, վկայում է հանրային հիմքի գերանի ու ոչ թե հակառակի մասին: Տե՛ս նաև **Покровский И.А.** Частная защита общественных интересов в Древнем Риме // Древнее право. Ivs antiqvvm. - М.: Спарк, 1999, № 2 (5), էջ 194:

¹⁷ Տե՛ս, օրինակ, **Гуцев В.Е., Александров, А. С.** Народное обвинение в уголовном суде. Н.Новгород: НЮИ МВД РФ, 1998. (http://kalinovsky-k.narod.ru/b/aleksandrov_1998/2.html#22):

¹⁸ Տե՛ս, օրինակ, **Васильева Е.Г.** Уголовный процесс: догматико-аксиологическое исследование. Монография. М.: Юрлитинформ, 2013, էջ 274: Թ. Մոմգենի վերոհիշյալ դիտարկումն էլ փաստում է, որ մասնավոր անձի կողմից «պարտքի», «պարտականության» խոր գիտակցումն էլ կարող է հանդիսանալ քաղաքական գործունեություն ծավալելու լավ գրավական:

այն տեղ է գտել ինչպես մայրցամաքային, այնպես էլ անգլոսաքսոնական քրեական դատավարության համակարգին պատկանող մի շարք երկրներում:

Մայրցամաքային և անգլոսաքսոնական քրեական դատավարության տարբեր մոտեցումների, ինչպես նաև գրականության մեջ տեղ գտած հայացքների համադրության արդյունքում դատավարագետ Ա.Ն. Կոզլովան հանրայնության սկզբունքին նվիրված իր ատենախոսության մեջ արձանագրում է, որ. «Ինչպես մայրցամաքային, այնպես էլ անգլոսաքսոնական քրեական դատավարությունում *հանրային հիմքի ծնունդը տեղի էր ունեցել ժողովրդական մեղադրանքի ձևով*»¹⁹ (ընդգծումն իմն է - Ա.Ղ.):

Այստեղ արդեն մենք մոտենում ենք մի հարցի, որի կողքով չենք կարող անտարբեր անցնել:

*Գրականության մեջ գոյություն ունի մի տեսակետ, ըստ որի ժողովրդական մեղադրանքով հանրային շահի պաշտպանության կազմակերպումը հնարավոր է միայն վաղ, դեռևս չգարգացած հասարակություններում, և «պետականության սկզբունքի զարգացվածության ու ամրապնդվածության պայմաններում արդեն թույլ չի տրվում քրեական հետապնդումը թողնել մասնավոր անձանց ձեռքում, և դրանում տեսնելով պետական իշխանության անբաժան մասնիկ՝ այն հանձնելում է դատախազությանը».*²⁰

Պետք է փաստենք, որ նման մոտեցման հետ չի կարելի միանշանակ համաձայնվել, ու եթե այդպիսի դիտարկումը, թերևս կարելի է իրավացի համարելի միայն քրեական հետապնդման **հիմնական ժողովրդական մեղադրանքի** ձևով կազմակերպման վերաբերությամբ (քանի որ ներկա ժամանակներում դժվար գտվի մի երկիր, որտեղ հանցագործությունների հետապնդման համար չեն ստեղծվել հանրային իրավական հատուկ մարմիններ (դատախազություն և այլն), ինչը իրավական պետություն ունենալու կարևոր բաղադրատարր է), ապա ժողովրդական մեղադրանքի այլ տեսակների (յրացնող և սուբսիդիար)²¹ մասով պետք է անել հակառակ եզրահանգում. հասարակության զարգացմանը զուգընթաց, գիտակցվում է պետական մեղադրանքի մենիշխանության հնարավոր վտանգները (պետական մեղադրանքի արդյունավետության անկում, պետական մեղադրանքի կազմակերպման սակավ միջոցներ, պետական մեղադրանքի հնարավոր չարաշահումներ, հասարակության ազատության հնարավոր սահմանափակում և այլն)²², որով էլ պայմանավորված, կարիք է առաջանում ժողովրդական մեղադրանքի այդ տարատեսակների ներդրման ուղղությամբ²³:

Թերևս հենց պետական մեղադրանքի մենիշխանության վտանգների գիտակցումն է պատճառը, որ ժողովրդական մեղադրանքի ինստիտուտը, ինչը թեև առավել բնութագրական է անգլոսաքսոնական քրեադատավարական համակարգի երկրներին, ներկայումս տեղ է գտնում նաև մայրցամաքային քրեադատավարական համակարգի երկրներում (օրինակ՝ Իսպանիայում)²⁴:

Հետևաբար հարցին, թե հնարավոր է արդո՞ք զարգացած հասարակություններում ժողովրդական մեղադրանքի տարատեսակների գոյությունը, պետք է տանք դրական պատասխան, նկատելով, որ ժողովրդական մեղադրանքի հնացած, «հետամնաց» լինելու մասին այնպիսի հետ կարելի է համաձայնվել միայն **հիմնական** ժողովրդական մեղադրանքի ձևով մեղադրանքի կազմակերպման մասով՝ արձանագրելով, որ ներկայումս էլ հնարավոր է և շատ զարգացած երկրներում շարունակում է գոյություն ունենալ ժողովրդական մեղադրանքի ինստիտուտը, որով էլ իրականացվում է հանրային շահերի արդյունավետ պաշտպանություն՝ պետական (պրոֆեսիոնալ) մեղադրանքի հետ ժողովրդական մեղադրանքի տարատեսակ զուգակցումներով:

¹⁹ Տե՛ս **Козлова А.Н.** Публичность как принцип уголовного судопроизводства: дис к.ю.н., Москва, 2007, էջ 97:

²⁰ Տե՛ս **Муравьев Н.В.** Прокурорский надзор в его устройстве и деятельности: Пособие для прокурорской службы. Т. 1. Прокуратура на Западе и в России. – М., 1889, էջ 13:

²¹ Ժողովրդական մեղադրանքի տեսակների մասին կիսուսի աշխատանքի հաջորդ էջերում:

²² Ժողովրդական մեղադրանքի նշանակության մասին մանրամասն կիսուսի առանձին ենթահարցով:

²³ Հենց այդ էլ պատճառը, որ ավանդաբար պետական մեղադրանքի «գերիշխանության» տակ գտնվող այնպիսի երկրներում էլ, ինչպիսին է, օրինակ, Գերմանիան, դեռ 1800-ականների երկրորդ կեսից սկսում է իրավաբանական մի շարժում՝ գերմանական քրեական դատավարությունում ժողովրդական մեղադրանքի ներդրման ուղղությամբ: Այս մասին առավել մանրամասն կիսուսի աշխատանքի համապատասխան ենթահարցում:

²⁴ Ժողովրդական մեղադրանքի պատմական և համեմատաիրավական հետազոտությունը կարվի աշխատանքի հաջորդ հատվածներում:

Այսպիսով՝ մասնավոր անձի կողմից իրականացվող երկու մեղադրանքի տարաջատման չափանիշի հստակ սահմանումը (անմիջականորեն տվյալ մեղադրանքով պաշտպանվող շահը) մեզ թույլ կտա հետագայում աշխատանքի հաջորդ հատվածներում՝ «< քրեական դատավարության օրենսգրքի, ինչպես նաև քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի դրույթների վերլուծության ընթացքում, հստակ որոշել թե դրանցով մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքի ինչ տեսակ(ներ) է նախատեսվում (եթե իհարկե որևէ տեսակ նախատեսվում է ընդհանրապես):

Երկրորդ, մասնավոր անձի կողմից իրականացվող երկու մեղադրանքի միմյանցից տարանջատումը, մեզ թույլ կտա արդեն առանձին քննարկել և բացահայտել դրա մի տեսակի՝ ժողովրդական մեղադրանքի ինքնուրույն նշանակությունը:

Երրորդ՝ փաստելով, որ ժողովրդական մեղադրանքը «հնացած» ինստիտուտ չէ և այն իրականացվում է հանրայի շահի պաշտպանության (առավել արդյունավետ պաշտպանության) համար, պետք է արձանագրենք, որ հայկական քրեական դատավարությունում այս տեսակ մեղադրանքի ներդրման հարցը չի կարող համարվել ժամանակավրեպ:

Չորրորդ՝ հենց նույն ժամանակավրեպությունից խուսափելու համար պետք է հայկական քրեական դատավարությունում ժողովրդական մեղադրանքի տեսական մոդելը կառուցելիս (ուրվագծելիս) քննարկել «լրացնող» և «սուբսիդիար» ժողովրդական մեղադրանքի ներդրման հնարավորությունը, բացառելով «հիմնական» ժողովրդական մեղադրանքի ձևով այս տեսակի ներդրումը:

1.3 Ի՞նչ նշանակություն ունի ժողովրդական մեղադրանքը և ի՞նչ տեսակներ կարող է ունենալ:

Ժողովրդական մեղադրանքի ինստիտուտի նշանակությունը կարելի է դիտարկել երկու տարբեր հարթություններում՝ հասարակական-քաղաքական և գուտ իրավական-տեխնիկական հարթությունում:

1.3.1 Ժողովրդական մեղադրանքի նշանակությունը

Նշանակությունը հասարակական-քաղաքական հարթությունում

Ժողովրդական մեղադրանքը իբրև ժողովրդավարության դրսևորման, քրեական դատավարությունը քաղաքականապես «չեզոքացնելու» և դատավարության հանդեպ հանրային վստահության բարձրացման միջոց:

Թեև գրականության մեջ ձևավորված չէ մեկ միասնական մոտեցում ժողովրդավարության հասկացության մասին, և այն բնորոշելիս տարբեր հեղինակներ առավելապես ուշադրություն են դարձնում ժողովրդավարության այս կամ այն հատկանիշի վրա²⁵ այնուամենայնիվ անհերքելի է, որ դրա կարևորագույն հատկանիշը հենց ժողովրդի մասնակցությունն է հանրային (պետական) գործերի իրականացմանը:

Մեղադրանքի այս տեսակը հանրության ինքնագործունեության նոր ոլորտ է բացում. քաղաքացիները (նրանց միավորումները) հնարավորություն են ստանում քրեական հետապնդում հարուցելու և իրացնելու միջոցով մասնակցել քրեական դատավարությանը:

Ժողովրդական մեղադրանքի ինստիտուտի առկայությունը (ոչ հիմնական ժողովրդական մեղադրանքի ձևով²⁶) թույլ է տալիս քրեական դատավարությունում լուծել պետական մեղադրանքի մենիշխանության հարցը՝ դուրս մղելով (կամ գոնե չեզոքացնելով) քրեական գործերի ընթացքի վրա քաղաքական տարատեսակ ազդեցությունը²⁷: Իսկ այն, որ պետական մեղադրանքը ապահովագրված չէ այս կամ այն չափով քաղաքական իշխանության ազդեցության տակ ընկնելու վտանգից, կարծում ենք, անհերքելի է: Միայն պետական մեղադրանքի ձևով մեղադրանքի կազմակերպումը, այլ կերպ՝ պետական մեղադրանքի մենիշխանությունը, իր հերթին հղի է այն վտանգով, որ քաղաքական իշխանության ազդեցության տարատեսակ գործոնները կարող են հանգեցնել քրեական հետապնդում չհարուցելուն, դրա դադարեցմանը, քրեական հետապնդման միակողմանիությանը, արդյունքում հանցագործություն կատարած անձինք կարող են հնարավորություն ստանալ խուսափելու պատասխանատվությունից:

Ժողովրդական մեղադրանքի նշանակությունը հասարակական-քաղաքական հարթությունում կայանում է նաև նրանում, որ նույնիսկ այն դեպքերում, երբ քաղաքական իշխանությունը «ցանկանա» որոշակի քրեական գործեր հարուցվեն, անձինք հետապնդվեն և պատասխանատվության ենթարկվեն, հնարավոր լինի «քաղաքական այդ ցանկության բացակայությունը» հաղթահարել հենց ժողովրդի ջանքերով՝ այդ կերպ հնարավորություն ստեղծելով քրեական դատավարության ոլորտում քաղաքական իշխանության ազդեցության նվազման կամ ընդհանրապես չեզոքացման համար:

²⁵ Ст'а, орինակ, <https://www.hse.ru/data/2012/06/09/1252752628/Artnis91.pdf>, Большой юридический словарь/ Под ред. А.Я.Сухарева, М., 2010, էջ 166, Советский энциклопедический словарь / Издание 2-е, науч.- ред., совер: А.М.Прохоров и др., гл.ред. С.М.Ковалев., М.,1980, էջ 378:

²⁶ Ժողովրդական մեղադրանքի տեսակների մասին կիսուսի ստորև:

²⁷ Հենց քաղաքական որոշակի գրավականների քրեական դատավարություն ներխուժման վտանգով պայմանավորված էլ երկար ժամանակ Անգլիայում բացակայում էր հանրային մեղադրողի միասնական և կենտրոնացած գրասենյակը: Այս մասին առավել մանրամասն կիսուսի սույն աշխատության համապատասխան ենթահարցում:

«Ժողովրդական մեղադրանքի կենտրոնական գաղափարը հանրության նախաձեռնությամբ այն գործերի դատական քննության հնարավորության ապահովումն է, որոնց պետության շահերը ներկայացնող հանրային մեղադրողները չեն կարող դիպչել՝ այդ գործերի քաղաքականապես խիստ զգայուն լինելու պատճառով»:
(Դ. Ռոտենբերգ և Բ. Գառզոն)²⁸

Մյուս կողմից՝ հանրության անմիջական մասնակցությունը քրեական արդարադատությանը, պետական քրեական հետապնդման մենիշխանության վերացումը իրենց հերթին բարձացնում են քրեական դատավարության հանդեպ հանրային վստահությունը:

«Ժողովրդական մեղադրանքի դրական դերը կայանում է նրանում... որ դրանով ապահովվում է հանրային վստահությունը դատարանի նկատմամբ, այսինքն՝ մի բանում, որ հանդիսանում է արդարադատության բարոյական ուժը, որը հիվանդանում և տառապում է խիստ մեծ անվստահությունից»
(Ֆ. Հոլցենդորֆ, 1864թ.)²⁹:

Ժողովրդական մեղադրանքը իբրև հանրության քաղաքացիական իրավագիտակցությունը ամրապնդող միջոց

Ժողովրդական մեղադրանքի նշանակությունը չի սպառվում քրեական դատավարությունը քաղաքական հնարավոր ազդեցություններից զերծ պահելով. այն դրական դեր է կատարում հենց հասարակության համար, հանրության մեջ ձևավորում և ամրապնդում է քաղաքացիական իրավագիտակցություն:

Հանրությանը ընձեռած հնարավորությունը՝ հետապնդել հանցանք կատարած անձին, հանում է հասարակության անդամին «պասիվ» վիճակից, և նա դիտարկվում է իբրև հանցավորության դեմ պայքարի ակտիվ դերակատար: Հանցագործության դեմ պայքարում այդ ակտիվ դերակատարությունը, կարող է փոխել հասարակական գիտակցությունը. եթե պետական մեղադրանքի մենիշխանության պարագայում, հանրությունը կարծես երկրորդական կամ երրորդական դերում է, ուստի ձևավորվում է ընդհանուր մտայնություն, որ հանցագործությանը արձագանքելը ոչ թե հանրության, այլ պետության, դրա առանձին մարմինների, բայց ոչ երբեք հասարակության անդամների գործն է, ապա ժողովրդական մեղադրանքը այդ գործում առաջ է մղում հանրությանը՝ նրան պասիվ դիտողից վերածելով ակտիվ գործողի, ձևավորում է

²⁸ Դիտարկումն արվել է Ա. Պինոչետի և արգենտինական այլ գործերի առնչությամբ, մեջբերումն ըստ **R. S. Gómez**, Revisiting Popular Action, 10 DePaul J. for Soc. Just., 2017, էջ 4:

²⁹ Մեջբերումն ըստ **Полянский Н.Н.** К вопросу об участии частных лиц в публичном обвинении (Принципиальная основания actio popularis в уголовном процессе), 1915, էջ 12 (<http://jurytrial.ru/media/files/library/file30.pdf>):

գիտակցություն, որ հանցագործության և այն կատարած անձի հետապնդումը արդեն ոչ միայն պետական, այլ նաև հանրային (բառի ուղիղ իմաստով) գործ է:

Ընդ որում այդ հետապնդումը իրականացվում է ոչ թե ինչ-որ մեկի մասնավոր, այլ՝ ընդհանուր, հանրային շահից ելնելով՝ ամրապնդելով հասարակության անդամների հանրային շահի կարևորության գիտակցությունը:

Այս առումով տեղին է վկայակոչել լորդ Կեմպբելին, որը դա համարում է մեծագույն նվաճում:

Ժողովրդական մեղադրանքի իրավունքը, չի կարող չլինել հասարակության իրավագիտակցության բարձրացման, համերաշխության ոգու ամրապնդման, քաղաքացիների մեջ ինքնակառավարումն ու անշահախնդրությունը դաստիարակող լծակներից մեկը:

(լորդ Կեմպբել)³⁰

Այդ ինստիտուտի սոցիալական նշանակության գիտակցումն իր հերթին պայմանավորել է գիտության մեջ ժողովրդական մեղադրանքով հանրային շահերի պաշտպանությունը դիտարկել իբրև «քաղաքացիության դպրոց»³¹, որը դաստիարակում է իսկական քաղաքացիական վարքագիծ՝ ընդհանուր, հանրային շահի պաշտպանության գործում անմասն չմնալու և ակտիվ մասնակցություն ցուցաբերելու վարքագիծ:

Ժողովրդական մեղադրանքի իրավական-տեխնիկական նշանակությունը:

Ժողովրդական մեղադրանքի ինստիտուտը մեծ դեր կարող է կատարել նաև քրեական հետապնդման արդյունավետության բարձրացման գործում³²:

Հայտնի է, որ հանցավորության անը համընդհանուր միտում ունի աշխարհում (պայմանավորված թե՛ օբյեկտիվ, թե՛ սուբյեկտիվ հիմքերով): Բնական է, որ պետության միջոցները չեն կարող հանցագործությանը համահունչ աճել, և արդյունքում մեղադրանքի պետական մենիշխանությունը օբյեկտիվորեն չի կարող արդյունավետ լուծել յուրաքանչյուր հանցագործությունը անպատասխան չթողնելու, յուրաքանչյուր հանցագործության դեպքում քրեական հետապնդման հարուցման և իրացման, հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցերը³³:

Ժողովրդական մեղադրանքի ինստիտուտը հնարավորություն է տալիս հանցագործության «արձագանքման» գործում պետական միջոցներից բացի, կենտրոնացնել և օգտագործել ոչ պետական, հասարակական միջոցները:

³⁰ Մեջբերումն ըստ **Полянский Н.Н.** նշվ. աշխ., էջ 18:

³¹ St'u, օրինակ, **J. P. Gil**, Private Interests Seeking Punishment: Prosecution Brought by Private Individuals and Groups in Spain, Law & Policy, 2003, էջ 163:

³² Խոսքը գնում է քաղաքական ազդեցության տարրերից գուրկ գործերի քննության արդյունավետության բարձրացման մասին:

³³ Այս հանգամանքով պայմանավորված էլ ստեղծվում են քրեական հետապնդման այլընտրանքներ: Քրեական հետապնդման այլընտրանքային միջոցների մասին տե՛ս, օրինակ, **Головко Л. В.** Альтернативы уголовному преследованию в современном праве. –СПб.: Изд. «Юридический центр Пресс», 2002:

Մյուս կողմից՝ ժողովրդական մեղադրանքը լուծում է մեկ այլ խնդիր ևս. պետական մեղադրանքին զուգահեռ ժողովրդական մեղադրանքի («լրացնող»³⁴ ժողովրդական մեղադրանք) տեսակը բարձրացնում է պետական մեղադրողի զգոնությունը քրեական հետապնդման գործում, քանի որ պետական մեղադրանքին զուգահեռ իրացվող ժողովրդական մեղադրանքի ամեն հաջողություն կարող է վկայել պետական մեղադրանքի թերացումների, միակողմանիության և այլնի մասին: Հետևաբար՝

ժողովրդական մեղադրանքը այդպիսով հանդես է գալիս իբրև քրեական գործերի քննության անմիջական հասարակական վերահսկողության ապահովման ուղղակի միջոց՝ բարձրացնելով պետական մեղադրանքի արդյունավետությունը:

Այդ արդյունավետությունը բարձրանում է ոչ միայն ժողովրդական մեղադրանքի «վերահսկողական», այլ նաև «լրացնող» գործառույթով պայմանավորված:

Այլ կերպ ասած՝ քրեական հետապնդման արդյունավետությունը բարձրանում է ոչ միայն սուբյեկտիվ գործոնները չեզոքացնելու, այլ նաև որոշակի օբյեկտիվ գործոնների վերացման փորձ կատարելու միջոցով³⁵:

1.3.2. Ի՞նչ տեսակներ կարող է ունենալ ժողովրդական մեղադրանքը:³⁶

Ժողովրդական մեղադրանքը կազմակերպվում է տարբեր եղանակներով, ինչով պայմանավորված էլ կարելի է առանձնացնել ժողովրդական մեղադրանքի տարբեր տեսակներ:

1. «Անսահմանափակ» և «սահմանափակ» ժողովրդական մեղադրանք

Երբ ժողովրդական մեղադրանքը կազմակերպված է այնպես, որ բոլոր քաղաքացիներին (ֆիզիկական անձանց) թույլատրվում է հարուցել և իրացնել քրեական հետապնդում, մեղադրանքի այդպիսի տեսակին կարելի է տալ «անսահմանափակ» ժողովրդական մեղադրանք անվանումը, քանի որ քրեական հետապնդման սուբյեկտների սահմանափակ շրջանակ նախատեսված չէ:

Այսպիսով՝

«Անսահմանափակ» է ժողովրդական մեղադրանքի այն տեսակը, որում մեղադրելու իրավունքը վերապահված է բոլոր քաղաքացիներին (ֆիզիկական անձանց):

³⁴ Ավաձը վերաբերելի է նաև ժողովրդական մեղադրանքի սուբսիդիար ձևով կազմակերպանք:

³⁵ Ժողովրդական մեղադրանքի իրավական տեխնիկական նշանակության մասին տե՛ս **Полянский Н.Н.** նշվ.աշխ., էջեր 14-18: Ժամանակվա գիտնականների տեսակետը այս հարցի վերաբերյալ տե՛ս, օրինակ, **J. P. GIL**, Private Interests Seeking Punishment: Prosecution Brought by Private Individuals and Groups in Spain, Law & Policy, 2003, էջեր 164-165, **R. S. Gómez**, Revisiting Popular Action, 10 DePaul J. for Soc. Just., 2017, էջեր 8-9:

³⁶ Ժողովրդական մեղադրանքի տեսակների հարցը քննարկելիս զուտ տեսականորեն, վերացական կերպով կանդրադառնանք ժողովրդական մեղադրանքի սահմանափակումներին, իսկ թե տարբեր երկրներում ինչպես են դրսևորվել ու դրսևորվում ժողովրդական մեղադրանքի սահմանափակումները ու թե ինչ տեսակներով է արտահայտվել ու արտահայտվում ժողովրդական մեղադրանքը կոնկրետ երկրներում կանդրադառնանք աշխատանքի պատմա-համեմատաիրավական մասում:

Ընդ որում՝ պետք է շեշտենք, որ «անսահմանափակ» ժողովրդական մեղադրանքը, ևս որոշակի չարաշահումներից խուսափելու նպատակով, կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, օրինակ՝ մեղադրելու իրավունք կարող է վերապահել ոչ թե բոլոր քաղաքացիներին, այլ՝ միայն չափահասներին (կամ ավելի բարձր տարիքի հասած քաղաքացիներին) կամ միայն դատվածություն չունեցողներին և այլն:

«Անսահմանափակ» տերմինը «չի խոչընդոտում» փաստացի սահմանափակումներ մտցնելուն, *Էսկանն այն է, որ նույնիսկ որոշակի սահմանափակումներով մեղադրելու իրավունքը վերապահվում է կոնկրետ չափանիշներին համապատասխան **անսահմանափակ շրջանակի ֆիզիկական անձանց***:

Օրինակ, այն դեպքում, երբ օրենքով սահմանվի, որ իբրև մեղադրող հանդես գալու իրավունք ունեն դատվածություն չունեցող բոլոր չափահաս քաղաքացիները մենք նույնպես գործ կունենանք «անսահմանափակ» ժողովրդական մեղադրանքի հետ:

Երբ ժողովրդական մեղադրանքի իրականացման հնարավորությունը վերապահվում է **ոչ թե առանձին անհատներին** (քաղաքացիներին), այլ դրանց միավորումներին՝ իրավաբանական անձանց (հասարակական կազմակերպություններ և այլն), **մեղադրանքի այդպիսի կազմակերպմանը կարելի է տալ «սահմանափակ» ժողովրդական մեղադրանք անվանումը**: Այսպիսով՝

«Սահմանափակ» է ժողովրդական մեղադրանքի այն տեսակը, որում մեղադրելու իրավունք առանձին քաղաքացիներին (ֆիզիկական անձանց) վերապահված չէ, այլ այն վերապահված է քաղաքացիների (ֆիզիկական անձանց) միավորումներին՝ տարատեսակ կազմակերպություններին:

Ժողովրդական մեղադրանքի այնպիսի կազմակերպումը, որը մի կողմից գրկում է առանձին անձանց մեղադրելու իրավունքից և մյուս կողմից այդպիսի իրավունք է տալիս անձանց միավորումներին (օրինակ՝ հասարակական կազմակերպություններին) իր հերթին կարող է հանդիսանալ գործուն միջոց ժողովրդական մեղադրանքի չարաշահման դեպքերը որոշակիորեն զսպելու համար՝ այդպիսով չեզոքացնելով ժողովրդական մեղադրանքի չարաշահման այնպիսի դեպքերը, ինչպիսին են, օրինակ, վրեժի, նախատրամադրվածության կամ անձնական այլ շահագրգռվածության հիման վրա անձանց կողմից անհիմն մեղադրանքներ ներկայացնելու դեպքերը:

Ժողովրդական մեղադրանքի այս տարատեսակը ծանոթ է, օրինակ, ֆրանսիական դատավարությանը³⁷:

2. «Լիարժեք» և «ոչ լիարժեք» ժողովրդական մեղադրանք

Կախված այն հանգամանքից՝ ժողովրդական մեղադրանքի իրականացման հնարավորություն նախատեսված է բոլոր տեսակ քրեական գործերով (հանցագործություններով), թե այն սահմանափակված է որոշակի գործերի (հանցագործությունների) շրջանակով, կարող ենք տարբերակել ժողովրդական մեղադրանքի տարատեսակներ, որոնց կարելի է տալ «լիարժեք» և «ոչ լիարժեք» անվանումները:

³⁷ Ժողովրդական մեղադրանքի այնպիսի կազմակերպումը, որում մեղադրելու իրավասությունը վերապահված է ինչպես առանձին քաղաքացիներին, այնպես էլ նրանց միավորումներին, պետք է դիտարկել իբրև «անսահմանափակ» ժողովրդական մեղադրանք: «Սահմանափակ» ժողովրդական մեղադրանքի դեպքում **առանձին անհատները զրվում են մեղադրելու իրավունքից**, և այն վերապահված է նրանց միավորումներին:

«Լիարժեք» ժողովրդական մեղադրանքի տեսակն առկա կլինի այն դեպքում, երբ բացակայում են օրենսդրական սահմանափակումները, թե կունկրեստ որ գործերով է թույլատրվում ժողովրդական մեղադրանքը:

Ժողովրդական մեղադրանքի այս տարատեսակի հետ, երբ քաղաքացիները անկախ հանցագործության բնույթից իրավունք են ունեցել մեղադրանք ներկայացնելու, ծանոթ է եղել անգլիական դատավարությանը, որտեղ ժողովրդական մեղադրանքի այս տարատեսակը գուգակցվել է «հիմնական» ժողովրդական մեղադրանքի տարատեսակի հետ:

Այն դեպքում, երբ օրենքով սահմանվում է այն գործերի (հանցագործությունների) շրջանակը, որոնցով թույլատրվում է մեղադրանքը իրականացնել ժողովրդական մեղադրանքի կարգով, այդ դեպքում մենք գործ կունենանք «ոչ լիարժեք» ժողովրդական մեղադրանքի հետ:

Ընդ որում՝ ժողովրդական մեղադրանքի այս տարատեսակը իր հերթին կարող է կազմակերպվել երկու տարբեր եղանակներով:

Երբ օրենքով ուղղակիորեն նշվում է, որ ժողովրդական մեղադրանքը թույլատրվում է բոլոր գործերով ու միաժամանակ սահմանվում են բացառություններ (ինչպես օրինակ Իսպանիայում):

Եվ այնպիսի եղանակով, երբ սահմանվում են միայն այն գործերի շրջանակը, որոնցով թույլատրվում է ժողովրդական մեղադրանքը (ինչպես, օրինակ, Ֆրանսիայում)՝ մնացած բոլոր գործերով (հանցագործություններով) բացառելով ժողովրդական մեղադրանքը:

3. «Հիմնական», «սուբսիդիար» և «լրացնող» ժողովրդական մեղադրանք

Կախված այն հանգամանքից, թե ինչ կերպ է ժողովրդական մեղադրանքը հարաբերակցվում հանրային մեղադրանքի մեկ այլ տեսակի՝ պետական մեղադրանքի հետ, կարող ենք առանձնացնել ժողովրդական մեղադրանքի՝ «հիմնական», «սուբսիդիար» և «լրացնող» տեսակները:

3.1 «Հիմնական» ժողովրդական մեղադրանք

«Հիմնական» կերպի ժողովրդական մեղադրանքի այն կազմակերպումը, որտեղ քրեական հետապնդման իրացման իրավունքը վերապահված է միայն մասնավոր անձանց (և/կամ դրանց միավորումներին):

«Հիմնական» ժողովրդական մեղադրանքի կազմակերպման դեպքում, որպես կանոն, բացառվում է դրան գուգահեռ պետական մեղադրանքի հնարավորությունը, և ժողովրդական մեղադրանքի այս տեսակով կազմակերպման դեպքում հենց հանրության (ժողովրդի) վրա է ընկնում մեղադրելու «պարտականությունը»:

Ինչպես արդեն նշվել է աշխատանքի նախորդ էջերում, ժողովրդական մեղադրանքը դրա «հիմնական» տարատեսակով կազմակերպվել է իսիստ վաղ անցյալում, երբ բացակայել են պետական մարմինները³⁸, որոնց վրա ի պաշտոնե պետք է դրվեր մեղադրելու լիազորությունը:

³⁸ Եղել են դեպքեր նաև, երբ առկա են եղել պետական մարմիններ, սակայն ինչ-ինչ պատճառով (օրինակ՝ սոցիալ-քաղաքական) նպատակահարմար չի գնտվել վերջիններիս վրա մեղադրանք իրականացնելու պարտականություն դնել:

Հենց այդ է պատճառը, որ պատմության այն ժամանակաշրջանում, երբ մեղադրանքը որոշակի աշխարհագրական տարածքներում կառուցվել է «հիմնական» ժողովրդական մեղադրանքի ձևով, դրան զուգահեռ, որպես կանոն, բացակայել է պետական մեղադրանքը:

Իբրև, օրինակ, կարող է ծառայել Հռոմի հանրապետության շրջանում³⁹, մեղադրանքի կազմակերպումը «հիմնական» ժողովրդական մեղադրանքի ձևով, որտեղ պետական մեղադրանքը ընդհանրապես բացակայել է:

Միևնույն ժամանակ, պետք է նկատել, որ **զուտ տեսականորեն** «հիմնական» ժողովրդական մեղադրանքը չի բացառում դրան զուգահեռ պետական մեղադրանքի կազմակերպման հնարավորությունը: Դա հնարավոր է այն դեպքում, երբ պետական մեղադրանքը գտնվում է ժողովրդական մեղադրանքից կախվածության մեջ, այսինքն՝ վերջինս կազմակերպված է «լրացնող» պետական մեղադրանքի ձևով:

Ու որքան էլ առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ, սակայն քրեական դատավարությանը հայտնի են դեպքեր, երբ **պետական մեղադրանքը հանդես է գալիս «լրացնող» մեղադրանքի տեսքով**: Որպես օրինակ կարող է ծառայել Ավստրիայի քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դատախազի՝ իբրև լրացնող մեղադրող հանդես գալու լիազորությունը այն դեպքում, երբ հետապնդումն իրականացվում է մասնավոր անձի (տուժողի) կողմից, և վերջինիս խնդրանքով, ու նրան օժանդակելու համար դատախազը այս դեպքում կարող է հանդես գալ իբրև լրացնող մեղադրող⁴⁰:

Թեև կոնկրետ օրինակում պետական մեղադրանքը լրացնում է ոչ թե ժողովրդական, այլ՝ մասնավոր մեղադրանքին, այնուամենայնիվ, սա խոսում օրինակ է պետական մեղադրանքի «լրացնող» ձևով կազմակերպման հնարավորության, ու հետևաբար՝ նաև «հիմնական» ժողովրդական մեղադրանքին զուգահեռ «լրացնող» պետական մեղադրանքի կազմակերպումը գոնե տեսականորեն հնարավոր համարելու հարցում:

Սակայն, միևնույն ժամանակ պետք է արձանագրել, որ արդեն մեր ժամանակներում, երբ իրավական պետության բաղադրատարր է դիտարկվում պետության՝ հանցանք կատարած անձանց քրեական հետապնդման ենթարկելու պարտականությունը (ինչը և պայմանավորել է հանցագործությանը արձագանքելու համար ստեղծված հանրային իրավական մարմինների գոյությունը), գործնականում անհնար է պատկերացնել ժողովրդական մեղադրանքի «հիմնական» տեսակով կազմակերպումը, որով այդ աշխատանքի բեռը թողնվի անմիջականորեն հանրության վրա:

Հետևաբար էլ «հիմնական» ժողովրդական մեղադրանքին զուգահեռ «լրացնող» պետական մեղադրանքի մերօրյա կազմակերպումը կարելի է գնահատել զուտ որպես տեսական ու ավելի շատ պատրանքային, բայց ոչ երբեք իրական ու գործնական հնարավորություն:

3.2 «Մուբադիխար» ժողովրդական մեղադրանք

Երբ ժողովրդական մեղադրանքի հնարավորությունը կախվածության մեջ է դրվում հիմնական քրեական հետապնդման հարուցման և իրականացման լիազորություն ունեցող պաշտոնատար անձից (մարմնից), և ժողովրդական մեղադրանքի ձևով քրեական հետապնդման հարուցելու և իրացնելու իրավունքը ի հայտ է գալիս միայն այն ժամանակ, երբ պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք, ում վերապահված է քրեական հետապնդման հարուցման և իրականացման լիազորությունը, ձեռնպահ են մնում քրեական հետապնդում հարուցելուց կամ

³⁹ Այս մասին մանրամասն կիտավի աշխատանքի համապատասխան բաժնում: Ներկայումս հիմնական ժողովրդական մեղադրանքի ձևով քրեական հետապնդման իրականացումը կարելի է դիտել իբրև անախրոնիզմ: Հիմնական ժողովրդական մեղադրանքի ձևով ներկայումս մեղադրանքը կազմակերպելու թերությունների մասին տարատեսակ հիմնավոր փաստարկներ տե՛ս, օրինակ, **Васильева Е.Г.** Уголовный процесс: догматико-аксиологическое исследование. Монография. М.: Юрлитинформ, 2013, էջեր 273-274:

⁴⁰ Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Бутов В. Н.** Уголовный процесс Австрии.— Красноярск: Изд-во Краснояр. ун-та, 1988, էջեր 12, 36, 38

հրաժարվում են մեղադրանքից⁴¹, մենք գործ ունենք «սուբսիդիար» ժողովրդական մեղադրանքի հետ: Այսպիսով՝

«Սուբսիդիար» է այն ժողովրդական մեղադրանքը, որը հարուցվում և իրացվում է պետական մարմնի կողմից քրեական հետաանդման հարուցումը մերժելու կամ հետապնդումը դադարեցնելուց հետո միայն:

Ժողովրդական մեղադրանքի այս տեսակի հարուցման և իրացման պայմանը՝ պետական մարմնի կողմից քրեական հետապնդում հարուցելը մերժելը կամ հարուցելուց հետո հետապնդումը դադարեցնելն է, ինչն էլ հիմք է հանդիսանում նշյալ մեղադրանքը պետական մեղադրանքից «կախյալ» գնահատելու մեջ: Մյուս կողմից՝ այդպիսի «կախվածությունը» չի իմաստագրվում ժողովրդական մեղադրանքը, քանի որ մեղադրանքի այս տեսակով հնարավոր է լինում հասնել ժողովրդական մեղադրանքի մի շարք նպատակներին, օրինակ՝ քաղաքական դրդապատճառներով պայմանավորված պետական մեղադրանքի չիրականացման (կամ հետապնդումը դադարեցնելու) և ըստ այդմ՝ հանցանք կատարած անձանց քրեական պատասխատանվության չենթարկվելու վտանգի չեզոքամանը:

3.3 «Լրացնող» ժողովրդական մեղադրանք

Սա ժողովրդական մեղադրանքի կազմակերպման այն տեսակն է, որը հնարավոր է իրականացնել հիմնական պետական մեղադրանքին **գուգահեռ՝ միևնույն ժամանակ լինելով պետական մեղադրանքից կախվածության մեջ**: Այս դեպքում ժողովրդական մեղադրանքը հնարավոր է իրականացնել, օրինակ, մեղադրական տվյալներ հավաքելու, միջնորդություններ ներկայացնելու և այլ գործողությունների միջոցով: Մեղադրանքի այս տեսակը ստանում է «լրացնող» անվանումը այն հազմանքից ելնելով, որ այն իր բնույթով ինքնուրույն չէ և կախված է պետական մեղադրանքից՝ միայն **լրացնում է, օժանդակում է պետական մեղադրանքի իրականացմանը**: Այդ է պատճառը, որ երբ պետական մեղադրողը, օրինակ, հրաժարվում է մեղադրանքից, կարճում գործի վարույթը, միաժամանակ դադարում է նաև «լրացնող» ժողովրդական մեղադրանքը⁴²: Այսպիսով՝

Ժողովրդական մեղադրանքը «լրացնող» է, երբ այն կազմակերպվում է «հիմնական» պետական մեղադրանքի հետ գուգահեռաբար, վերջինիցս գտնվում է կախվածության մեջ ու նրա դադարմանը դադարում է և ինքը՝ «լրացնող» մեղադրանքը:

⁴¹ Նկատենք, որ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգով (տե՛ս Հայեցակարգի 8.25-րդ կետ) նախատեսվում էր սուբսիդար մասնավոր մեղադրանքի ինստիտուտի ներդրման հնարավորություն, ինչը, սակայն, արդեն տեղ չգտավ քրեական դատավարության օրենսգրքի նախագծում:

⁴² Նկատենք, որ դատավարագիտության մեջ շատ հաճախ «սուբսիդիար» մեղադրանք տերմինը օգտագործվում է նաև լայն իմաստով՝ իր մեջ ներառելով բոլոր այն դեպքերը, երբ մասնավոր անձը գործում է «լրացնող» մեղադրողի կարգավիճակով կամ էլ այն դեպքը, երբ պետական մարմինը հրաժարվում է հետապնդումից, և մասնավոր անձը շարունակում է այն: Ա.Մ.Լարինը նկատում է, որ սուբսիդիար մեղադրանքի ինստիտուտի էությունն այն է, որ տուժողը մեղադրանքը պաշտպանում է մեղադրողի հետ հավասարապես, իսկ մեղադրողի՝ մեղադրանքից հրաժարվելու դեպքում՝ մեղադրողի փոխարեն (Ա.Մ.Լարինից մեջբերումն ըստ Դամբարյան Ա. Դատարանում մեղադրանքը փոխելը եւ մեղադրանքից հրաժարվելը, Եր., «Իրավունք» հրատ., 2009, էջ 97): Վերոգրյալին նման մոտեցում ունի նաև դատավարագետ Գ.Ն.Վետրովան (տե՛ս *Ветрова Г. Н. Субсидиарное обвинение и принцип состязательности // Известия Алтайского государственного университета. Юридические науки. 2017, № 3, էջեր 32-35*):

Ժողովրդական մեղադրանքի այս տեսակը «սուբսիդիար» ժողովրդական մեղադրանքի նման գտնվում է պետական մեղադրանքից կախվածության մեջ: Սակայն, այս տեսակ ժողովրդական մեղադրանքի կազմակերպման դեպքում, ինչպես նախորդի դեպքում, ժողովրդական մեղադրանքը չի իմաստագրվում: Ժողովրդական մեղադրանքի այս տեսակի «փափուկ» բնույթով պայմանավորված, հնարավոր է դառնում այն կազմակերպել այնպիսի քրեադատավարական համակարգերում, որտեղ մեղադրանքը ավանդաբար կազմակերպված է եղել պետական մեղադրանքի ձևով: Այդպիսով հնարավոր է դառնում ապահովվել ոչ պրոֆեսիոնալ մեղադրանքի այս տարատեսակի անխոչընդոտ «մուտքը» տվյալ քրեադատավարական համակարգ՝ որպես հետևանք առաջ բերելով քրեական հետապնդման ընդհանուր արդյունավետության բարձացում:

Ընդհանրապես ժողովրդական մեղադրանքի տեսակների մասին խոսելիս պետք է նկատել, որ սույն ենթահարցում թվարկած 1-ին, 2-րդ և 3-րդ խմբի ժողովրդական մեղադրանքի տեսակները չեն բացառում միմյանց, ընդհակառակը՝ համադրվելով մեկը մյուսին՝ կարող ենք ստանալ հնարավոր ենթատեսակների խայտաբղետ մի պատկեր: Օրինակ՝ կարող ենք ունենալ «անսահմանափակ», «ոչ լիարժեք», «լրացնող» ժողովրդական մեղադրանք, եթե ցանկանում ենք ստեղծել ժողովրդական մեղադրանքի կազմակերպման մի մոդել, որը հնարավորություն կտա երկրի բոլոր քաղաքացիներին (բոլոր ֆիզիկական անձանց) հանդես գալ իբրև հիմնական պետական մեղադրանքին օժանդակող մեղադրողներ, սակայն՝ միայն օրենքով հստակ որոշված գործերի շրջանակով (օրինակ՝ գողության և կողոպուտի դեպքում):

Այսպիսով՝ ժողովրդական մեղադրանքի յուրաքանչյուր տեսակի բացահայտումը մեզ հնարավորություն կտա մի դեպքում աշխատանքի պատմական և համեմատախրափական բաժնում նախ բացահայտել որոշակի պատմական ժամանակաշրջանում կոնկրետ երկներում (ներում) մեղադրանքի կազմակերպման տեսակները:

Բացի այդ՝ ժողովրդական մեղադրանքի տեսակների առանձին-առանձին բացահայտումը մեզ հնարավորություն կտա, հաշվի առնելով արդեն հետազոտության պատմա-համեմատախրափական հատվածի արդյունքները, նաև մեր կողմից հետազոտության ընթացքում կատարված փորձագիտական հարցազրույթներն ու հետազոտության հնարավոր շահառուների հետ մեր կատարած հարցումները, որոշել թե՛ հայկական քրեական դատավարությունում ժողովրդական մեղադրանքի կոնկրետ որ ենթատեսակն է առավել նպատակահարմար ներդրման համար:

2. Ի՞նչ կերպ է արտահայտվել ժողովրդական մեղադրանքի ինստիտուտը պատմական և համեմատախրավական հարթությունում:

2.1 Ի՞նչ կերպ է ժողովրդական մեղադրանքի ինստիտուտը դրսևորվել Հռոմում և ինչ նշանակություն է այն ունեցել

Արքայական շրջան (մ.թ.ա. VIII դարից մ.թ.ա. VI դարի վերջ)

Հռոմի արքայական շրջանի քրեական իրավունքի և դատավարության կազմակերպման հարցերի վերաբերյալ քիչ տեղեկատվություն է պահպանվել: Այնուամենայնիվ, հայտնի է, որ արդեն այդ ժամանակաշրջանում սկսում է զգացվել որոշ հանցագործությունների հանրային-իրավական նշանակությունը:

Դա իր հերթին հանգեցնում է նրան, որ եթե «մասնավոր հանցագործություններով» հետապնդումն իրականացվում էր հանցագործից տուժած մասնավոր անձի (նրա ընտանիքի անդամների) կողմից, ապա արդեն հանրային հանցագործությունների դեպքում «արքան ինքն էր քրեական հետապնդում հարուցում և մեղավորներին դատարան կանչում: Այս դեպքերում դատավարությունը կոչվում էր պետական (ի տարբերություն՝ մասնավորի)»⁴³: «Հանրային հանցագործությունների գործերով» արքային է վերապահվում և՛ մեղադրելու, և՛ գործի լուծման գործառույթը, որը փաստացիորեն դատավարությունը մոտեցնում է ինկիվիզիցիոն տիպին (որտեղ միախառնվում են մեղադրանքի և գործի լուծման (արդարադատության) գործառույթները):

Կարծիք կա, թե այս շրջանում արքան ունեցել է նաև օգնականներ (պաշտնատար անձինք՝ լայն իմաստով պետական դավանանքության գործերի քննության համար⁴⁴):

Մյուս կողմից՝ «մասնավոր հանցագործություններով վարույթն ամբողջությամբ վերապահված էր հանագործությունից տուժողին (նրա ընտանիքի անդամներին և այլն), հետևաբար և՛ այս գործերի քննությունն էլ իր հերթին իրականացվում էր մասնավոր մեղադրանքի կարգով, և այս դեպքում արդեն գործերը քննվում էին առավելապես դատավարության (մեղադրական) մրցակցային ձևին բնորոշ կանոններով:

Հանրապետական շրջան (մ.թ.ա. VI դարի վերջից - մ.թ.ա. I դարի վերջ)

Հռոմի հանրապետության շրջանը քրեական դատավարության կազմակերպման հարցերում աչքի ընկավ մի շարք հատկանիշներով:

Նախ՝ ձևավորվեցին տարատեսակ գործերի (հանցագործությունների) քննությամբ զբաղվող հանձնաժողովները (*quaestiones perpetuae*), որոնք, աստիճանաբար շատանալով, արդեն հանրապետության վերջին շրջանում գրեթե ամբողջությամբ զրավեցին ժողովրդական ազորանների դատարանների տեղը⁴⁵:

Առաջին այդպիսի հանձնաժողովը ձևավորվեց արդեն մ.թ.ա. 149թ. Կալպուրնիայի օրենքով: Հանձնաժողովը քննում էր պաշտոնատար անձանց կաշառակերության և շորթման վերաբերյալ գործերը (*quaestio de repetundis*)⁴⁶: Հետագայում ստեղծվեցին մի շարք այնպիսի հանձնաժողովներ, որոնք զբաղվում էին տարատեսակ հանցագործությունների քննությամբ, ինչպիսիք էին, օրինակ,

⁴³ Տե՛ս **Чельцов-Бebutov М.А.** Курс советского уголовно-процессуального права. Очерки по истории суда и уголовного процесса в рабовладельческих, феодальных и буржуазных государствах. М., 1957, էջ 128:

⁴⁴ Տե՛ս **Покровский И.А.** История римского права, 3-е издание, Петроград, 1917, էջեր 36-37: Նույն Ի.Ա. Պոկրովսկին նկատում է, որ այսպիսի պաշտոնատար անձանց գոյությունը վիճելի է Հռոմի արքայական շրջանում:

⁴⁵ Տե՛ս **Покровский И.А.** նշվ.աշխ., էջ 126:

⁴⁶ Տե՛ս նույն տեղում:

պետական ունեցվածքի գողության, թունավորման, սպանությանը զուգորդված ավագակության, ընտրական իրավախախտումների և այլ⁴⁷ գործերը:

Հենց այս հանձնաժողովներում էլ, սկսեց գործել մեղադրանքի սկզբունքը, ըստ որի գործի քննության համար պետք է առկա լինեն մեղադրանք, ու դատարանը չէր կարող սեփական նախաձեռնությամբ սկսել վարույթը: Այսինքն՝ մեղադրանքի տնօրինողը կողմերն էին և ոչ թե դատավորը: Այլ կերպ ասած՝ չկա մեղադրանք, չկային կողմեր, չկար քրեական դատավարություն:

Եվ եթե, օրինակ, Հռոմի արքայական շրջանում արքան հանրային հանցագործություններով ինքն էր հարուցում մեղադրանքը, միջոցներ ձեռք առնում ապացույցների հավաքման և մեղադրյալին դատարան ներկայացնելու համար⁴⁸, ապա Հանրապետության օրոք արդեն բոլորովին այլ վիճակ է ստեղծվում քրեական հետապնդման կազմակերպման հարցում: Այս շրջանում արդեն պաշտոնատար անձինք չեն ունենում քրեական հետապնդում ի պաշտոնե սկսելու լիազորություն, և հանձնաժողովներում իբրև մեղադրող հանդես գալու լիազորությունը վերապահվում է Հռոմի բոլոր քաղաքացիներին⁴⁹:

Մեծանուն իրավաբան-պատմաբան Թ.Մոմզենն այս առնչությամբ անում է շատ հետաքրքիր դիտարկում. «Նա, ով գիտի Հռոմի վիճակը Հանրապետության անկման դարաշրջանում, կհասկանա, որ քրեական գործերում մասնավոր նախաձեռնության դրսևորումը նշանակում է ոչ թե պետական ճնշման թուլացում, այլ ընդհակառակը՝ դրա ուժեղացում: Թեև նախկինում մագիստրատները պարտավոր էին հարուցել հետապնդումներ, բայց նրանց նկատմամբ այդ հարցում իրենց խղճի հսկողությունից բացի չկար և ոչ մի հսկողություն, և հնարավոր է, որ մի շարք իրավախախտումներ մագիստրատների անտարբերության պատճառով մնում էին անպատիժ: Accusatio (այսինքն՝ մեղադրանքի – Ա.Ղ.) սկզբունքը, ընդհակառակը, հնարավորություն էր տալիս մեղադրանքով հանդես գալ ոչ միայն յուրաքանչյուր ինչ-որ կերպ շահագրգռված անձի, այլ նաև տարբեր այլ մարդկանց, որոնք այդ կերպ ոչ հազվադեպ սկսում էին իրենց քաղաքական գործունեությունը»⁵⁰ (ընդգծումն իմն է - Ա.Ղ.):

Ու այս պարագայում, եթե չէին գտնվում մասնավոր անձինք, որոնք պատրաստ էին մեղադրողի դեր ստանձնել, հանցագործությունը մնում էր անպատիժ⁵¹:

Այսինքն՝ հանձնաժողովների գործունեության ընթացքում մեղադրանքը կազմակերպվում էր «հիմնական» ժողովրդական մեղադրանքի ձևով:

Հիմնական ժողովրդական մեղադրանքի և մեղադրանքի սկզբունքի միասնությունն իր հերթին հանգեցնում էին նրան, որ եթե կատարված հանցագործությամբ չգտնվեր որևէ մեղադրող, ապա այդ հանցագործությունը չէր կարող դառնալ դատարանում քննության առարկա և պետք է մնար անարձագանք:

Սակայն նման կարգավորումները չէին վտանգում «ընդհանուր բարօրությունը», քանի որ հռոմեացու բարոյական պարտքն էր մեղադրելու միջոցով յուրաքանչյուր հանցագործության դեպքին արձագանքելը: Ինչպես նկատում է ավստրիացի դատավարագետ Հ.Գլազերը՝ հանցագործությունների դեպքում մեղադրողի փնտրտուք ձեռնարկելու կարիք չէր լինում (բացառությունները եզակի էին). հասարակության միավորը՝ քաղաքացին, իրեն հասարակության լիարժեք անդամ էր զգում և այդ հասարակության հանդեպ մեծ վստահություն էր տածում⁵²:

Իսկ բոլոր այն դեպքերում, երբ հանրության մեջ չէր գտնվում թեկուզ մեկ մեղադրող, որ հետապնդեր հանցագործությունը, դա դիտարկվում էր իբրև տվյալ գործի քննության հանրային շահի բացակայություն:

⁴⁷ Տե՛ս **Иванов, А.А.** Римское право: учеб. Пособие для студентов вузов, обучающихся по специальности 030501 «юриспруденция». М., 2012, էջեր 59-60:

⁴⁸ Տե՛ս, օրինակ, **Петрова Н.Е.** Частное и субсидиарное обвинение. Самара: Изд-во «Самарский университет», 2004, էջ 11 էջ, **Чельцов-Бебутов М.А.**, նշվ. աշխ., էջ 128:

⁴⁹ Որոշակի բացառությունների մասին կիսովի ստորև:

⁵⁰ Թ.Մոմզենից մեջբերումն ըստ **Покровский И.А.** Частная защита общественных интересов в Древнем Риме // Древнее право. Ivs antiqvum. - М.: Спарк, 1999, № 2 (5), էջ 194:

⁵¹ Տե՛ս **Покровский И.А.** История римского права. Пг. Изд-е юридическ. книжн. Кл.

«Право». 1918, էջ. 126, մեջբերումն ըստ **Петрова Н.Е.**, նշվ. աշխ., էջ 12:

⁵² Տե՛ս **Глазер Ю.** Руководство по уголовному процессу, Т.1 (пер. А. Лихачева). СПб, 1884, էջ 51:

Այս առումով հետաքրքիր դիտարկում է անում Ի.Ա.Պոկրովսկին. «Թե ինչ է հանրային շահը, ինչ արարքն է արժանի պատժի մենք որոշում ենք նախօրոք և վերացական կերպով, այն ամրագրում ենք օրենքում (քրեական)՝ այնուհետև իշխանական մարմիններին պատվիրելով դատել և պատժել՝ in concreto: Հռոմեական accusatio-ի և հանրային միջոցների ընդհանուր պատկերը տպավորություն է ստեղծում, թե հռոմեացիները բոլորովին այլ կերպ էին մտածում: Թվում է, նրանք հանրային շահ էին համարում միայն այն, ինչը փաստացիորեն in concreto հարուցում է հանրության հետաքրքրությունը, ինչը յուրաքանչյուր անգամ հանրության շրջանակից գտնում է ակտիվ պաշտպան: Որքան էլ տեսականորեն հանցավոր համարվի հայտնի արարքը, **եթե հանրության շրջանից մեղադրող չի գտնվում, ուրեմն ինքը հանրությունը ի դեմս՝ իր բոլոր առանձին ներկայացուցիչների, կատարվածին հանգիստ և անտարբեր է վերաբերվում. ուրեմն՝ ժողովրդի խղճի ձայնը լռում է, ուրեմն՝ հանրային շահի իրական խախտում տեղի չի ունեցել, ուրեմն՝ մագիստրատները միջամտելու առիթ չունեն»:⁵³**

Մյուս կողմից՝ այս շրջանում ստեղծվեցին մեխանիզմներ, որոնք իրենց հերթին նպատակ էին հետապնդում որոշակի երաշխիքներ սահմանել հնարավոր անհիմն, ապօրինի մեղադրանքների դեմ պայքարելու գործում:

Նախ՝ մեղադրյալը իրավունք ուներ պահանջելու, որպեսզի մեղադրողը երդվեր, թե մեղադրանքը նա ներկայացրել է բարեխղճորեն ոչ թե որևիցե կամայականությունից, քնահանությունից դրդված:⁵⁴:

Երկրորդ՝ բողոք այն դեպքերում, երբ մեղադրյալը արդարացվեր, մեղադրողը կարող էր ենթարկվել պատասխանատվության կեղծ մեղադրանքի համար (calumnia)⁵⁵:

Այսպիսի կարգավորումներով փաստացի ապահովվում էր մեղադրանքի հիմնավորվածությունը:

Բացի այդ՝ իբրև մեղադրող հանդես գալու ցանկություն ունենալու դեպքում քաղաքացին պետք է իր կարգավիճակը ամրագրեր պրետորի մոտ և պրետորի կողմից հաստատվելուց հետո միայն ստանար մեղադրողին բնորոշ իշխանական լիազորություններ (խուզարկություններ իրականացնելու, ցուցմունք տալու համար անձանց կանչելու, տարատեսակ պետական ծառայություններից օգտվելու և այլն)⁵⁶:

Միջոցներ էին ձեռնարկվում նաև տարատեսակ այլ չարաշահումների դեմ. պատասխանատվություն էր սահմանվում մեղադրողի և մեղադրյալի միջև զանազան անօրինական համաձայնությունների համար, այդ իսկ պատճառով *սահմանափակվում էր նաև այն անձանց մեղադրելու իրավունքը, ովքեր մեղադրյալների հանդեպ կարող էին ունենալ հատուկ վերաբերմունք և առկա էին առանձնահատուկ հանգամանքներ: Մեղադրելու իրավունքից զրկված էին նաև կանայք և վարկաբեկված անձինք (famosi)⁵⁷:*

Արված սահմանափակումները մեղադրելը դարձնում էին պատասխանատու, բայց և խիստ հարգի մի գործունեություն:

Կայսերական շրջան (մ.թ.ա. I դարի վերջից V դարի կեսերը)

Հանրապետության շրջանում, սակայն, մեղադրանքի՝ հիմնական ժողովրդական մեղադրանքի ձևով կազմակերպումը իր հերթին որոշակի թերություններ ուներ. այն մի կողմից զրկում էր պետական պաշտոնատար անձանց մեղադրելու լիազորությունից, մյուս կողմից, ինչպես պնդում է Թ.Մոմզենը, ժողովրդական մեղադրանքի հնարավոր չարաշահումը կանխարգելող տարատեսակ մեխանիզմները (այդ թվում նաև վրա հասնող հնարավոր պատասխանատվության վտանգը) ժամանակի ընթացքում հանգեցրին նրան, որ քրեական հետապնդում հարուցելու նախաձեռնողականությունը նվազեց⁵⁸: Արդյունքում աճեց անարձագանք մնացած

⁵³ Ст'ю Покровский И.А. Частная защита общественных интересов в Древнем Риме // Древнее право. IVS ANTIQVVM. - М.: Спарк, 1999, № 2 (5), էջ 193:

⁵⁴ Ст'ю Покровский И.А. Частная защита общественных интересов в Древнем Риме, էջ 191:

⁵⁵ Ст'ю Фойницкий И. Я. Курс уголовного судопроизводства. Том I (издание 4-е). - С.-Петербург, типография товарищества "Общественная польза", 1912, էջ 18:

⁵⁶ Ст'ю Зелинский Ф.Ф. Римский уголовный процесс // М. Туллий Цицерон. Полное собрание речей в русском переводе. Т.1. СПб, 1901, էջ 756:

⁵⁷ Ст'ю Глазер Ю. նշվ.աշխ., էջ 52, Фойницкий И. Я., նշվ.աշխ., էջ 18:

⁵⁸ Մեջբերումը քստ Покровский И.А. Частная защита общественных интересов в Древнем Риме, էջ 199:

հանցագործությունների թիվը, իսկ պետական իշխանությունը չէր կարող հաշտվել նման վիճակի հետ:

Ժողովրդական մեղադրանքի ակտիվացմանը (վերկենդանացմանը) ուղղված «փրկարար դեղահարը» «գտնվեց» *դրական արդյունքի (մեղադրական դատավճռի) հասնելու դեպքում մեղադրողին տարատեսակ պարգևավճար տալով* (այդ թվում՝ մեղադրյալի ունեցվածքի բաժնեմասի տեսքով): Նման կարգավորման բացասական հետևանքը եղավ այն, որ մեղադրելու գործառնությունը նախկինում հարգի, անշահախնդիր գործառնությունից վերածվեց որոշակի օգուտներ քաղելու մի միջոցի. ընկավ մեղադրողի հասարակական վարկը:

Մյուս կողմից՝ դա հանգեցրեց նրան, որ աղքատ հանցագործների հետապնդումները կրճատվեցին (չկար եկամուտի ակնկալիք): «Որքան հարուստ էր մարդը, որքան բարձր դիրք ուներ նա հասարակությունում, առավելապես նա պետք է զգուշանար մեղադրաքննիչից. փոքր և աղքատ մարդու մերկացումը չէր կարող լուրջ ավար ենթադրել, և այդ պատճառով ոչ ոքի դա չէր հետաքրքրում», - գրում է Օ.Հ. Չումպտը⁵⁹:

Աստիճանաբար ուժեղացող կայսերական իշխանությունը քայլ առ քայլ «ներխուժեց» նաև քրեական դատավարության ոլորտ. հանրապետության շրջանի հանձնաժողովները (quaestiones perpetuae) սկսում են իրենց տեղը զիջել կայսերական պաշտոնյաներին, որոնք էլ իրենց հերթին՝ դատավարությունն արդեն իրականացնում են ինկվիզիցիոն սկզբունքով⁶⁰, այլ կերպ ասած՝ և՛ մեղադրում են, և՛ դատում: Այստեղից էլ, բնականաբար, փոխվում է քրեական հետապնդման հարուցման նախկին կարգը. եթե նախկինում քրեական հետապնդման հարուցման նախաձեռնողականությունը վերապահված էր միայն Հռոմի քաղաքացիներին, ապա այժմ արդեն պաշտոնատար անձինք իրավունք են ունենում առանց կոնկրետ մեղադրողի ի հայտ գալու սկսել քրեական դատավարություն՝ ի պաշտոնե:

Թեև քրեական հետապնդման նոր կարգը դեռ ամբողջությամբ չի վերացնում ժողովրդական մեղադրանքը և գործում է դրան զուգահեռ, կայսերական շրջանում շարունակվում է արդեն վարկաբեկված ժողովրդական մեղադրանքի հետևողական սահմանափակումը: Բանը հասնում է նրան, որ օրենսդրական փոփոխությունների արդյունքում հնարավոր չարաշահումները զսպելու նպատակով մտցված կարգավորումներ, ժողովրդական մեղադրողի և մեղադրյալի իրավունքները հավասարեցվում են՝ ընդհուպ այն աստիճան, որ մեղադրողի հանդեպ ևս (մեղադրյալի նման) ազատության սահմանափակման կիրառման հնարավորություն նախատեսող կարգավորումներ են մտցվում: Նման պայմաններում, բնական է, քչանում կամ, ավելի ճիշտ, սկսում են ընդհանրապես անհետանալ իբրև մեղադրող հանդես գալու ցանկություն ունեցող քաղաքացիները՝ դատավարությունում մեղադրանքը դարձնելով գրեթե ամբողջությամբ պետական⁶¹:

Այսպիսով ժողովրդական մեղադրանքի կազմակերպման հռոմեական փորձի ուսումնասիրությունը հետազոտության հետագա ընթացքի համար մի շարք կարևոր եզրահանգումներ անելու հնարավորություն է տալիս:

Նախ՝ այն թույլ է տալիս արձանագրելու, որ ժողովրդական մեղադրանքի «ծագումն ու զարգացումը» եղավ Հռոմի այն շրջանում, որն աչքի էր ընկնում ժողովրդավարության ծաղկմամբ: Հռոմի պատմական օրինակը հաստատում է այն թեզը, որ ժողովրդական մեղադրանքը ինքին քրեական դատավարությունում ժողովրդավարության արտահայտման մի ուղույն ձև է: Մյուս կողմից, հռոմեական օրինակը իր հերթին հաստատում է առաջ քաշված մեկ այլ թեզ, այն է՝ ժողովրդական մեղադրանքը հանդիսանում է քաղաքացիական իրավագիտակցության, հասարակության մեջ սոցիալական կապերի

⁵⁹ Zumpt A. W. Der Kriminalprozess Der Römischen Republik, 1871, մեջբերումն ըստ **Покровский И.А.** նշվ.աշխ., էջ 199:

⁶⁰ Տե՛ս **Покровский И.А.** История римского права, էջեր 168-169:

⁶¹ Այս մասին արավել մանրամասն տե՛ս **Гушев В.Е., Александров, А. С.** Народное обвинение в уголовном суде. Н.Новгород: НЮИ МВД РФ, 1998 (http://kalinovsky-k.narod.ru/b/aleksandrov_1998/2.html#22):

Արդեն Կոնստանդին կայսրի օրոք (306-337թթ) իբրև ընդհանուր կանոն պաշտոնապես ամրագրվում է, որ հանցագործությունների հետապնդումը պետք է իրականցվի մագիստրատների կողմից՝ ի պաշտոնե: Այս մասին տե՛ս **Петрова Н.Е.** Частное и субсидиарное обвинение. Самара: Изд-во «Самарский университет», 2004, էջ 13:

ամրացման միջոց: Սա ակնհայտ է դառնում հանրապետության շրջանում իբրև ժողովրդական մեղադրող հանդես գալու խիստ պատվաբեր իրավունք-քաղաքացիական պարտքի համարումով:

Երկրորդ՝ որպեսզի ժողովրդական մեղադրանքը իրապես կատարի իր դրական սոցիալական դերը, այն չպետք է խրախուսվի մեղադրանքի դիմաց նյութական վարձատրուցումով: Եթե այդպիսի վարձատրությունը իրականացվի պետական միջոցների հաշվին՝ ժողովրդական մեղադրանքը փաստացի կվերանի պետականի, մյուս կողմից՝ եթե այդ վարձատրությունը իրականացվի մեղադրյալի հաշվին, այն կզցի ժողովրդական մեղադրողի վարկը՝ նրա հանրօգուտ աշխատանքը վերածելով «շահաբեր» արհեստի, որի բացասական հետևանքները, ինչպես տեսանք, այս մեղադրանքի ապագայի համար «անդառնալի» են:

Հետևաբար հայկական քրեական դատավարությունում ժողովրդական մեղադրանքը կազմակերպելիս, պետք է նախագծել այնպես, որ այն լինի չվարձատրվող գործառնություն:

Երրորդ՝ նույնիսկ հռոմեական շրջանում գիտակցվում է ժողովրդական մեղադրանքի դրական ու բացասական կողմերը: Հենց բացասական կողմերի գիտակցումն էլ իր հերթին հանգեցնում է նրան, որ արդեն այս շրջանից փորձ է արվում չեզոքացնել նշված մեղադրանքի հնարավոր փոսնագները:

Այս առումով հռոմեական փորձի ուսումնասիրումը մեզ թույլ է տալիս արձանագրելու, որ հայկական քրեական դատավարությունում ժողովրդական մեղադրանքի հնարավոր փոսնագները (չարաշահման փոսնագները) չեզոքացնելու հնարավոր մեխանիզմները կառուցելիս պետք է գերծ մնալ **խիստ միջոցներից**: Ինչպես ցույց է տալիս հռոմեական փորձը, չարաշահումը զուպելու խիստ միջոցները, ընդհանրապես վերացնում (կամ գրեթե զրոյացնում են) այս մեղադրանքի տեսակի օգտագործումը:

2.2 Ինչպե՞ս է մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքը դրսևորվել անգլոամերիկյան և մայրցամաքային քրեադատավարական համակարգի երկրներում

Մինչ ժողովրդական մեղադրանքի դրսևորման մասին խոսելը անգլոամերիկյան և մայրցամաքային քրեադատավարական համակարգերում, պետք է արձանագրել մի կարևոր հանգամանք. քննարկվող ինստիտուտը իր դոկտրինայի անվանումը («ժողովրդական մեղադրանք») ստացել է ոչ թե անգլիական, այլ մայրցամաքային քրեադատավարական տեսությունում⁶²:

«Մայրցամաքային իրավաբանները պետք է տեսականորեն անջատեին նշյալ ինստիտուտը հարակից ինստիտուտներից (մասնավոր մեղադրանքից, հանրային մեղադրանքից և այլն), որի համար էլ անհրաժեշտ էր հատուկ տերմին, մինչդեռ **անգլիացիների համար այն հանդիսանում էր այնպիսի համապարփակ և բնական երևույթ...որ նրանք տերմինի կարիք ընդհանրապես չունեին**»⁶³:

Այդ է պատճառը, որ անգլոամերիկյան իրավունքում մասնավոր մեղադրանք (**private prosecution**) տերմինն ավելի լայն իմաստ ունի. այն ներառում է ինչպես արդեն մեր կողմից առանձնացված **մասնավոր մեղադրանքը** (տուժողի, նրա իրավահաջորդների կողմից իրականացվող մեղադրանքը)՝ մասնավոր շահերի պաշտպանության նպատակով իրականացվող մեղադրանքը, այնպես էլ՝ **ժողովրդական մեղադրանքը** (մասնավոր անձի, միավորումների, կազմակերպությունների կողմից իրականացվող մեղադրանքը)՝ հանրային շահի պաշտպանության նպատակով իրականացվող մեղադրանքը:

Ուստիև անգլոամերիկյան քրեադատավարական համակարգին պատկանող երկրների մասնավոր անձի կողմից իրականացվող հետապնդման կազմակերպման ուսումնասիրությանը նվիրված հետազոտության այս մասում կքննարկվեն լայն իմաստով «մասնավոր մեղադրանքի», այսինքն՝ ընդհանրապես մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքի դրսևորումները անգլիական և ամերիկյան իրավունքում:

2.2.1. Ինչպե՞ս է մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքը դրսևորվել անգլոամերիկյան իրավունքին պատկանող երկրներում (Մեծ Բրիտանիա (Անգլիա, Ուելս), ԱՄՆ):

Մասնավոր անձանց կողմից իրականացվող հետապնդումը Մեծ Բրիտանիայում (Անգլիա, Ուելս)

Մասնավոր մեղադրանքը անգլիական իրավունքին հայտնի է վաղ ժամանակներից⁶⁴: Ինչպես պնդում Դ.Կլերմանը՝ Անգլիայում 7-10-րդ դարերում մեղադրանքը գրեթե ամբողջությամբ մասնավոր անձանց էր վերապահված, և սկզբնական շրջանում այն նպատակադրում ուներ հանցագործից դրամական փոխհատուցում ստանալ: Նկատենք, սակայն, որ ժամանակի ընթացքում հանցագործության և պատժի հանրային-իրավական ընկալման գիտակցությունը պատճառ չդարձավ անգլիացիների կողմից մասնավոր մեղադրանքի ինստիտուտի մերժման և

⁶² Տե՛ս *Головко Л.В.* Материалы к построению сравнительного уголовно-процессуального права: источники, доказательства, предварительное производство // Труды юридического факультета. Кн. 11. – М.: Правоведение, 2009, էջ 300:

⁶³ Տե՛ս, նույն տեղում, նաև http://kalinovsky-k.narod.ru/b/aleksandrov_1998/1.html :

⁶⁴ Տե՛ս **Daniel Klerman**, Settlement and the Decline of Private Prosecution in Thirteenth-Century England Independent Institute Working Paper 19, 2000, էջ 7:

մեղադրանքը ամբողջությամբ պետական մարմինն վերապահելուն: Անգլիայում դեռևս Հենրիխ VIII-ի կառավարման տարիներից սկսած (15-16-րդ դարեր) հանրային (պետական) մեղադրողների ազգային համակարգ ստեղծելու բազմաթիվ ապարդյուն փորձեր են արվել⁶⁵, և միայն 1879թ. է ստեղծվում «մայրցամաքային» պատկերացումներին համահունչ պետական այնպիսի մարմին, որ պետության (թագավորության) անունից պետք է իրականացնեն քրեական հետապնդում:

Սա պայմանավորված էր անգլիացիների ազատասիրությամբ, հասարակական-քաղաքական կյանքին նրանց ակտիվ մասնակցությամբ, պետական մեղադրանքը իբրև ազատությունը սահմանափակելու հնարավոր գործիք դիտարկելու և այլ հանգամանքներով: Գիտության մեջ ընդգծվում է, որ մասնավոր մեղադրանքի համակարգի անհրաժեշտությունը պայմանավորված էր միապետական իշխանության սահմանափակման թելադրանքով:

«Եվ եթե դա չարվեր, քրեական հետապնդման ուժը կարող էր օգտագործվել քաղաքական բռնաճնշումների նպատակով»⁶⁶: Անգլիացիների մոտ ընդհանուր կարծիք կար, թե.

«...քրեական օրենքի նկատմամբ հսկողությունը պաշտոնատար անձանց վերապահելով՝ չի կարելի դրա իրացումն ապահովել: Ավելի նախընտրելի է, որ մի քանի ստահակ ազատ արձակվեն և մի քանի անմեղներ զրկանքներ կրեն կեղծ մեղադրանքներից, քան թեկուզ ոչ հիմնավոր ինչ-որ կասկածի հիմք ստեղծվի, թե քաղաքական դրդապատճառները (տեքստում՝ երաշխիքներ - Ա.Ղ.) տեղ են գրավում կամ կարող են տեղ գրավել քրեական արդարադատության իրականացման մեջ»⁶⁷

Այդ պատճառով էլ հանցագործության հանրային իրավական նշանակության գիտակցումը միաժամանակ նաև քրեական հետապնդման միայն պետական իշխանության ձեռքում կենտրոնացվածության վտանգի գիտակցումը անգլիական իրավունքում «ծնունդ տվեցին» քաղաքացիների մեղադրելու իրավունքին՝ անկախ կոնկրետ հանցանքից տուժելու հանգամանքից:

Սակայն, ինչպես նկատել ենք նախորդ էջերում, հանրության զարգացմանը զուգընթաց, գիտակցվում է «հիմնական» մասնավոր մեղադրանքի (լայն իմաստով մասնավոր մեղադրանքի) ձևով մեղադրանքի կազմակերպման անհնարինությունը: Գիտության մեջ 1800-ականների կեսերից սկսում են առավել հաճախ հնչել քննադատություններ այդ առիթով:

*«Անգլիական համակարգը ոչ միայն կասկած է հետապնդման ձեռքերը և օժանդակում չարագործների անպատժելիությանը, այլ նաև խստորեն սահմանափակում է անմեղներին, որոնք պատահաբար էին դատի տրվել»⁶⁸, -
(Չ.Ստիֆեն):*

Լայնածավալ բանավեճերի արդյունքում 1879թ. հանցագործությունների հետապնդման օրենքով հիմնադրվեց Հանրային հետապնդումների դեկավարի գրասենյակը⁶⁹: Սակայն

⁶⁵Տե՛ս **P. Burns**, Private Prosecutions in Canada: The Law and a Proposal for Change, McGill Law Journal, 21(1975), էջ 272:

⁶⁶Տե՛ս **J. Cardenas**, The Crime Victim in the Prosecutorial Process, 9 HARV. J.L. & PUB. POL'Y, 1986, էջ 361:

⁶⁷Տե՛ս **Муравьев Н.В.**, նշվ. աշխ., էջ 224:

⁶⁸Մեջբերումն ըստ՝ **Муравьев Н.В.**, նշվ. աշխ., էջ 223:

⁶⁹Պետք է նկատել, որ Գեներալ աթորնեյի պաշտոնը Անգլիայում գոյություն է ունեցել դեռևս XIII դարից: Հենց այդ ժամանակներից ի հայտ են գալիս դատարանում Թագավորի շահերի պաշտպանություն իրականացնելու համար

անգլիացիների՝ մի մարմնի ձեռքում քրեական հետապնդման լիազորությունը կենտրոնացնելու շարունակական «վախի» պատճառով կառույցի հիմնադրմամբ էլ չվերացվեց մասնավոր մեղադրանքի ինստիտուտը (լայն իմաստով մասնավոր մեղադրանքի): Հանրային հետապնդումների ղեկավարի գրասենյակի կողմից իրականացվող քրեական հետապնդումն իր հերթին սահմանափակվեց նեղ շրջանակով գործերով քրեական հետապնդում իրականացնելու լիազորությամբ միայն⁷⁰ և միևնույն ժամանակ պահպանվեց քաղաքացիների քրեական հետապնդման իրավունքը⁷¹:

Ավելին, բոլոր քաղաքացիների մեղադրելու իրավունքից (անկախ հանցագործությանից տուժած լինելուց) անգլիական գիտության մեջ և պրակտիկայում քիսեցվում էր նաև անձանց **միավորումների** (ասոցիացիաների, տարատեսակ հասարակական միավորումների, կազմակերպությունների, ընկերությունների) մեղադրելու իրավունքը:

Այդ գաղափարը իր հերթին ծնունդ տվեց նրան, որ սկսեցին ստեղծվել տարատեսակ միավորումներ, կազմակերպություններ, որոնց նպատակը կամ նպատակներից մեկն էր հանցագործությունների կամ որոշակի խումբ հանցագործությունների հետապնդումը⁷²: Այդպիսի կազմակերպությունների թիվը արդեն 1883թ. (երբ ընդամենը չորս տարի գործում էր պետական մեղադրանքի մասնագիտացված մարմինը) հասնում էր գրեթե 500-ի⁷³:

Այդպիսով՝ նույնիսկ հանրային պետական մարմնի ստեղծումը, որը քրեական հետապնդման լիազորությամբ էր օժտված, Անգլիայում չվերացրեց մասնավոր մեղադրանքը:

Ավելին՝ գրեթե նույն ժամանակներում խիստ զարգացավ ու տարածում գտավ ժողովրդական մեղադրանքի յուրահատուկ տեսակը՝ կազմակերպությունների կողմից իրականացվող մեղադրանքը: Այդ կազմակերպությունները իրավապաշտպան գործունեությունը զուգահեռ իրականացնում էին հանցագործությունների քրեական հետապնդում:

Պետք է սակայն փաստել, որ պետական մեղադրանքի աստիճանական ուժեղացումը իր հետքը թողեց նաև մասնավոր մեղադրանքի (լայն իմաստով մասնավոր մեղադրանքի) ինստիտուտի վրա և այն այսօր որոշակիորեն սահմանափակված է:

1908թ. խմբագրվեց 1879թ. ընդունված օրենքը՝ որոշակիորեն սահմանափակելով մասնավոր անձանց մեղադրելու իրավունքը, քանի որ Հանրային հետապնդման գրասենյակի ղեկավարը անառարկելի իրավունք էր ստանում «ներխուժել» մասնավոր անձի կողմից նախաձեռնված հետապնդման տիրույթ՝ այն ամբողջությամբ իր ձեռքը վերցնելով և նույնիսկ ամբողջությամբ չեղարկելով⁷⁴: 1985թ. ընդունված Հանցագործությունների հետապնդման օրենքում (Prosecution of Offences Act 1985) թեև մասնավոր մեղադրանքի իստիտուտը (լայն իմաստով մասնավոր մեղադրանքի) իր ամրագրումը ստացավ, սակայն դրանում դարձյալ տեղ գտան որոշակի սահմանափակումներ: Մասնավորապես նշվում էր, որ ոչինչ չպետք է խոչընդոտի յուրաքանչյուր անձին հարուցել կամ շարունակել ցանկացած քրեական հետապնդում այն դեպքում, եթե Ղեկավարը (հանրային հետապնդման ծառայության ղեկավարը – Ա.Ղ.) չի կիրարկել քրեական հետապնդման իրացման իր լիազորությունը (6-րդ հոդված)⁷⁵:

պրոֆեսիոնալ աթորնեյ վարձելու մասին առաջին հիշատակումները: Այս մասին տե՛ս **Jones E.** The Office of Attorney-General // The Cambridge Law Journal. 1969. Vol. 27, էջեր 43-45:

⁷⁰ Տե՛ս **Гуценко К. Ф., Головкин Л. В., Филимонов Б. А.** Уголовный процесс западных государств. М.: Зерцало-М, 2002. էջ 66, նաև՝ **М. Т. McCormack**, Note, The Need for Private Prosecutors: An Analysis of Massachusetts and New Hampshire Law, 37 SUFFOLK U. L. REV., 2004, էջ 500:

⁷¹ Նշված օրենքի 7-րդ հոդվածում ասվում էր, թե օրենքում չկա մի այնպիսի դրույթ, որը սահմանափակի յուրաքանչյուր անձին վերապահված քրեական հետապնդում նախաձեռնելու, հարուցելու կամ պաշտպանելու իրավունքը: Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Полянский Н.Н.** Право обществ на уголовный иск // Вопросы права. 1911. Кн. 6(2), էջ 77:

⁷² Այդպես ստեղծվեցին, օրինակ, բանկային աշխատողների տարատեսակ միավորումներ, որոնց նպատակն էր պայքարել տարատեսակ բանկային խարդախությունների ու կեղծիքների դեմ (օրինակ՝ Society for the Protection of Bankers and Merchants from Fraud and Forgery), երեխաների ու կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող տարատեսակ միավորումներ, (օրինակ՝ The Associated Societies for the Protection of Women and Children) և ուղիներ, որոնք իրենց գործունեության ընթացքում իրականացնում էին նաև քրեական հետապնդում:

⁷³ Տե՛ս **Полянский Н.Н.**, նշվ. աշխ., էջ 77-78:

⁷⁴ Տե՛ս **Michael E. O'Neill**, Private Vengeance and the Public Good, U. PA. J. CONST. L. Vol. 12:3, 2010, էջեր 671-672:

⁷⁵ <https://www.legislation.gov.uk/ukpga/1985/23>

Այսինքն՝ ներկայումս մասնավոր անձի մեղադրանքը թեև պահպանվեց, սակայն փաստացիորեն սահմանափակվեց սուբսիդիար մեղադրանքի ձևով:

Բացի այդ՝ մասնավոր մեղադրանքի կիրառությունը սահմանափակվեց նաև այլ կերպ. ընդունվեցին մի շարք օրենքներ (դրանց թիվը հասնում է շուրջ 150-ի⁷⁶), որոնք որոշակի հանցագործություններով մասնավոր անձի կողմից քրեական հետապնդում սկսելու համար մտցվում էր Գեներալ պրոսեկյուցից, Հանրային հետապնդման մարմնի ղեկավարի, ինչպես նաև այլ պաշտոնատար անձանցից թույլտվություն ունենալու կամ նրանց առարկության բացակայության պայման⁷⁷ (նշված սահմանափակումները նպատակ էին հետապնդում լուծել նաև մասնավոր անձի կողմից քրեական հետապնդման իրավունքի չարաշահման խնդիրը)⁷⁸:

Ավելին՝ Հանցագործությունների հետապնդման 1985թ. օրենքով ամրագրվեց դրույթ, ըստ որի *Հանրային հետապնդման ծառայության ղեկավարը իրավունք է ստանում վերցնել (ընդունել) ցանկացած գործ, որը հարուցվել է մասնավոր անձի կողմից և դադարեցնել այն*⁷⁹:

Հետաքրքիր է, որ նշված քաղաքականության օրինականության հարցը, բարձրացվել է Գերագույն դատարանի առջև (*R (Gujra) v Crown Prosecution Service (2012)* գործով), և դատավորները նշել են, թե տվյալ միջոցը չի խոչընդոտում մասնավոր մեղադրանքի իրականացմանը, քանի որ գործերը այս տեսակի մեղադրանքի դեպքում էլ պետք համապատասխանեն Թագավորական հետապնդման ծառայության կողմից սահմանված չափանիշներին⁸⁰:

Այսպիսի սահմանափակումներն իրենց հերթին հանգեցրին գիտության մեջ մասնավոր մեղադրանքի հանդեպ ոչ միանշանակ ընկալումների, ոմանք սկսեցին խոսել այն մասին, որ մասնավոր մեղադրանքի ինստիտուտը, լինելով անցյալ դարերի ծնունդ, պետք է հասցվի իր տրամաբանական ավարտին՝ ամբողջությամբ վերացվի⁸¹: Մյուսները, ընդհակառակը, գտնում են, որ մասնավոր մեղադրանքի ինստիտուտը անգլիական իրավունքում պետք է պահպանվի և ամրապնդվի⁸²: Վերջին տեսակետի կողմնակիցները փաստում են, որ մասնավոր մեղադրանքի ներկայիս գոյության համար պատճառները շատ են ու բազմամզան:

Մասնավոր մեղադրանքի ինստիտուտի առկայության կարևորագույն գնահատականներ են արտահայտվել *Gouriet v Union of Post Office Workers (1975)* գործով Լորդ Վիլբերֆորսի և Լորդ Դիպլոկի կողմից (որոնք արդիականության են մինչ օրս (որ *R (Gujra) v Crown Prosecution Service (2012)* գործով դատավորներից մեկը հղում է անում այս այդ դիրքորոշումնրին)):

«Այդ պատմական իրավունքը, որը իր արմատներով հետ է գնում դեպի մեր իրավական համակարգի փառնջական ժամանակները... մնում է արժեքավոր սահմանադրական երաշխիք՝ ընդդեմ իշխանությունների անգործության և կողմնապահության»:

(Լորդ Վիլբերֆորսը)

⁷⁶ Տե՛ս *Гуценко К. Ф., Головки Л. В., Филимонов Б. А.* նշվ. աշխ., էջ 63:

⁷⁷ Տե՛ս, նույն տեղում, նաև՝ **Irving R. Kaufman**, *Criminal Procedure in England and the United States: Comparisons in Initiating Prosecutions*, 49 Fordham L. Rev. 26, 1980, էջ 29:

⁷⁸ Տե՛ս, օրինակ, **Irving R. Kaufman**, նույն տեղում:

⁷⁹ Խոսքը մասնավորապես այն դեպքերի մասին է, երբ մասնավոր անձի կողմից իրականացրած մեղադրանքը չի բավարարում «ապացուցվածության» և «հանրային շահի առկայության» չափանիշներին:

⁸⁰ Այս մասին առավել մանրամասն տե՛ս <https://www.supremecourt.uk/cases/docs/uksc-2011-0115-judgment.pdf>), որոշման գիտական վերլուծությունը տե՛ս Hungerford-Welch P. *Criminal Procedure and Sentencing*. – London and New York: Routledge. 2014, էջեր 23, 29,

⁸¹ Այս տեսակետի կողմնակիցների շրջանակին կարելի է ծանոթանալ **Douglas H.** Controlling the English Prosecutor. *Osgoode Hall Law Journal* 21.2, 1983, էջ 183:

⁸² Տե՛ս **Douglas H.** նշվ. աշխ. էջ 181-182: Այստեղ տե՛ս նաև Քրեական դատավարության Թագավորական հանձնաժողովի կողմից արված առաջարկությունները, որոնք արված էին մասնավոր մեղադրանքի ինստիտուտի ամրապնդման ուղղությամբ:

«Մասնավոր մեղադրանքը հանդիսանում է հանցագործներին հետապնդելու իշխանությունների քննահանույթյան, կոռուստիվացիաժույթյան կամ նախատրամադրվածույթյան արդյունքում ձախողման կամ մերժման դեմ հուսալի սահմանադրական երաշխիք»⁸³:

(Լորդ Դիպոլո)

Եվ, ի հեճուկս այն պնդումներին, թե Անգլիայում և Ուելսում, մասնավոր մեղադրանքի իրավունքը առավելապես հոչակագրային բնույթ ունի և գործնական կիրառություն գրեթե չունի⁸⁴, պետք է փաստել, որ, ինչպես ցույց են տալիս մերօրյա զանազան հրապարակումները,⁸⁵ մասնավոր մեղադրանքի ան է նկատվում:

Դա մի դեպքում կարող է պայմանավորված լինել պետական մեղադրանքի կազմակերպման համար միջոցների սղոյթյամբ (որպես հետևանք այսպես կոչված «մանր գործերով» քրեական հետապնդան համար ռեսուրսներ տնտեսելու քաղաքականույթյանը), մեկ այլ դեպքում պետական մարմինների ոչ այնքան արդյունավետ գործելաճով⁸⁶, երրորդ դեպքում՝ հենց պետական մարմինների կողմնապահույթյամբ և մի շարք այլ հանգամանքներով:

Այդպիսով, ներկայումս նույնպես շարունակվում է տարատեսակ կազմակերպույթյունների (միավորումների) կողմից որոշակի հանցագործույթյունների հետապնդման ակտիվ պրակտիկան⁸⁷ (կազմակերպույթյունների կողմից իրականցվող ժողովրդական մեղադրանքը), ինչը թույլ է տալիս արձանագրելու, որ (հատկապես Անգլիայում և Ուելսում) մասնավոր մեղադրանքը, չնայած տեղ գտած մի շարք սահմանափակումներին, այսօր էլ հանցագործույթյան դեմ պայքարում հասարակույթյան մասնակցույթյան ապահովման գործուն միջոց է հանդիսանում՝ մեծ դեր կատարելով հանցանք կատարած անձի նկատմամբ քրեական պատասխանատույթյուն ապահովելու գործուն:

Մասնավոր անձանց կողմից իրականցվող հետապնդումը ԱՄՆ-ում

Մասնավոր անձանց կողմից իրականցվող հետապնդման կազմակերպման «անգլիական» հայեցակարգը ԱՄՆ-ում միակերպ չընդունվեց հենց սկզբնական շրջանից, թեև անգլիական արդարադատույթյան համակարգը ամերիկացիների վրա ուներ հսկայական ազդեցույթյուն: Պետք է

⁸³ Մեջբերումն ըստ Գերագույն դատարանի R (Gujra) v Crown Prosecution Service (2012) գործով որոշման 90-րդ կետի (<https://www.supremecourt.uk/cases/docs/uksc-2011-0115-judgment.pdf>):

⁸⁴ Տե՛ս **Головко Л.В.** Материалы к построению сравнительного уголовно-процессуального права: источники, доказательства, предварительное производство // Труды юридического факультета. Кн. 11. – М.: Правоведение, 2009. էջ 300:

⁸⁵ <http://www.mondaq.com/uk/x/541522/Crime/The+Rise+of+Private+Prosecutions>,

<https://www.independent.co.uk/news/uk/crime/two-tier-justice-private-prosecution-revolution-9672543.html> :

⁸⁶ Այս առումով մասնավոր մեղադրանքի արդյունավետույթյան խոսում օրինակ է 1995թ. կատարված բռնաբարույթյան դեպքը: Երկու անձ դիմում են բռնաբարույթյան հաղորդմամբ, սակայն ոստիկանույթյունը կասկածի տակ է դնում նրանց խոսքերի արժանահավատույթյունը, ու ոչ մի հետապնդում չի նախաձեռնվում: Եվ միայն զոհերի ու նրանց օժանդակույթյուն ցույց տվող հասարակական կազմակերպույթյան կողմից իրականացրած մասնավոր մեղադրանքի շնորհիվ է, որ հնարավոր է դառնում պատասխանատույթյան ենթարկել հանցագործին (տե՛ս **Edmonds T., Jugnarain D.**, Private Prosecutions: A Potential Anticorruption Tool in English Law, 2016):

⁸⁷ Այս առումով հատկապես աչքի է ընկնում Կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքի կանխարգելման թագավորական միույթյունը (The Royal Society for the Prevention of Cruelty to Animals (“RSPCA”)), որի՝ Անգլիայում և Ուելսում մագիստրատների դատարանում քննված գործերով քրեական հետապնդման իրացման արդյունքում 2017թ. դատապարտվել է 1,492(25) անչափահաս հանցագործ (91.2% հետապնդման արդյունավետույթյան գործակցով) (տե՛ս <https://view.pagetiger.com/RSPCA2017PR/RSPCA2017prosecutionreport>): Կան նաև այլ կազմակերպույթյուններ, օրինակ, Ֆեդերացիան ընդդեմ հեղինակային իրավունքի գողույթյան (the Federation Against Copyright Theft), որոնք իրենց առջև դրած նպատակներին հասնելու համար արդյունավետ կերպով իրականցնում են նաև մասնավոր քրեական հետապնդում:

փաստել, որ ամերիկացիները քրեական հետապնդման կազմակերպման հարցում դրսևորեցին անգլիացիներից տարբերվող մոտեցում դեռ վաղ ժամանակներից: ԱՄՆ-ում արագ զգացվեց պետական մեղադրանքի կազմակերպման անհրաժեշտությունը: Նույնիսկ մինչ գաղութների անկախացումը, արդեն 1704թ. Կոննեկտիկուտում մեղադրանքը սկսեց իրականացվել շրջանային այթորնեյների միջոցով: Սրանով փաստացի մասնավոր անձանցից մեղադրանքի իրականացումն անցավ պետական մարմնին: Որոշ ժամանակ անց՝ 1711թ. Վիրջինիայում հիմնադրվեց հանրային հետապնդման(պետական) համակարգը, իսկ արդեն 18-րդ դարի վերջին, ինչպես պնդում է Է. Սայրմանը, Նահանգներում ամրապնդվեց պաշտոնական հանրային մեղադրանքի կոնցեպցիան⁸⁸:

Ու թեև ամերիկացիները սովորաբար իրենց իրավական համակարգը ներկայացնում են իբրև անգլիական ընդհանուր իրավունքի վրա հիմնված համակարգ, հենց հանրային մեղադրողի (դատախազի) ինստիտուտը, որը անվանի իրավաբան պրոֆեսոր Ջ.Կրեսսի արձանագրմամբ անգլիական համակարգին ըստ էության անձանոթ մարմին էր, հանդիսանում է անգլիական համակարգից տարբերակող ու խիստ յուրահատուկ ամերիկյան ներդրում⁸⁹:

Ավելին՝ ամերիկացիները ոչ միայն արագ կազմակերպեցին հանրային (պետական) մեղադրանքի համակարգ, այլ նաև մեծ լիազորություններով սկսեցին հզորացնել այն:

Պրոֆեսոր Ջ.Լանգբեյնը նկատում է, որ ամերիկյան դատավարությունում հանրային մեղադրողի ամենազորությունը հանդիսանում է ընդհանուր իրավունքի մոդելից խիստ շեղում⁹⁰:

Եվ եթե մեր օրերում արդեն դժվար է գտնել մի երկիր, որը չունենա պետական մեղադրանքի մարմին (դատախազ), ապա ամերիկյան դատախազը, անգլիական, ֆրանսիական և ընդհանրապես եվրոպական դատախազներից աստիճանաբար սկսում է տարբերվել հենց իր խիստ մեծ լիազորություններով ու հզորությամբ⁹¹: Ամերիկյան դատախազը ժամանակի ընթացքում ձեռք բերեց քրեական հայցի տնօրինման հսկայական լիազորություններ. նրան վերապահվեցին ինչպես քրեական հայց հարուցելու, այնպես էլ դրանից ձեռնպահ մնալու, թե՛ հարուցված հետապնդումը շարունակելու, թե՛ մեղադրանքից հրաժարվելու լիազորությունները: Վերջինս ստացավ նաև տարատեսակ «մեղքի ընդունման գործարքներով» (*plea bargaining*) մեղադրանքը՝ համաձայնեցնելու լիազորություն: Նմանօրինակ «մեղքի ընդունման գործարքների» պայմանների հստակեցման հարցում դատախազին տրվեցի այնպիսի լիազորություններ, որոնցով վերջինս ստացավ պատժի տեսակի ու չափի ընտրության լիազորություն՝ մեղադրողից փաստացի վերածվելով կիսադատական մի մարմնի (քվազիդատական մարմնի)⁹²: Մյուս կողմից՝ շատ դեպքերում դատախազի այսպիսի հայեցողությունը դուրս մնաց նաև դատական վերահսկողության տիրույթից՝ դրանով էլ ավելի հզորացնելով առանց այն էլ հզոր ամերիկյան դատախազին⁹³: Դատախազության այդչափ հզորացումը իր հերթին հանգեցրեց գիտության մեջ այնպիսի արձանագրումների, որ «ամերիկյան դատախազը անկախության և հայեցողականության աշխարհում հավասարը չունեցող արտոնությամբ է օժտված»⁹⁴:

Արդյո՞ք ամերիկյան պետական մեղադրանքի նմանօրինակ կազմակերպման պայմաններում ընդհանրապես բացառվեց կամ վերացվեց մասնավոր անձի կողմից իրականացվող հետապնդումը:

Այս հարցին պետք է տալ բացասական պատասխան: Չնայած այն հանգամանքին, որ արդեն 18-րդ դարի սկզբներին տարբեր գաղութներում սկիզբ դրվեց մեղադրանքի պետական կազմակերպմանը, սակայն, ինչպես պնդում են հարցի հետազոտությամբ զբաղվող գիտնականները, ամերիկացիները շատ տեղերում շարունակում էին հետապնդումն իրականացնել

⁸⁸ Տե՛ս Sidman A., *The Outmoded Concept of Private Prosecution*, 25 AM. U. L. REV., 1975, էջ 763:

⁸⁹ Մեջբերումն ըստ՝ Michael E. O'Neill, նշված աշխատության, էջ 675:

⁹⁰ Տե՛ս J. H. Langbein, *Controlling Prosecutorial Discretion in Germany*, The University of Chicago Law Review, Volume 41, No 3, 1974, էջ 440:

⁹¹ Տե՛ս Bessler J., *The Public Interest and the Unconstitutionality of Private Prosecutors*, 47 Ark. L. Rev. 1994, էջ 517:

⁹² Այս մասին առավել մանրամասն տե՛ս Мельников Е.А., *Уголовное преследование в условиях действия системы разделения властей (досудебное производство)*, дисс ... канд. юрид.наук. Москва, 2017, էջ 176:

⁹³ Այս առումով տեղին է հնչում Ռ.Բառկովի այն դիտարկումը, որ «Ֆեդերալ դատախազի լայն և հսկողության ոչ ենթակա իշխանությունը հանդիսանում է անոմալիա իշխանությունների բաժանման մեր համակարգում», մեջբերումն ըստ՝ Мельников Е.А., նշվ.աշխ., էջեր 166-167:

⁹⁴ Տե՛ս Bessler J., նշվ. աշխ., էջ 517:

մասնավոր մեղադրանքի ձևով⁹⁵: Ավելին՝ 1800-ականների երկրորդ կեսերից մի շարք նահանգներում սկսեցին կազմավորվել տարատեսակ միավորումներ, որոնք, ելնելով իրենց առջև դրված նպատակներից, սկսեցին նաև բարեհաջող կերպով որոշակի շրջանակի գործերով քրեական հետապնդումներ իրականացնել⁹⁶:

Սակայն միևնույն ժամանակ պետք է փաստել, որ պետական մեղադրանքի զարգացմանը զուգընթաց աստիճանաբար սկսեց նկատվել մասնավոր մեղադրանքի որոշակի սահմանափակման միտում: Օրինակ՝ 1802թ. Կոլումբիայի շրջանային դատարանը կայացրեց մի որոշում, որով ակնհայտորեն սահմանափակվում էր մասնավոր անձի՝ քրեական հայցի տնօրինման իրավունքը: Այսպես՝ Վերջինիան ընդդեմ Դուլանի (Virginia v. Dulany) նախադեպային որոշմամբ դատարանը վճռեց, որ Դուլանիի դեմ մասնավոր մեղադրողի նախաձեռնությամբ հարուցված քրեական հետապնդումը չի կարող դադարեցվել *առանց ֆեդերալ դատախազի համաձայնության*⁹⁷:

Ավելին՝ արդեն 1800-ականների երկրորդ կեսերից մեկը մյուսի հետևից մի շարք նահանգներում (Մասաչուսեթս, Միչիգան, Վիսկոնսին, հետագայում նաև շատ այլ նահանգներում) նահանգային գերագույն դատարանների որոշումներով ընդհանրապես սկսեց արգելվել մասնավոր մեղադրանքի իրականացման պրակտիկան⁹⁸: Դրա հիմնական պատճառաբանությունը այն էր, թե մասնավոր անձի, նրա կողմից վարձված իրավաբանի իրականացրած հետապնդումը չի կարող լինել այնչափ անաչառ, որչափ պետական մեղադրանքի կազմակերպման դեպքում (քանի որ մասնավոր մեղադրողները գործում էին սեփական շահերից ելնելով), ինչը կարող էր պատճառ դառնալ մեղադրյալի իրավունքների սահմանափակման:

Այս ամենով հանդերձ, կրկին պետք է փաստել, որ նույնիսկ «գերիզոն» պետական մեղադրողների համակարգ ունենալու պայմաններում ԱՄՆ-ում մասնավոր անձի կողմից մեղադրանքը չվերացվեց, մասնավոր անձը դուրս չմղվեց մեղադրանքի իրականացման գործընթացից: Ավելին՝ կան նահանգներ (Վիրջինիա, Մոնտանա, Օհայո), որտեղ մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքի իրականացման համար չի պահանջվում դատախազից ստանալ թույլտվություն կամ դատախազի պարտադիր մասնակցություն այդպիսի մեղադրանքին⁹⁹: Այլ կերպ՝ այս դեպքում ստացվում է, որ թույլ է տրվում մասնավոր մեղադրողին հանդես գալ իբրև «հիմնական» մասնավոր մեղադրող:

Բազմաթիվ այլ նահանգներում (Կալիֆորնիա, Կոլորադո, Փյորիդա, Ջիորջիա և այլն), այս կամ այն ձևով (հիմնականում լրացնող մասնավոր մեղադրանքի ձևով) թույլատրվում է մասնավոր անձի մասնակցությունը քրեական հետապնդմանը: Կան նահանգներ, որտեղ թույլ է տրվում ոչ թե նեղ իմաստով մասնավոր մեղադրանքի կազմակերպումը (տուժողի¹⁰⁰ կողմից իրականացվող

⁹⁵ Նույն աշխատության էջ 518:

⁹⁶ Օրինակ՝ 1875թ. հիմնադրված Երեխաների նկատմամբ դաժան վերաբերմունքի կանխարգելման Նյու Յորքյան կազմակերպությունը (New York Society for the Prevention of Cruelty to Children) արդեն 1900-ականների սկզբներին խիստ ակտիվ մեղադրական գործունեություն էր ծավալել, և արդեն 1909թ. վերջինիս կողմից հարուցված քրեական հետապնդումների քանակը հասավ 10201-ի, որոնցից 8329-ը դատապարտման արդյունքի բերեցին: Տե՛ս **Полянский Н.Н.**, նշվ. աշխ., էջ 85:

⁹⁷ Virginia v. Dulany, 28 F. Cas. 1223, 1223 (D.D.C. 1802), մեջբերումն ըստ՝ **Мельников Е.А.**, նշվ. աշխ., էջ 172:

⁹⁸ Վիսկոնսինում որոշակի ժամանակ անց մասնավոր մեղադրանքի յուրահատուկ դրևորում թույլատրվեց, տե՛ս Sidman A., նշվ. աշխ., էջեր 769-770:

⁹⁹ Տե՛ս **Bessler J.**, նշվ. աշխ., էջ 529:

¹⁰⁰ Եկատենք, որ ԱՄՆ-ում «տուժողը» ընդհանուր առմամբ չի դիտարկվել իբրև դատավարության ինքնուրույն սուբյեկտ՝ հանդես գալով իբրև սովորական վկա: Սակայն, միաժամանակ, հանցագործության զոհի (տուժող) այդպիսի իրավական վիճակը ժամանակի ընթացքում որոշակի փոփոխության է ենթարկվել: Մասնավորապես դեռևս 1970-ականներից ԱՄՆ-ում ծայր առավ հանցագործության զոհի (տուժող) իրավունքների ամրագրմանը, վերջիններիս օրինական շահերի պաշտպանության արդյունավետության բարձրացմանն ուղղված շարժում, որի սկիզբը կարելի է գնահատել 1972թ. ԱՄՆ Գերագույն դատարանի՝ Լինդա Ռ.Ս. ընդդեմ Ռիչարդ Դ-ի գործով կայացրած որոշումը (Linda R.S. v. Richard D., 410 U.S. 614 (1972)): Այդ որոշման մեջ Դատարանի կողմից արվեցին ԱՄՆ Կոնգրեսին ուղղված դիտարկումներ, որոնցով խորհուրդ էր տրվում վերձինիս հատուկ օրենք ընդունել, որը թույլ կտար հանցագործության զոհերին օգտվել բոլոր իրավունքներից, նույնիսկ հանցագործությամբ տուժողի առողջությանը վնաս պատճառված չլինելու դեպքում: Այս որոշմանը հաջորդեց մի շարք օրենսդրական ակտերի մշակման և ընդունման գործընթացը, որոնք ուղղված էին տուժողների իրավունքներին ու նրանց օրինական շահերի արդյունավետ պաշտպանությանը (Victim Crime Act of 1984, Victims' Rights and Restitution Act of 1990, Victims of Trafficking & Violence Protection Act of 2000. Violence Against Women

հետապնդում) միայն, այլ նաև լրացնող մասնավոր մեղադրանքի կազմակերպման հնարվորություն է օրենքով ընձեռվում: Այսպես, օրինակ, Նյու Ջերսիում օրենքով թույլատրվում է ցանկացած քաղաքացու վարձել աթորնեյի (փաստաբան), որը կօժանդակի դատախազին¹⁰¹: Այսպիսով փաստացիորեն գործ ունենք «լրացնող» ժողովրդական մեղադրանքի հետ:

Ամերիկացիները հանցագործությունների դեմ պայքարի հարցում հանրության մասնակցության ապահովման, ինչպես նաև պետական մեղադրանքի հաշվետվողականության ապահովման հարցում դրսևորեցին նաև խիստ յուրօրինակ մի այլ մոտեցում՝ **տարբեր նահանգներում նախատեսվեց շրջանային դատախազների ընտրության մեխանիզմ**¹⁰²: Դատախազի ընտրությունը հնարավորություն տվեց ուղղակի ապահովել պետական մեղադրանքին հանրության մասնակցությունը, մյուս կողմից՝ այդ կերպ ապահովվեց դատախազի ծառայողական հիերարխիայից անկախությունը՝ որոշակիորեն լուծելով նաև քրեական հետապնդման քաղաքական իշխանության ազդեցության հնարավոր վտանգները (ինչը Եվրոպայում փորձ էր արվում լուծել ժողովրդական մեղադրանքի ինստիտուտով): Այդպիսով՝ յուրօրինակ լուծում ստացավ պետական մեղադրանքի արդյունավետության հարցը. տարատեսակ ծառայողական հաշվետվությունների փոխարեն դատախազը արդեն հաշվետու դարձավ շրջանի բնակիչների առջև (չվերընտրվելու վտանգը անարդյունավետ աշխատանքի ուղղակի հետևանքն է):

Այսպիսով՝ մասնավոր անձի կողմից իրականացվող հետապնդման կազմակերպման հարցում անզիջական ու ամերիկյան փորձի ուսումնասիրություններից ևս մեկ անգամ հաստատվում է առաջ քաշված այն դրույթը, ըստ որի ժողովրդական մեղադրանքը ինքին չի հանդիսանում հնացած ու ժամանակավրեպ մի ինստիտուտ: Միևնույն ժամանակ անզիջական ու ամերիկյան մեղադրանքի պատմության ուսումնասիրությունը մեկ անգամ ևս հաստատում է «հիմնական» ժողովրդական մեղադրանքի ձևով մեղադրանքի կազմակերպման ոչ արդյունավետության ու հնացվածության մասին մեր դիտարկումը, ինչն էլ իր հերթին պայմանավորում է մասնավոր անձի կողմից իրականացվող «հիմնական» մեղադրանքից «անցումը» դեպի «հիմնական» պետական մեղադրանքի:

Նշված երկրների փորձի ուսումնասիրությունից նկատվում է կարծես օբյեկտիվ միտում, պետական մեղադրանքի զարգացմանը զուգընթաց մասնավոր անձի կողմից իրականացվող հետապնդումը որոշակիորեն սահմանափակելու: Մակայն, ինչպես հատկապես ակնհայտ է դառնում ամերիկյան փորձի ուսումնասիրությունից, նույնիսկ «գերհզոր» պետական մեղադրանքի կազմակերպումը չի հանգեցնում ընհանրապես մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքի վերացմանը:

Սա իր հերթին վկայում է այն մասին, որ պետական մեղադրանքը ու մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքները օբյեկտիվորեն իրար չեն բացառում:

Այս հանգամանքը ինքին հիմք է տալիս հայկական քրեական դատավարությունում ժողովրդական մեղադրանքի ներդրման սահմանները ուրվագծելիս գերծ մնալ «հիմնական» ժողովրդական մեղադրանքի ձևով կազմակերպելու մտքից՝ ընտրելով պետական մեղադրանքի հետ տարատեսակ զուգակցումներով ժողովրդական մեղադրանքի ներդրման եղանակը:

Act of 1994 and Act of 2000, Crime Victims' Rights Act 2004.): Դրանցով արդեն տուժողը օժտվում էր լրացուցիչ իրավունքներով: Մասնավորապես, օրինակ, ներկայումս ֆեդերալ հարթությունում հանցագործությունից տուժողին վերապահում է գործի քննության արագ և առանց անհարկի ձգձգման իրավունք, մեղադրյալից բավարար չափով պաշտպանված լինելու իրավունքը, ողջամիտ կերպով հստակ և ժամանակին դատական քննության, պայմանական-վաղաժամկետ ազատման մասին տեղեկացված լինելու, ինչպես նաև մեղադրյալի փախուստի մասին տեղեկացված լինելու իրավունք: Տուժողն իրավունք ունի նաև անձամբ և անմիջականորեն դատական քննությանը մասնակցելու, դատարանում իր սեփական կարծիքն արտահայտելու, իր փաստաբանի կամ ներկայացուցչի հետ խորհրդակցելու, հանցագործությամբ պատճառված նյութական վնասի փոխհատուցում ստանալու և այլ իրավունքներ (18 U.S.C. § 3771. Crime victims' rights, <https://www.justice.gov/usao/resources/crime-victims-rights-ombudsman/victims-rights-act>): Այս ամենով հանդերձ կարող են արձանագրել, որ տուժողին չի կարելի այլևս «գուտ սովորական» վկա դիտարկել. նա այլևս ձեռք է բերել իր յուրահատուկ կարգավիճակին համահունչ լրացուցիչ իրավունքներ:

¹⁰¹Տե՛ս NJSA 19:34-63, https://nj.gov/state/dos-statutes-elections-19-31-39.shtml#ele_19_34_63 :

¹⁰²1832թ. առաջին նահանգը, որ շրջանային դատախազների ընտրության հնարավորություն նախատեսեց, Միսիսիպիի էր: Իսկ արդեն 1859թ. հետազոտողների հավաստմամբ դատախազներին ընտրելու միտումը շատ հստակ և անդառնալի դարձավ: Տե՛ս Bessler J., նշվ. աշխ., էջ 517:

Այնուամենայնիվ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայկական քրեական դատավարությունը պատկանում է մայրցամաքային քրեադատավարական համակարգին, սկնհայտ է դառնում նաև մայրցամաքային համակարգի այնպիսի առաջամարտիկ երկրների, մասնավորապես՝ Գերմանիայի, Ֆրանսիայի և Իսպանիայի՝ մասնավոր անձի կողմից իրականացվող հետապնդման փորձի, դրա գոյության (անհրաժեշտության) մասին վկայող գիտական մտքի ուսումնասիրությունը: Դա թույլ կտա հասկանալ արդյո՞ք ժողովրդական մեղադրանքը հանդիսանում է զուտ անգրամերիկյան քրեադատավարական համակարգին բնորոշ ինստիտուտ, թե դրա գոյությունը ոչ մի կերպ կապված չէ քրեական դատավարության այս կամ այն համակարգի պատկանելիությունից: Պատասխանից իր հերթին կօգնի հայկական քրեական դատավարություն տվյալ ինստիտուտի ներդրման հնարավորության հարցը գնահատելու համար:

2.2.2. Ժողովրդական մեղադրանքը մայրցամաքային քրեադատավարական համակարգի երկրներում (Գերմանիա, Ֆրանսիա, Իսպանիա)

Գերմանիա

Գերմանիայում մեղադրանքի պետական մենիշխանության վտանգները հասկացել էին շատ վաղ, և արդեն 1800-ականների երկրորդ կեսերից գիտական մի մեծ շարժում սկսվեց պետական մեղադրանքի մենիշխանությունը զսպելու համար՝ քրեական հետապնդմանը մասնավոր անձանց մասնակցությունը ապահովելու եղանակով:

Պետական մեղադրանքի մոնոպոլիայի վերացումը և քրեական հայցի իրավունքի վերապահումը մասնավոր անձանց պետք է դառնա առաջնային անհրաժեշտություն այն պետության համար, որը ցանկանում է այսուհետ կոչվել իրավական և ոչ թե ոստիկանական պետություն:¹⁰³

(1875թ. Լ.Բար)

Ե՛վ պրակտիկ աշխատողների, և գիտնականների շրջանում ծավալվեցին քննարկումներ այն մասին, թե ինչ կերպ պետք է կազմակերպվի մասնավոր անձանց կողմից իրականացվող քրեական հետապնդումը՝ մասնավոր մեղադրանքի՞, թե՞ ժողովրդական մեղադրանքի ձևով:

Իրավաբանների այն խումբը, ովքեր պնդում էին, որ պետք է ներդնել մասնավոր մեղադրանքը գլխավորում էր ավստրիացի նշանավոր իրավաբան Հ. Գլազերը: Վերջինս գտնում էր, որ իր դեմ կատարված հանցագործությամբ տուժողը ձեռք է բերում մասնավոր շահ, այն է՝ հանցանք կատարած անձին պատասխանատվության ենթարկելու շահը: Եվ պետությունը կարող է արգելել մասնավոր վրեժը, բայց չի կարող արգելել տուժողի շահի «արդարացի բավարարումը», ինչը հանդիսանում է պատժի կարևորագույն տարրերից մեկը, և որի կիրառման համար տուժողն ունի առանձնահատուկ իրավունք՝ բոլոր քաղաքացիների՝ հասարակական կարգի պահպանության ապահովման ընդհանուր շահից ամբողջովին տարբերվող¹⁰⁴: Այս հիմքերից էլ բխեցվում էր մասնավոր «լրացնող» և մասնավոր «սուբսիդիար» մեղադրանքների ներդրման անհրաժեշտությունը¹⁰⁵:

Մյուսները, ժողովրդական մեղադրանքի ներդրման կողմնակից լինելով, իրենց հերթին քննադատում էին պետական մեղադրանքի մենիշխանությունը՝ մասնավոր մեղադրանքով հաղթահարելու տեսակետը: Նրանք նկատում էին, որ հենց այն դեպքերում, երբ կարող է

¹⁰³ Մեջբերումն ըստ **Полянский Н.Н.** К вопросу об участии частных лиц в публичном обвинении (Принципиальная основания actio popularis в уголовном процессе), 1915, էջ 8 (<http://jurytrial.ru/media/files/library/file30.pdf>):

¹⁰⁴ Տե՛ս **Полянский Н.Н.** նշվ.աշխ., էջ 3:

¹⁰⁵ Տե՛ս **Полянский Н.Н.** նշվ.աշխ., էջեր 3-4

առաջանալ պետական մեղադրողի քաղաքական դրդապատճառներով ցուցաբերած կողմնակալության վտանգ, ապա հենց այդ հանցագործությունների դեպքում տուժող սուբյեկտ որպես կանոն չի լինում: Այս առումով Ռ.Գնեստը հռետորական հարց էր տալիս. թե արդյո՞ք կարող է ինքը տուժող համարվել, երբ դատախազը իր քաղաքական ընկերների համար օրենքը չի կիրառում: Արդյո՞ք կարող է ինքը տուժող համարվել, երբ օրենքը իր նկատմամբ կիրառվում է, բայց մեկ այլ՝ հովանավորություն վայելող անձի նկատմամբ՝ ոչ¹⁰⁶:

Այս և այլ պատճառներով էլ առաջարկվում էր գերմանական դատավարությունում ներդնել ժողովրդական մեղադրանքը:

Սակայն իրավաբանների մի այլ խումբ, ովքեր հակադրվում էին ժողովրդական մեղադրանքի ներդրման մտքին, գտնում էին, որ ժողովրդական մեղադրանքի չարաշահման վտանգը կարող է ավելի մեծ վնասներ բերել, քան դատախազական կողմնակալությունները, որը պետք է բարեփոխվեր¹⁰⁷: Այս ինստիտուտի ներդրման ընդդիմախոսները ասում էին, որ.

«Ժողովրդական մեղադրանք ներմուծելը նույնն է, թե անլույս խավարի միջից դուրս թողնել սատանաներին, դա նշանակում է բացել «ատելության, վրեժխնդրության և շոթյոթականության» ուղի և որոշակի առումով հող նախապատրաստել առավել խոշոր միավորումների «(պետությանը) զուգահեռ իշխանության (nebenregierung)» հաստատման համար, որոնք չարի դեմ պայքարում միակողմանիության են հակված և չեն կարողանում ճանաչել քրեական դատարանին դիմելու սահմանը»¹⁰⁸:

Արդյունքում, ինչպես պնդում է պրոֆեսոր Ջ. Լանգբեյնը, լուծումը եղավ այն, որ որոշվեց քրեական դատավարությունում *պահպանել հանրային (պետական) մենիշխանությունը*¹⁰⁹:

Մեր ժամանակներում արդեն վիճակը, որոշակիորեն այլ է: Թեև ԳԴՀ քրեական դատավարության օրենսգրքի¹¹⁰ 152-րդ հոդվածի առաջին մասով ամրագրվում է պաշտոնականության սկզբունքը (*Offizialprinzip*), ըստ որի հանրային հետապնդման առաջադրման (հարուցման) լիազորությունը վերապահված է դատախազությանը, սակայն այնուամենայնիվ այսօր որոշակիորեն հաղթահարված է դատախազական մենիշխանությունը:

Բանն այն է, որ այդ սկզբունքից արված են բացառություններ, և տուժողը ունի առանց դատախազին նախապես դիմելու որոշակի շրջանակի գործերով (ԳԴՀ քր.դատ.օր. 374-րդ հոդվածով նախատեսված հանցագործություններով¹¹¹) մասնավոր քրեական հետապնդում իրականացնելու իրավունք: Այս դեպքերում մասնավոր մեղադրողն ունի հանրային մեղադրանքի գործերով դատախազին վերաբերելի կարգավիճակ (385-րդ հոդված): Նա ունի նաև քրեական հայցը տնօրինելու լիազորություն՝ դրանից հրաժարվելու միջոցով (երբ առկա է մեղադրյալի համաձայնությունը (391-րդ հոդված)):

Սակայն, պետք է նշել, որ անգամ այս նեղ շրջանակի հանցագործություններով չի սահմանափակվում դատախազի՝ քրեական հետապնդման իրավասությունը. վերջինս ցանկացած պահի գործին ներգրավվելու լիազորություն ունի (377-րդ հոդված)¹¹²:

¹⁰⁶ Տե՛ս **Полянский Н.Н.** նշվ.աշխ., էջ 11

¹⁰⁷ Այս մասին տե՛ս, **J. H. Langbein**, նշվ. աշխ., էջ 448: Ժողովրդական մեղադրանքի ներդրման դեմ գերմանացի գիտնականների այլ հիմնավորումներին կարելի է ծանոթանալ նաև՝ Ն.Ն. Պոլյանսկու , նշվ., աշխ., էջ 20:

¹⁰⁸ Տե՛ս **Полянский Н.Н.** նշվ.աշխ., էջ 20:

¹⁰⁹ **J. H. Langbein**, նույն տեղում:

¹¹⁰ Այսուհետ նաև՝ ԳԴՀ քր.դատ.օր. (https://www.gesetze-im-internet.de/englisch_stpo/englisch_stpo.html):

¹¹¹ Օրինակ՝ բնակարանի անձեռնմխելիության խախտման, զույրը վնասելու, մարմնական վնասվածք հասցնելու, մասնավոր նամակագրության անձեռնմխելիության խախտման և այլ հանցագործություններով: ԳԴՀ քր.դատ.օր-ի 374-րդ հոդվածով թվարկված հանցագործություններով հանրային (պետական) մեղադրանք հարուցվում է դատախազության կողմից այն ժամանակ միայն, երբ գնահատվում է, որ հարուցումը բխում է հանրային շահից (376-րդ հոդված):

¹¹² Ինչպես պնդում են հենց իրենք՝ գերմանացի իրավաբանները, այս տեսակի մասնավոր մեղադրանքը փաստացի ունի առավելապես պետական ռեսուրսների տնտեսման նպատակ (Տե՛ս **Вернер Б.**, Уголовно-процессуальное право ФРГ: Учебник. 6-е изд., пер.с нем. Я.М. Плошкиной; Под ред. Л.В. Майоровой. – Красноярск : РУМЦЮО, 2004, էջ 333),

Բացի այդ ԳԴՀ քր.դատ.օր.-ում տեղ է գտել նաև մասնավոր անձանց քրեական հետապնդման մասնկացության մի այլ տեսակ՝ «լրացնող» մասնավոր մեղադրանքի տարատեսակը:

Այս դեպքում արդեն, թեև քրեական հետապնդումը հարուցվում է պետական պաշտոնատար անձի կողմից, սակայն որոշակի շրջանակի գործերով¹¹³ («մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտ (antragsdelikte) – Ա.Դ.) տուժողը (նաև այլ անձինք¹¹⁴) իրավունք է ստանում ցանկացած պահի (395-րդ հոդվածի 4-րդ մաս) ներգրավվելու քրեական վարույթ՝ իբրև համամեղադրող:

Ու թեև այս պարագայում իբրև հիմնական մեղադրող հանդես է գալիս դատախազը, և տուժողը զրկված է լինում մեղադրանքը տնօրինելու լիազորությունից, սակայն վերջինս չի գտնվում դատախազից կախվածության մեջ: Ավելին՝ նա փաստացի այս ինստիտուտի միջոցով ստանում է հնարավորություն իր ակտիվ գործունեությամբ հսկողություն իրականացնել պետական մեղադրանքի վրա:

Վերոգրյալը թույլ է տալիս փաստելու, որ այսօր արդեն **չի կարելի խոսել** Գերմանիայում պետական մեղադրանքի բացարձակ մենիշխանության մասին¹¹⁵, գերմանացիները այն որոշակիորեն հաղթահարել են քրեական դատավարությունում մասնավոր մեղադրանքի տարբեր տեսակների ներդրմամբ:

Մյուս կողմից՝ նրանց մոտ **բացակայում է ժողովրդական մեղադրանքի ինստիտուտը** (կարելի է արձանագրել, որ «հաղթեցին» գլազերյան հայացքների համակիրները), և այս պայմաններում կարծես չլուծված է մնում քաղաքական կամ այլ դրդապատճառներով դատախազության կողմնակալության հարցը:

Այս խնդրի լուծումը փորձում են գտնել քրեական հետապնդման հարուցման օրինականության սկզբունքի (*Legalitätsprinzip*) ներդրմամբ (152-րդ հոդվածի 2-րդ մաս), ըստ որի՝ երբ առկա են բավարար փաստական հիմքեր, դատախազությունը *պարտավոր է գործել ցանկացած հետապնդվող հանցագործությանը* (բացի օրենքով նախատեսված բացառություններից):

Այս կարգավորումը, դատախազին զրկելով հանցագործության փաստական տվյալների առկայության դեպքում հայեցողություն դրսևորելու հնարավորությունից, նպատակ է հետապնդում նրան ազատել նաև հնարավոր քաղաքական ճնշումների ազդեղությունից քրեական հետապնդման հարուցման հարցը լուծելիս:

Քրեական հետապնդման պարտադիր հարուցման գերմանական կանոնը ստեղծված է այդ (քաղաքական – Ա.Դ.) ազդեցությունը կանխելու համար,- արձանագրում է Ջ.Լանգբեյնը: Գերմանացի դատախազը, ով, օրինակ, հրահանգ է ստացել իր նախարարի կողմից չհետապնդել քաղաքական կոռուպցիոն գործը, պետք է մերժի այդ պատվերը: 152(2)–րդ հոդվածը նրան կարգադրում է հետապնդել, և դա չանելը, այդ կերպ չգործելն ինքին հանցագործություն է¹¹⁶:

«Ուստի, թեև քրեական հետապնդման պարտադիր հարուցման կանոնը սահմանափակում է դատախազի իշխանությունը, այն միևնույն ժամանակ հանդիսանում է նրա պաշտպանության հիմնական միջոցը...դա հանդիսանում է վերևի (վերադասի – Ա.Դ.) անհարկի միջամտություններից նրա անկախության աղբյուրը»¹¹⁷:

հետևաբար նման մասնավոր մեղադրանքով, պետք է փաստել, որ չի կարող լուծվել պետական մեղադրանքի մենիշխանության վտանգները չեզոքացնելու խնդիրը:

¹¹³ ԳԴՀ քր.դատ.օր.-ի 395-րդ հոդվածով նախատեսված հանցագործություններով:

¹¹⁴ ԳԴՀ քր.դատ.օր.-ի 395-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով նախատեսվում է նաև որոշակի այլ անձանց՝ որպես համամեղադրող յուրահատուկ դեպքերում հանդես գալու հնարավորություն: Սակայն այս դեպքում մենք գործ ունենք ոչ թե ժողովրդական մեղադրանքի, այլ մասնավոր մեղադրանքի հետ, քանի որ իբրև համամեղադրող հանդես գալու պայմանը հանցագործությամբ վերջիններիս շահերի պատճառով վնասն է (օրինակ՝ իբրև լրացնող մասնավոր մեղադրող հանդես են գալիս սպանված տուժողի ծնողները, զավակները և այլ) , և հետապնդումն այդ անձանց կողմից իրականացվում է հենց միայն իրենց շահերի պաշտպանության նպատակով:

¹¹⁵ Ինչպես նկատում են հարցի հետազոտությամբ զբաղվողները, գործնականում տուժողի կողմից իրականացվող մասնավոր մեղադրանքը, հետապնդման տարատեսակ ծախսերով պայմանավորված, շատ քիչ է կիրառվում, ինչի արդյունքում, փաստացի ստեղծվում է քրեական հետապնդման դատախազական մենիշխանություն, տե՛ս, օրինակ, Promoting Prosecutorial Accountability, Independence & Effectiveness, Comparative Research, Open Society Institute Sofia, էջ 229:

¹¹⁶ Տե՛ս **J. H. Langbein**, նշվ. աշխ., էջ 450:

¹¹⁷ Նույն տեղում:

Այս ամենով հանդերձ, պետք է փաստել, նաև, որ գործնականում քրեական հետապնդման հարուցման հարցում դրսևորվող հայեցողությունը (քրեական հետապնդման հարուցման օրինականության սկզբունքից բացառությունը) այնքան շատացավ, որ փաստացի հարուցման օրինականությունը սկզբունքը դարձավ բացառություն՝ իր տեղը զիջելով քրեական հետապնդման հարուցման նպատակահարմարության սկզբունքին¹¹⁸: Հետևաբար և՛ գերմանական քրեական դատավարությունում տեղ գտած քաղաքական ազդեցության չեզոքացման քննարկված մեխանիզմը այսօր արդեն չի կարող արդյունավետ համարվել:

Ֆրանսիա

Ֆրանսիայում քրեական հետապնդմանը մասնավոր անձանց մասնակցությանը կազմակերպումը որոշակի յուրահատկություն է ստացել դեռևս նապոլեոնյան 1808թ. քրեական դատավարության օրենսգրքով: Այն հնարավորություն էր տալիս հանցագործությունից տուժողին որոշակիորեն ազդել քրեական հետապնդման վրա. քրեական դատավարությունում քաղաքացիական հայց հարուցելով՝ սկիզբ դնել քրեական հետապնդմանը: Պետք է ընդգծել, սակայն, որը խոսքը քրեական հետապնդման սկսման, այն շարժի մեջ գցելու տուժողի իրավունքի մասին է և ոչ թե տուժողի կողմից քրեական հետապնդումը իրացնելու իրավունք ունենալու մասին. անգամ նշված դեպքում քրեական հետապնդման հետագա իրացումը շարունակում էր մնալ դատախազության լիազորությունը¹¹⁹:

Հատկանշական է, որ Ֆրանսիայում նույնպես, ինչպես և Գերմանիայում, գրեթե նույն ժամանակներում՝ 1800-ականների վերջերից սկսվեց և 1900-ականների սկզբներին աշխուժացավ ժողովրդական մեղադրանքի հանդեպ իրավաբանների հետաքրքրությունը: Սակայն այստեղ արդեն ժողովրդական մեղադրանքի ներդրմանը միտված առաջակությունները ունեին որոշակի զուտ «ֆրանսիական» յուրահատկություններ. քննարկումները, ի տարբերություն Գերմանիայի, այստեղ ընթանում էին հիմնականում ոչ թե «անսահմանափակ», այլ «սահմանափակ» ժողովրդական մեղադրանքի՝ կազմակերպությունների (անձանց միավորումների) կողմից իրականացվող ժողովրդական մեղադրանքի ներդրման ուղղությամբ, այն է՝ աղապատացնելով այն մասնավոր անձանց կողմից հետապնդմանը մասնակցության գործող կարգին. քննարկվում էր քրեական հետապնդմանը կազմակերպությունների մասկացությունը իրականացնել նրանց հնարավորություն ընձեռելով հանդես գալու իբրև քաղաքացիական հայցվոր: Այլ կերպ՝ ժողովրդական մեղադրանքի այս տարատեսակի «ներդրումը» փորձ էր արվում իրականացնել ֆրանսիական մասնավոր մեղադրանքի միջոցով:

1900-ականների առաջին տասնամյակում այդ ուղղությամբ կատարվեցին խիստ երերուն առաջին քայլերը, ընդունվեցին օրենքները, որոնցով թույլ էր տրվում որոշակի խումբ հանցագործությունների (գինիների կեղծում, տարատեսակ վանառականական խարդախ հնարքներ և այլն) դեպքում առևտրական արհմիություններին (սինդիկատ), որոնք ձևավորվել էին հատուկ այդ նպատակներով, քրեական վարույթում հանդես գալ իբրև քաղաքացիական հայցվոր:¹²⁰ Իսկ արդեն 1909-ին մշակվեց օրենքի նախագիծ, ըստ որի թույլ էր տրվում հասարակական տարատեսակ միավորումներին (ասոցիացիաներին) իրենց կանոնադրական նպատակներին առնչվող հանցագործություններով հանդես գալ իբրև քաղաքացիական հայցվոր և իրավունք ունենալ հարուցել քրեական հետապնդում:

Այդ կերպ քայլ էր արվում տարատեսակ միավորումների գործունեությունը քրեական դատավարությունում որոշակիորեն ընդլայնելու ուղղությամբ՝ միայն խիստ նեղ, օրենքում հստակ որոշված հանցագործություններից բացի նաև այլ հանցագործություններով հետապնդելու

¹¹⁸ Տե՛ս Филимонов Б.А. Основы уголовного процесса Германии. М., 1994, էջ 12: Այս մասին տե՛ս նաև Головкин Л. В. Альтернативы уголовному преследованию в современном праве. СПб.: Изд. «Юридический центр Пресс», 2002, էջեր 156-162:

¹¹⁹ Մանրամասն տե՛ս Полянский Н.Н. Право обществ на уголовный иск // Вопросы права. 1911. Кн. 6(2), էջեր 88-89:

¹²⁰ Տե՛ս Полянский Н.Н., նշվ. աշխ., էջեր 91-92:

հնարավորություն ընձեռելով: Սակայն նախագիծն այդպես էլ չդարձավ օրենք՝ թերևս դիտարկվելով իբրև «խիստ կոպիտ ոտնձգություն» ֆրանսիական դատախազության, նրա քրեական հետապնդման մենիշխանության դեմ¹²¹:

Պետք է փաստել է, որ անգամ մեր օրերում քրեական հետապնդման կազմակերպման հարցում գործող 1958թ. ֆրանսիական քրեական դատավարության օրենսգրքում պահպանվել է դատախազի հսկայական դերը այս հարցում: Վերջինս շարունակում է հանդիսանալ միակ պաշտոնատար անձը, ով լիազորված է հարուցել քրեական հետապնդում և իրացնել այն. հետաքննչական (նստիկանություն), նախաքննության (քննչական դատավոր) մարմինները գրկված են քրեական հետապնդման իրացման լիազորությունից: Այլ կերպ ասած՝ քրեական հետապնդման հարուցման և իրացման հարցում դատախազն այստեղ **պետական մարմինների ու պաշտոնատար անձանց** շարքում զբաղեցնում է մենիշխան դիրք¹²²:

Միևնույն ժամանակ, սակայն, դատախազության այսպիսի կարգավիճակը չի բացառում մասնավոր անձանց մասնակցությունը քրեական հետապնդմանը: Ավելին, ի տարբերություն գերմանական դատավարության, ֆրանսիական դատավարությունը չի սահմանափակվում միայն այսպես կոչված «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտի (antragsdelikte) շրջանակով: Ֆրանսիայում այսօր մասնավոր անձանց մասնակցությունը քրեական հետապնդմանը հնարավոր է առանց բացառության ցանկացած քրեական գործով. դրա համար անհրաժեշտ է, որ անձը, ում հանցագործությամբ անմիջականորեն պատճառվել է վնաս, ներկայացնի քաղաքացիական հայց (Ֆրանսիայի քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդված¹²³):

Ինչպես երևում նշյալ դրույթից՝ Ֆրանսիայում մասնավոր անձանց մասնակցությունը հնարավոր քրեական հետապնդմանը կազմակերպված է **մասնավոր մեղադրանքի ձևով** (քանի որ խոսքը հանցանքից անմիջականորեն տուժողի մասին է):

Ընդ որում՝ տուժած անձը կարող է հարուցել քաղաքացիական հայց և՛ այն դեպքում, երբ դատախազը չի նախաձեռնել քրեական հետապնդում (օրինակ՝ քրեական հետապնդման հարուցման նպատակահարմարության սկզբունքից ելնելով՝ որոշել է չհարուցել քրեական հետապնդում)՝ այդպիսով «վերացնելով» դատախազի քրեական հետապնդման հարուցման հարցում հայեցողություն դրսևորելու հնարավորությունը, և՛ այն դեպքում, երբ վերջինս հարուցել է քրեական հետապնդումը՝ փաստացի միանալով դատախազի հարուցած քրեական հետապնդմանը (3-րդ հոդված):

Պետք է նշել, որ ֆրանսիական դատավարությունում միայն քաղաքացիական հայցի հարուցումն է, որ հնարավորություն է ընձեռում հանցանքից տուժողին ձեռք բերել հավելյալ իրավունքներ ու այդկերպ մասնակցել իրականացվող քրեական հետապնդմանը¹²⁴: Ընդ որում, ինչպես նշվում է գրականության մեջ, անկախ քաղաքացիական հայցով քրեական հետապնդման հարուցման եղանակից՝ դատախազը պարտավորվում է դատարանում պաշտպանել տուժողի կողմից առաջադրված մեղադրանքը¹²⁵:

Ֆրանսիայի քր.դատ.օր.-ը սահմանում է նաև, որ քաղաքացիական հայցվորի (տուժող) կողմից քաղաքացիական հայցից հրաժարումը որպես հետևանք չի առաջացնում հանրային քրեական հետապնդման դադարեցում (6-րդ հոդված):

Վերոնշյալ կարգավորումների վերլուծությունը թույլ է տալիս արձանագրելու, որ մասնավոր մեղադրանքը այստեղ կազմակերպված է «իարժեք» և «լրացնող» մասնավոր մեղադրանքի

¹²¹ Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Полянский Н.Н.**, նշվ.աշխ., էջեր 89-98:

¹²² Այս առումով թերևս միակ բացառությունը դատական քննության ընթացքում տեղի ունեցող հանցագործությունների դեպքով քրեական հետապնդման հարուցման դատարանի լիազորությունն է (Ֆրանսիայի քրեական դատավարության օրենսգրքի 675-678-րդ հոդվածներ):

¹²³ Այսուհետ նաև՝ Ֆրանսիայի քր.դատ.օր. (<https://www.legifrance.gouv.fr/content/location/1741>):

¹²⁴ Այն անձը, ով թեև տուժել է հանցագործությունից, սակայն չի հարուցում քաղաքացիական հայց, քրեական վարույթին մասնակցում է վկայի կարգավիճակով և չունի հավելյալ իրավունքներ, այս մասին առավել մանրամասն տե՛ս **Гуценко К. Ф., Головкин Л. В., Филимонов Б. А.** Уголовный процесс западных государств. М.: Зерцало-М, 2002. էջեր 331-332:

¹²⁵ Տուժողի կողմից քրեական հետապնդման հարուցման երկու եղանակ կա՝ երբ տուժողը քաղաքացիական հայց է ներկայացնում քննչական դատավորին, և երբ այն ներկայացվում է դատարան (սա այն գործերով, որոնցով նախաքննություն չի պահանջվում), տե՛ս **Жирова М.Ю.** Особенности доказывания по делам частного обвинения: монография.- М., Юрлитинформ, 2013, էջ 36:

տեսակների համադրությամբ¹²⁶, երբ ցանկացած գործով հանցագործությունից տուժողը, պետական մեղադրողի հետ միաժամանակ գործելով, լրացնելով վերջինիս (սակայն ունենալով ավելի ցածր դեր), օգտվելով իր իրավունքներից, համատեղ իրականացնում է քրեական հետապնդում:

Արդյո՞ք ֆրանսիական քրեական դատավարությունում ժողովրդական մեղադրանքը բացակայում է:

Այս հարցին պետք է տալ բացասական պատասխան:

1970-ականներից սկսած Ֆրանսիայի քր.դատ.օր.-ում կատարվեցին միջարք լրացումներ, որոնցով փաստացի օրենսդրական ամրագրում ստացան դարասկզբի նախաձեռնությունները՝ տարատեսակային հասարակական միավորումներին (ասոցիացիա) իրավունք վերապահվեց քրեական դատավարությանը մասնակցելու իբրև քաղաքացիական հայցվոր՝ քաղաքացիական հայց հարուցելով որոշակի կոնկրետ կատեգորիայի տուժողների շահերի պաշտպանության նպատակով (2-1-ից 2-20-րդ հոդվածներ):

Ֆրանսիայի քր.դատ.օր.- 2-1-րդ հոդվածը սահմանում է, որ որոշակի ասոցիացիաների, որոնք իրենց կանոնադրությամբ նախատեսում են պայքարել ռասիզմի կամ այլ էթնիկական, ռասսայական, կրոնական խտրականության հողի վրա ծագած հանցագործությունների, ինչպես նաև դիտավորությամբ կատարված տարատեսակ այլ հանցանքների դեմ, որոնք ուղղված են անձի կյանքի, նրա ֆիզիկական անձեռնմխելիության, տարատեսակ սպառնալիքների, գողության, շորթման, կամ գույքի վնասման կամ ոչնչացման հանցագործությունների դեմ, որոնք կատարվում են անձի ազգային պատկանելիության հողի վրա, վերջինիս իրական կամ ենթադրյալ այս կամ այն էթնիկ խմբին, ռասսային կամ կրոնական այս կամ այն խմբին պատկանելու պատճառով, իրավունք ունեն հանդես գալու իբրև քաղաքացիական հայցվոր:

Ընդ որում՝ նույն հոդվածով սահմանվում են որոշակի երաշխիքներ, թե որ ասոցիացիաները և ինչպես կարող են ներգրավվել քրեական վարույթ հայց հարուցելու միջոցով: 2-1-րդ հոդվածում նշվում է, որ քաղաքացիական հայցի իրավունք ունեն միայն այն ասոցիացիաները, որոնք հանցանքի կատարման պահին ունեցել են գործունեության առնվազն 5 տարվա ժամանակահատված (այսպիսի սահմանափակմամբ թերևս նպատակ է հետապնդվում ասոցիացիաների կողմից մեղադրանքի չարաշահումը կանխարգելել՝ գործունեության ժամանակահատվածը իբրև նման վտանգի կանխարգելման երաշխիք դիտելով):

Եվ քանի որ «ֆրանսիական» ժողովրդական մեղադրանքը այնպես է կառուցված, որ իրացվում է մասնավոր մեղադրանքի ձևով (ասոցիացիաները կոնկրետ քրեական հետապնդումը հարուցում են ոչ թե անորոշ անձանց շահերի (հանրային շահի), այլ որոշակի, կոնկրետ անձանց շահերի (մասնավոր շահի) պաշտպանության նպատակով), հետևաբար և մի շարք դեպքերում օրենսդիրն նաև առաջադրում է այդ հանցանքից տուժողի համաձայնությունը ստանալու պայման:

Այսպես, նույն 2-1-րդ հոդվածով սահմանվում է, որ երբ հանցագործությունը կատարվում է անձի դեմ՝ իբրև անհատականության, ապա ասոցիացիաների կողմից ներկայացված հայցը թույլատրելի կլինի այն դեպքում, եթե վերջինս ապացուցում է, որ ստացել է շահագրգիռ անձի համաձայնությունը, իսկ եթե անձը անչափահաս է, ապա՝ նրա ծնողների (ծնողական իրավունք ունեցողների) կամ նրա օրինական ներկայացուցիչների համաձայնությունը:

¹²⁶ Բոլոր դեպքերում, երբ դատախազը որոշում է չհարուցել քրեական հետապնդում, քրեական հետապնդման հարուցման նպատակահարմարության սկզբունքից ելնելով՝ տուժողը իրավունք ունի քաղաքացիական հայցի հարուցմամբ նախաձեռնել քրեական հետապնդման հարուցում՝ վերացնելով դատախազի նպատակահարմարությամբ գործելու լիազորությունը միայն, ինչի պայմաններում «աուբսիդիար» մասնավոր մեղադրանքի մասին կարելի է խոսել միայն խիստ պայմանականորեն:

Բացի նշյալ դեպքերից, ֆրանսիական օրենսդիրը տարատեսակ այլ հանցագործությունների դեպքում նույնպես միավորումների մասնակցության հնարավորություն է նախատեսում (օրինակ՝ սեքսուալ կամ ընտանեկան բռնության հետ կապված հանցագործություններով (2-2-րդ հոդված), անչափահասների դեմ դաժան վերաբերմունքի, խոշտանգումների կամ նրանց նկատմամբ կատարված սեքսուալ հանցագործություններով (այս դեպքում չի նշվում նաև տուժողի համաձայնությունը ստանալու պահանջի մասին (2-3-րդ հոդված)), մարդկության դեմ ուղղված կամ պատերազմական հանցագործություններով (տուժողի համաձայնություն ստանալու պարտադիր պայմանի մասին նույնպես նշում արված չէ (2-4-րդ հոդված) և այլն):

Մասնավոր մեղադրանքի ձևով ժողովրդական մեղադրանքի կազմակերպման այս յուրօրինակ «ֆրանսիական» կառուցվածքից բացի, կարծում ենք, որ արդեն «մաքուր» կերպով ժողովրդական մեղադրանքի ինստիտուտն ամրագրված է 2-21-րդ հոդվածով, որով հնագիտական ժառանգության ուսումնասիրմամբ և պահպանմամբ զբաղվող ասոցիացիաներին իրավունք (որոնք ունեն առնվազն երեք տարվա վավերականություն) է վերապահվում որոշակի տեսակի հանցագործություններով, որոնք ուղղակի կամ անուղղակի վնասում են կոլեկտիվ շահը, և որի պահպանությանն է ուղղված այդ ասոցիացիաների գործունեությունը, օգտվել քրեական դատավարությունում քաղաքացիական հայցվորի իրավունքներից:

Այս պայմաններում օրենսդրորեն ամրագրված է ոչ թե կոնկրետ անձի, այլ կոլեկտիվ շահի պաշտպանության նպատակը, և դա հիմք է ծառայում եզրակացնելու, որ նշյալ դեպքում գործ ունենք արդեն «սահմանափակ» «ոչ լիարժեք» ժողովրդական մեղադրանքի տեսակի հետ:

Պետք է նկատել, որ հետազոտողները ասոցիացիաների կողմից քրեական դատավարությանը իբրև քաղաքացիական հայցվոր մասնակցելու այս մեխանիզմը խիստ դրական են գնահատում՝ ընդգծելով, որ շատ դեպքերում հանրային (պետական) քրեական հետապնդման նախաձեռնումն իսկ պայմանավորված է եղել նրանով, որ դատախազությունը տեղեկացել է, թե իր կողմից քրեական հետապնդում չհարուցելու դեպքում, այն հարուցվելու է ժողովրդական մեղադրանքի կարգով, ու միայն դրանից հետո է հարուցել քրեական հետապնդում¹²⁷:

Այսպիսով, ինչպես նկատում ենք, Ֆրանսիայում դեռևս 1800-ականների վերջերից ժողովրդական մեղադրանք ներդնելու ծայր առած շարժումը, իր արտահայտությունը գտավ արդեն 1970-ականներից սկսած Ֆրանսիական քրեական դատավարության օրենսգրքում կատարվող լրացումներում, որոնցով փաստացի ներդրվեց ժողովրդական մեղադրանքի ինստիտուտը քրեական դատավարությունում՝ ապահովելով հասարակական տարատեսակ միավորումների մասնակցությունը քրեական վարույթին, որն իր հերթին գործնական կարևոր դեր է կատարում տուժողների իրավունքների պաշտպանության, ինչպես նաև ընդհանրապես քրեական հետապնդման արդյունավետության բարձրացման գործում:

Իսպանիա

Քրեական դատավարությունում ժողովրդական մեղադրանքի կազմակերպման հարցում Իսպանիան ի սկզբանե դրսևորել է մայրցամաքային քրեադատավարական համակարգին պատկանող երկրների մեծամասնությունից տարբերակված մոտեցում: Ժողովրդական մեղադրանքի ինստիտուտն իր ամրագրումն էր ստացել այստեղ արդեն 1812թ. վերամարագրվել՝ 1856թ. ու դրան հաջորդած 1869թ. Իսպանիայի սահամանդրություններում¹²⁸:

Այսպիսի պայմաններում, երբ յուրքանցյուր քաղաքացի՝ հանցագործության համար ժողովրդական հայց հարուցելու սահմանադրական իրավունք ուներ, այդ դրույթը չէր կարող չարտահայտվել նաև քրեական դատավարության օրենքում, և արդեն 1882թ. Իսպանիայի

¹²⁷ Տե՛ս, օրինակ, The Legal Framework for Universal Jurisdiction in France, Human Rights Watch, 2014, էջ 5:

¹²⁸ Տե՛ս **R. S. Gómez**, Revisiting Popular Action, 10 DePaul J. for Soc. Just., 2017, էջ 2:

քրեական դատավարության օրենքով¹²⁹, որն, ի դեպ, գործում է նաև այսօր, ամրագրվեց ժողովրդական մեղադրանքի ինստիտուտը:

Այսպես՝ Իսպանիայի քր.դատ.օր. 101-րդ հոդվածով սահմանվում է, որ բոլոր քաղաքացիներն ունեն օրենքով սահմանված կարգով քրեական հայց հարուցելու և այն պաշտպանելու իրավունք: Նույն օրենսգրքի 270-րդ հոդվածը իր հերթին մասնավորեցնում է, որ Իսպանիայի բոլոր քաղաքացիները, անկախ այն հանգամանքից՝ նրանք համապատասխան հանցագործությունից տուժել են, թե ոչ, իրավունք ունեն բողոք ներկայացնել՝ գործադրելով 101-րդ հոդվածով նախատեսված ժողովրդական հայցը:

Նկատենք, նաև, որ ժողովրդական մեղադրանքի ինստիտուտն իր ամրագրումը ստացավ նաև Իսպանիայի գործող¹³⁰ սահմանադրության մեջ (125-րդ հոդված), հետագայում՝ 1985թ. ընդունված դատական իշխանության կազմակերպման մասին օրենքով (19.1 հոդված)¹³¹:

Պետք է ասել, որ իսպանացիները մեկը մյուսից հստակորեն տարանջատում են մասնավոր մեղադրանքի և ժողովրդական մեղադրանքի ինստիտուտները և ըստ այդմ էլ շեշտում են, որ մասնավոր մեղադրողի իրավական կարգավիճակը ծագում է սահմանադրության՝ 24-րդ հոդվածի առաջին մասից (որում ամրագրված է յուրաքանչյուրի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը - Ա.Ղ.), իսկ ժողովրդական մեղադրողինը՝ 125-րդ հոդվածից¹³²:

Մյուս կողմից՝ քաղաքացիների անկախ հանցագործությունից տուժելու հանգամանքից քրեական հայց ներկայացնելու իրավունքը պրակտիկայում մեկնաբանվեց այնպես, որ քրեական հայցի իրավունքը վերապահվեց նաև անձանց միավորումներին (կազմակերպություններին, տարատեսակ ասոցիացիաներին): Ավելին՝ օրենքի լայն մեկնաբանման արդյունքում հիշատակվում են դեպքեր, երբ գործնականում իբրև ժողովրդական մեղադրողներ հանդես են եկել ոչ միայն տարատեսակ հասարակական կազմակերպություններ, այլ նաև քաղաքապետարաններ և անգամ կառավարություններ¹³³: Ընդ որում, ինչպես նշում են հետազոտողները, ներկայումս գործնականում խիստ հաճախ են կիրառվում և մեծ ժողովրդականություն վայելում տարատեսակ կազմակերպությունների կողմից իրականացվող մեղադրանքները¹³⁴: Այս փաստն ինքին վկայում է այն մասին, որ ժողովրդական մեղադրանքը այստեղ ոչ թե անձանց հոչակագրային իրավունք է, այլ կարևոր գործնական նշանակություն ունեցող ինստիտուտ:

Այս ամենով հանդերձ, պետք է նկատել, որ ժողովրդական մեղադրանքի ինստիտուտը անգամ այստեղ՝ Իսպանիայում, որոշակիորեն սահմանափակված է: Նախ՝ մեղադրելու իրավունք ունեն ոչ թե բոլորը. այդ իրավունքից զրկված են հետևյալ սուբյեկտները,

1. Անձինք, ում քաղաքացիական իրավունքները որոշակիորեն սահմանափակված են (անչափահասները, անգործունակները):
2. Անձինք, ովքեր նախկինում երկու անգամ դատապարտվել են սուտ մատնության կամ սուտ հաղորդման համար:
3. դատավորները (Իսպանիայի քր.դատ.օր. 102-րդ հոդված)¹³⁵:
4. Ընտանեկան կապերին, ընտանեկան հարաբերությունների ամրությունը պահպանելու նպատակով միմյանց դեմ՝ իբրև ժողովրդական մեղադրող հանդես գալու իրավունքից

¹²⁹ Այսուհետ նաև՝ Իսպանիայի քր.դատ.օր.:

¹³⁰ 1978թ. Իսպանիայի սահմանադրություն (Constitución Española):

¹³¹ Տե՛ս **J. P. GIL**, Private Interests Seeking Punishment: Prosecution Brought by Private Individuals and Groups in Spain, Law & Policy, 2003, էջ 154:

¹³² Տե՛ս, օրինակ, **R. S. Gómez**, նշվ. աշխ., էջ 4:

¹³³ Տե՛ս, օրինակ, **Головко Л.В.** Материалы к построению сравнительного уголовно-процессуального права: источники, доказательства, предварительное производство // Труды юридического факультета. Кн. 11. – М.: Правоведение, 2009. Էջ 301, որտեղ խոսվում է Մադրիդի և Վիզոյի քաղաքապետարանների, Գալիսիի կառավարության կողմից քրեական հայց ներկայացնելու մասին:

¹³⁴ Տե՛ս, նույն տեղում, **J. P. GIL**, նշվ. աշխ. էջ 156:

¹³⁵ Պետք է նկատել, որ երկրորդ և երրորդ խմբի մեջ մտնող սուբյեկտները ոչ թե ընդհանրապես զրկված են իբրև մեղադրող հանդես գալու իրավունքից, այլ զրկված են միայն իբրև ժողովրդական մեղադրող հանդես գալու իրավունքից: Օրենսդրական կարգավորման վերլուծության հիման վրա Ջ.Գիլը նկատում է, որ վերջիններս իրավասու են իբրև մեղադրող հանդես գալ այն դեպքում, երբ հանցագործություն ուղղված է հենց իրենց կամ իրենց ընտանիքի անդամների դեմ: Տե՛ս, **J. P. GIL**, նշվ. աշխ., էջ 155:

գրկված են նաև նախահայրերը, հետնորդները, քույրերն ու եղբայրները (Իսպանիայի քր.դատ.օր. 103-րդ հոդված):

Մյուս կողմից՝ ժողովրդական մեղադրանքի ինստիտուտը ունի նաև այլ սահմանափակումներ. այդ կարգով չեն կարող հետապնդվել ռազմական հանցագործությունները և յուզենալ արդարադատության կարգով քննվող գործերը¹³⁶:

Եվ վերջապես՝ ժողովրդական մեղադրանքի գործողության մի այլ տեսակի սահմանափակում է մտցված բարձր դատարանների պրակտիկայով, որը ստացել է «Բոտինի դոկտրին» անվանումը: 2006թ. Իսպանիայի գերագույն դատարանը խոշոր չափերի հարկային խարդախության և փաստաթղթերի կեղծիքի մեջ մեղադրվող Է. Բոտինի գործով կայացրած որոշմամբ սահմանել է, որ այն դեպքում, երբ գործում պետական մեղադրողի հետ միաժամանակ առկա է նաև մասնավոր մեղադրող, և երկուսն էլ հրաժարվում են մեղադրանքն առաջ տանելուց, այդ դեպքում արդեն ժողովրդական մեղադրողը իրավասություն չունի մեղադրանքը միայնակ առաջ տանելու, և այդ դեպքում դատարանը, ելնելով մեղադրանքի սկզբունքից ու կաշկանդված լինելով նրանց այդ պահանջով, չի կարող շարունակել շարունակել դատավարությունը¹³⁷:

Ինչ վերաբերվում է ժողովրդական մեղադրանքի վերը նշված որոշակի սահմանափակումներին, ապա դրանք թերևս հետապնդում են մեղադրելու իրավունքի հնարավոր վտանգները (չարաշահում, անհիմն մեղադրանք և այլն) չեզոքացնելու նպատակ, և ժողովրդական մեղադրանքի աստիճանական վերացման նշաններ չեն պարունակում իրենց մեջ: Այս առումով հատկանշական է ժողովրդական մեղադրանքի և դրա հնարավոր վտանգների մասին Իսպանիայի գերագույն դատարանի 2005թ. նոյեմբերի 17-ին կայացրած որոշման դիտարկումը.

«նշմարիտ է, որ ժողովրդական հայցը գուցե և չարաշահվում է քաղաքական ռազմավարությունների և այլ միջոցների կոնտեքստում: Այնուամենայնիվ, դա օբյեկտիվորեն առանձին մի երևույթ է և չպիտի խոչընդոտի այն անձի դիրքին, ով այն (ժողովրդական մեղադրանքը – Ա.Ղ.) գործածում է սահմանադրական նպատակներին համապատասխան՝ արդյունավետորեն օժանդակելով իրավական համակարգի առավել էֆեկտիվ դառնալուն»¹³⁸:

Վերաձևակերպելով ասվածը՝ պետք է փաստել, որ ինստիտուտի իրացման ընթացքում առաջացող հնարավոր վտանգները, հիմք չեն դառնում այս ինստիտուտի վերացման համար. այն շարունակում է մնալ Իսպանիայի իրավական համակարգի կարևորագույն ինստիտուտներից մեկը:

Ընդհանրացնելով, պետք է փաստել, որ, ի տարբերություն մայրցամաքային քրեադատավարական համակարգի այլ երկրների, Իսպանիայում արդեն 1800-ականների սկզբներին գնահատվեց և սահմանորոշեց ամրագրվեց ժողովրդական մեղադրանքի ինստիտուտը, այն իր արտացոլումը գտավ նաև 1800-ականների վերջերից ընդունված ու մինչ օրս գործող քրեական դատավարության օրենքում: Ու չնայած ժողովրդական մեղադրանքի որոշակի սահմանափակումներին, Իսպանիայում արդյունավետ կերպով շարունակում է գործել այս ինստիտուտը՝ իր հերթին առանձնանալով մայրցամաքային համակարգի մեր կողմից քննարկված երկրներից իր լրիվությամբ ու ամբողջականությամբ:

Այսպիսով՝ ինչպես պարզ է դառնում մայրցամաքային քրեադատավարական համակարգի երկրների վերաբերյալ արված ուսումնասիրությունից, ժողովրդական մեղադրանքի ինստիտուտը առկա է նաև այս համակարգի մեջ մտնող երկրներում (Ֆրանսիա, Իսպանիա), ուստի այն չի կարելի համարել բացառապես անգլոամերիկյան քրեադատավարական համակարգին բնորոշ ինստիտուտ. այն «համատեղելի» է նաև մայրցամաքային քրեական դատավարությունում: Դեռ ավելին՝ ոչ միայն

¹³⁶ Տվյալ կարգավորումը սահմանող իսպանական օրենքներին կարելի է ծանոթանալ, օրինակ, **J. P. GIL**, նշվ. աշխ., էջ 157:

¹³⁷ Տե՛ս **R. S. Gómez**, նշվ. աշխ., էջ 6:

¹³⁸ Մեջբերումն ըստ **R. S. Gómez**, նշվ. աշխ., էջ 9:

«համաստեղելի» լինելու, այլև ժողովրդական մեղադրանքի «օբյեկտիվ անհրաժեշտության» գիտակցության մասին է վկայում 1800-1900թթ. մայրցամաքային իրավաբանների շրջանում ծայր առած քննարկումների ինստիտուտի ներդրման ուղղությամբ: **Սա մեկ անգամ ևս փաստում է, որ չի կարելի ժողովրդական մեղադրանքը հնեցված համարել: Եվ որ այն իրապես կարող է գործուն միջոց ծառայել հանրային շահի պաշտպանության համար (ինչպես օրինակ վկայում է Ֆրանսիական և իսպանական փորձը):**

Ինչ վերաբերվում է մայրցամաքային քրեադատավարական համակարգի այնպիսի երկրում, ինչպիսին Գերմանիան է, այս ինստիտուտի բացակայությանը, ապա դա ոչ թե վկայում է ընդհանրապես ինստիտուտի գերմանական քրեական դատավարության ներդրելու անհնարինության մասին, այլ կապված է ժողովրդական մեղադրանքով հնարավոր վտանգներ առաջացնելու գերմանացիների մտավախությունների հետ:

Սակայն, կարծում են, որ ցանկացած իրավունքին բնորոշ է դրա չարաշահման վտանգը և հետևաբար ժողովրդական մեղադրանքի ինստիտուտը չներդնելը զուտ դրա չարաշահման վտանգով պայմանաված չի կարելի արդարացված համարել, **այլ պետք է մշակել դրա չարաշահումը զուպող իրավական մեխանիզմներ (ինչպիսին, օրինակ, առկա են Իսպանիայում):**

Փաստելով, որ քննարկվող ինստիտուտը ընդհանրապես «համաստեղելի» է մայրցամաքային ավանդույթների հետ, պետք է անենք ընդհանուր եզրահանգում, որ հայկական քրեական դատավարությունում (որը ևս մայրցամաքային քրեադատավարական համակարգի մաս է կազմում) ինստիտուտի ներդրման համար չպետք է կատարել էական փոփոխություններ և հայկական «խառը» տիպի քրեական դատավարությունը փոխել «մրցակցային» անգլոսամերիկյան դատավարության. կարելի է, պահպանելով դատավարության «խառը» տիպը, ներդնել այն (ինչպես, արվել է, օրինակ, Ֆրանսիայում):

Մյուս կողմից, պետք է արձանագրել նաև այն, որ հայկական քրեական դատավարությունը իր արմատներով «սերում է» խորհրդային քրեադատավարական համակարգից, հետևաբար կարծում ենք,

որ հետազոտության լրիվության համար, պետք է ուսումնասիրել նաև խորհրդային քրեական դատավարությունում մասնավոր անձի կողմից իրականացվող հետապնդման, մասնավորապես՝ ժողովրդական մեղադրանքի կազմակերպան հետ կապված հարցերը:

2.4 Ժողովրդական մեղադրանքի կազմակերպումը խորհրդային դատավարությունում

Նախքան խորհրդային քրեական դատավարությունում ժողովրդական մեղադրանքի մասին խոսելը, անհրաժեշտ ենք համարում հպանցիկ անդրադառնալ մինչխորհրդային ժամանակաշրջանին, Ցարական Ռուսաստանի 1864թ. քրեական դատավարության կանոնադրությանը, ուրվագծել դրանում տեղ գտած՝ մասնավոր անձի կողմից իրականացվող հետապնդման կազմակերպման վերաբերյալ սահմանները, ինչը կնպաստի ավելի լավ հասկանալու նաև խորհրդային կարգերի հաստատմամբ տեղի ունեցող փոփոխությունները՝ խորամուխ լինելով հարցի քննարկման մեջ:

Ինչպես նշում է մինչհեղափոխական ականվոր գիտնական Ի.Յա.Ֆոյնիցկին, կանոնադրությունների կազմման ժամանակ (խոսքը նաև 1864թ. քրեական դատավարության կանոնադրության մասին է- Ա.Ղ.) արժարժվեց մասնավոր անձանց մեղադրելու իրավունք վերապահելու հարցը: Ընդ որում՝ քննարկվում էր անձանց մեղադրելու իրավունք վերապահել ոչ թե՛ կրած վնասների ուժով, այլ՝ իբրև ընդհանուր քաղաքացիական իրավունք¹³⁹: Այլ կերպ՝ ցարական կանոնադրությունների կազմման ժամանակ քննարկվում էր ժողովրդական մեղադրանքի ներդրման հնարավորության հարցը:

Սակայն, ժողովրդական մեղադրանքի ներդրման առաջարկը մերժվում է: Կանոնադրության հեղինակները գտնում էին, որ մեղադրանքի չարաշահման դեպքերի համար պետք էր լուրջ պատասխանատվություն նախատեսել, բայց միևնույն ժամանակ մտավախություն ունեին, որ այդպիսի պատասխանատվության սահմանման դեպքում էլ պատասխանատվության հանդեպ եղած վախը կվաներ անձանց մեղադրական գործունեության իրականացումից: Այդ իսկ պատճառով Կանոնադրության հեղինակները նախընտրեցին սահմանափակել մեղադրողների շրջանակը՝ այդպիսի իրավունք վերապահելով տուժողներին¹⁴⁰: Այսպիսով՝ ցարական քրեական դատավարության կանոնադրությամբ պաշտոնական, պետական մեղադրանքին զուգահեռ որոշ գործերով նախատեսվեց մասնավոր մեղադրանքը¹⁴¹, և մերժվեց ժողովրդական մեղադրանքի գաղափարը:

Սակայն մեղադրանքի կազմակերպման վերաբերյալ Ցարական Ռուսաստանի մոտեցումները արմատապես վերափոխվեցին արդեն խորհրդային կարգերի հաստատմամբ: Ինչպես Ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխությունն իր ազդեցությունն ունեցավ Ֆրանսիական դատավարության վրա, այնպես էլ Հոկտեմբերյան հեղափոխությունը չէր կարող իր հետքը չթողնել ռուսական քրեական դատավարության վրա: Մեղադրանքի կազմակերպման հարցում մոտալուտ փոփոխությունը երկար սպասեցնել չտվեց. արդեն 1917թ. նոյեմբերի 24-ին հրապարակված Դատարանի մասին դեկրետով (Դատարանի մասին դեկրետ №1) վերացվեց ցարական դատախազությունը: Դատախազության վերացումը, սակայն, չէր նշանակում դրա կողմից իրականացվող գործառույթի վերացում:

Քննարկվող դեկրետի 3-րդ կետում նշվում էր, որ անկախ սեռից իբրև մեղադրող թույլատրվում է հանդես գալ «ցանկացած չարատախազության քաղաքացու, ով օժտված է քաղաքացիական իրավունքներով»:

Այդպիսով՝ հեղափոխությամբ խորհրդային դատավարություն մուտք գործեց ժողովրդական մեղադրանքը. դատախազության բացակայության պայմաններում հանրային մեղադրանքը կազմակերպվեց ժողովրդական մեղադրանքի ձևով:

¹³⁹ Ст'ю Фойницкий И. Я. Курс уголовного судопроизводства. Том II (издание 3-е, пересмотренное и дополненное). - С.-Петербург, Сенатская типография, 1910, էջ 26:

¹⁴⁰ Նույն տեղում:

¹⁴¹ Ցարական օրենսդրությամբ նախատեսված մասնավոր մեղադրանքի գործերի կոնկրետ շրջանակը տե՛ս, օրինակ, **Квачевский А.** Об уголовном преследовании, дознании и предварительном исследовании преступлений по Судебным уставам 1864 года. Ч. 1: Теоретическое и практическое руководство.. СПб., 1866, էջ 254:

Արդարադատության ժողովրդական կոմիսար Պ.Ի.Ստուչկան, ով այդ դեկրետը կազմողներին էր, հետագայում հիշում էր.

«Մենք մերժեցինք նաև մեղադրողի՝ նախկին պետական մենիշխանությունը, և այդ դերը վերապահեցինք յուրաքանչյուր քաղաքացու, ով իրավասու է դատարանում հետապնդել ցանկացածին՝ ինչպես մասնավոր, այնպես էլ պաշտոնատար անձին, ով ինչ-որ մեղսագործություն է կատարել: Բռնանշման գործիք հանդիսացող նախկին պետությունը շահագրգռված էր բացառապես մեղադրանքով. նոր կարգին խորթ է այդ մոտեցումը, նրան առավել հետաքրքրում է պաշտպանությունը, քան մեղադրանքը: Եվ եթե նոր պետությունը դիմում է մեղադրողի օգնությանը, ապա նրան կփնտրի նույն շարքերում ինչ պաշտպանին: Մասնավոր մեղադրանքի գործերով, այսինքն՝ այն գործերով, որոնք կարող են ախարտվել կողմերի հաշտությանը քրեական գործը հարուցվում է տուժողի կողմից: Բոլոր մնացյալ հանցագործություններով, չբացառելով նաև այն հանցագործությունները, որոնք կատարվում են պաշտոնական գործունեության ընթացքում, յուրաքանչյուր՝ ինչպես մասնավոր, այնպես էլ պաշտոնատար անձ կամ կառավարական մարմին ունեն մեղադրելու իրավունք: Մեզ մոտ մենիշխանությունը, այսինքն՝ պետական մեղադրողի (դատախազ) կողմից մեղադրելու բացառիկ իրավունքը վերջնականապես վերացել է»¹⁴²:

Այդ նույն ժամանակներում միլիցիայի աշխատակիցների սակավության պայմաններում սկսում են հնչել առաջարկներ հանցագործությունների յուրահատուկ տեսակների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման նպատակով հասարակական միավորումներ կազմակերպելու մասին: Այս միավորները իրենց առջև պիտի ունենային առանձին հանցագործությունների դեմ պայքարի նպատակ, այդ թվում՝ քրեական հետապնդման հարուցման եղանակով¹⁴³:

Ինչպես նկատում ենք, առնվազն Հոկտեմբերյան հեղափոխության սկզբնական շրջանում ոչ միայն ներդրվեց ժողովրդական մեղադրանքի ինստիտուտը, այլև դրա զարգացմանն ուղղված միջոցառումներ էին իրականացվում. քրեական հետապնդման արդյունավետության բարձրացման նպատակով, փորձ էր արվում համակարգային մոտեցում ցուցաբերել ժողովրդական մեղադրանքի կազմակերպմանը:

Սակայն, ժողովրդական մեղադրանքի այսպիսի խոստումնալից սկիզբը չունեցավ հարատև զարգացում խորհրդային քրեական դատավարությունում: Ընդհակառակը՝ իշխանության աստիճանական ամրապնդմանը զուգահեռ սկսվեց ժողովրդական մեղադրանքի ինստիտուտի գոյության հետհաշվարկը:

Կարճ ժամանակ անց արդեն՝ Գատարանի մասին 2-րդ դեկրետով (1918թ. մարտի 7 (22 փետրվարի)) քայլ կատարվեց ժողովրդական մեղադրանքի «պետականացման» ուղղությամբ:

Այդ դեկրետով նախատեսվում էր, որ մեղադրանքի ու պաշտպանության գործառույթի իրականացման համար Աշխատավորների, Հողագործների և դեպուտատների խորհուրդներում պետք է ստեղծվեին հատուկ կոլեգիաներ: Կոլեգիաները ձևավորվում էին հենց խորհուրդների կողմից ընտրված անձանցից, ովքեր իրենց նվիրում էին իրավապաշտպանությանը: *Եվ միայն այդ*

¹⁴² Стучка П.И. 13 лет борьбы за революционно-пролетарскую теорию права. М., 1931, էջ 59, մեջբերումն ըստ Գուշև, В. Е., Александров, А. С. Народное обвинение в уголовном суде. Н.Новгород: НЮИ МВД РФ, 1998 (http://kalinovsky-k.narod.ru/b/aleksandrov_1998/5.html):

¹⁴³ Ст'и Народный суд //Известия ВЦИК. № 77 (341) от 19.04.18 г, մեջբերումն ըստ Գուշև, В. Е., Александров, А. С. Народное обвинение в уголовном суде. Н.Новгород: НЮИ МВД РФ, 1998 (http://kalinovsky-k.narod.ru/b/aleksandrov_1998/5.html):

կոլեգիաներում ընդգրված անձինք էին, ովքեր իրավունք էին ստանում դատարաններում հանդես գալու և արդեն նաև վճարովի հիմունքներով (հոդվածներ 24-26-րդ հոդվածներ):

Ինչպես նկատում ենք, դատարանի մասին 2-րդ դեկրետով կոլեգիաների ստեղծմամբ արդեն սկսում էր մեղադրողների և պաշտպանների առավել կազմակերպված կառույց ձևավորվել: Եվ այն կարգավորումը, որ հնարավորություն էր տալիս այդ կոլեգիաներում գործող անձ մեղադրողներին վճար ստանալ, նրանց աստիճանաբար «դարձնում էր» պետական ծառայող: Ու եթե դատարանի մասին 1-ին դեկրետով ցանկացած քաղաքացի իրավունք ուներ մեղադրելու, արդեն դատարանի մասին 2-րդ դեկրետով մեղադրելու իրավունք ունեցող անձանց շրջանակը սահմանափակվում էր:

Այլ կերպ ասած ժողովրդական մեղադրողը «պետականացվում էր», ժողովրդական մեղադրանքը վերածվում պետական մեղադրանքի:

Ընդ որում, ինչպես պնդում է դատավարագետ Մ.Լ.Շիֆմանը, անձամբ ինքը Վ.Ի.Լենինն էր խմբագրել դատարանի մասին 2-րդ դեկրետի նախագծային այն կարգավորումը, որը թույլ էր տալիս ցանկացած չարատավորված քաղաքացու՝ իբրև մեղադրող և պաշտպան հանդես գալու: Լենինը ջնջելով նախագծի այդ հատվածը. մտցրել էր կոլեգիաների կազմում ձևավորվող մեղադրողներից ու պաշտպաններից մեղադրանք ու պաշտպանություն իրականացնելու մոտեցումը¹⁴⁴:

Սակայն, պետք է արձանագրել, որ Դատարանի մասին 2-րդ դեկրետով խիստ սահմանափակվում, բայց ամբողջությամբ չէր վերացվում ժողովրդական մեղադրանքի ինստիտուտը:

Այդ դեկրետի 28-րդ հոդվածով, բացի նշված կոլեգիաների մեղադրողներից ու պաշտպաններից հնարավորություն էր վերապահվում նաև դատական նիստին ներկա գտնվողներից մեկական անձի՝ իբրև մեղադրող և պաշտպան հանդես գալու:

Այդպիսով, ժողովրդական մեղադրանքի որոշ սահմանափակ կիրառության հնարավորություն դեռևս վերապահվում էր քննարկվող դեկրետով, թեև ակնհայտ էր՝ այդպիսի նեղ շրջանակներում ժողովրդական մեղադրանքի կիրառման օրենսդրական հնարավորությունը առավել ձևական, հոչակագրային բնույթ էր ստնում: Այդ է պատճառը, որ գործնականում Դատարանի մասին 2-րդ դեկրետի ընդունումից հետո մեղադրանքը գլխավորապես պաշտպանվում էր կոլեգիաների անդամների կողմից¹⁴⁵:

Հաջորդ և «մահացու» հարվածը ժողովրդական մեղադրանքին հասցվեց արդեն «ՌԽՖՍՀ ժողովրդական դատարանի մասին» դեկրետով (1918թ. նոյեմբերի 30-ին ընդունված):

Դրանով մեղադրանքի կազմակերպումն ամբողջությամբ իրականացվում էր կոլեգիաների կազմում ընդգրկված պաշտոնատար անձ-մեղադրողների միջոցով (ՌԽՖՍՀ ժողովրդական դատարանի մասին դեկրետի 40-42-րդ հոդվածներ): Այստեղ արդեն նշված չէր հանրության ներկայացուցիչների միջոցով (պաշտոնատար անձ չհանդիսացող ներկայացուցիչների) մեղադրանքի իրականացման հնարավորության մասին (ինչպես, Դատարանի մասին 2-րդ դեկրետն էր նախատեսում): Թերևս այդ է պատճառը, որ հարցի հետազոտությամբ զբաղվող դատավարագետները¹⁴⁶ այդ դեկրետի ընդունմամբ արձանագրում են ժողովրդական մեղադրանքի գոյության դադարեցումը:

¹⁴⁴ Տե՛ս Շիֆման Մ.Լ. К вопросу о развитии обвинения в советском суде (К 25-летию советской прокуратуры) // Советское государство и право. – М., 1947, № 5, էջ 35:

¹⁴⁵ Նույն տեղում:

¹⁴⁶ Տե՛ս, օրինակ, Курс уголовного процесса / Под ред. д.ю.н., проф. Л.В. Головки. – 2-е изд., испр. – М.: Статут, 2017. էջ 322, Гушев, В. Е., Александров, А. С. Народное обвинение в уголовном суде. Н.Новгород: НЮИ МВД РФ, 1998 (http://kalinovsky-k.narod.ru/b/aleksandrov_1998/5.html):

Այսպիսով՝ հոկտեմբերյան հեղափոխության շնորհիվ «ծնված» մեղադրանքի նոր տեսակը՝ Ժողովրդական մեղադրանքը, հետևողական քայլերով խիստ սահմանափակվելով, մեկ տարվա ընթացքում հասավ իր տրամաբանական վախճանին՝ ընդհանրապես վերացվեց:

Սակայն սրանով չավարտվեց Ժողովրդական մեղադրանքի պատմությունը խորհրդային իրավունքում: Դրա վերացումից կարճ ժամանակ անց այն նորից վերակենդանացվեց ինչպես Խորհրդային Ռուսաստանի, այնպես էլ Խորհրդային Հայաստանի քրեական դատավարության առաջին օրենսգրքերով:

Այսպես, օրինակ, ՀԽՍՀ 1923 թ. քր. դատ. օր.-ի 8-րդ հոդվածը սահմանում էր, որ «Դատարաններում ամբաստանող (մեղադրող-Ա.Ղ.) է հանդիսանում դատախազությունը¹⁴⁷, տուժողը կամ **այլ անձինք միայն օրենքով սահմանված դեպքերում ամբաստանող լինելու իրավունք ունեն**» (ընդգծումն իմն է՝ Ա.Ղ.): Նույն օրենսգրքի 50-րդ հոդվածը, վերոնշյալ կարգավորումները հստակեցնելով, նշվում էր. «Գործին իբրև մեղադրող կարող են մասնակցել դատախազության անդամները, տուժողը, երբ օրենքը այդ իրավունքը վերապահում է նրան (մասնավոր մեղադրանքի գործերով-Ա.Ղ.) **նաև Արհեստակցական միությունների**, աշխատանքի տեսչի լիազորները, Բանվորա-Գյուղացիական, Տեխնիկական, Պարենավորման, Առողջապահական և կամ այլ Տեսչությանց ներկայացուցիչները, յուրաքանչյուրն՝ իր տեսչության վերաբերող գործերի համար: **Այլ անձանց թույլ է տրվում գործին մասնակցել իբրև մեղադրողներ՝ միայն դատարանի իր դատական կամ տնօրինական նիստում տվյալ գործերի համար արած հատուկ որոշմամբ**» (ընդգծումներն իմն են՝ Ա.Ղ.):

Նկատենք, որ ՌԽՖՍՀ 1922թ. քր.դատ.օր.-ի 54-րդ հոդվածը նույնաբովանդակ կարգավորում էր պարունակում:

Ընդ որում՝ քրեադատավարական գիտության մեջ արձանագրվում էր այն հանգամանքը, որ քրեադատավարական օրենսգրքերը չէին սահմանում այն, թե ինչ կերպ պետք է հարաբերվեն միմյանց հետ պետական և հասարակական մեղադրողները, ու նրանց միջև հարաբերակցությունը սահմանվում էր մի շարք հրահանգներով, շրջաբերականներով¹⁴⁸, որոնց համապատասխան էլ առանձնացվում էին հասարակական մեղադրողների տարբեր տեսակներ.

1. Մեղադրողներ, որոնց թույլ էր տրվում հանդես գալ իբրև մեղադրող դատարանի որոշմամբ,
2. Մեղադրողներ, որոնք իրավասու էին դատարանում հանդես գալ դատախազի օրդերով¹⁴⁹,
3. Տարատեսակ կազմակերպություններ, որոնք իրավասու էին հանդես գալ առանց դատախազի օրդերի և դատարանի հատուկ որոշման կայացման:¹⁵⁰

Այս առումով Մ.Լ. Շիֆմանը նկատում է, որ սովետական դատախազության կառուցման սկզբնական շրջանում հասարակական մեղադրողների ինստիտուտը նշանակալից և դրական դեր

¹⁴⁷ Արդեն 1923թ. դատախազությունը ստեղծված էր:

¹⁴⁸ Տե՛ս **Памятники российского права. В 35 т. Т.29.** Уголовно-процессуальные кодексы РСФСР: учебно-научное пособие/ под общ. ред. докт. юрид. наук, проф. **В. А. Лазаревой**, докт. юрид. наук, проф. **Р. Л. Хачатурова**. – М.: Юрлитинформ, 2016, էջեր 90-93:

¹⁴⁹ Գիտության մեջ այս տեսակի մեղադրողը դիտարկվում էր իբրև մեղադրող, ում դատախազությունը պատվիրակել է իր մեղադրելու լիազորությունը, ըստ այդմ էլ՝ այդպիսի մեղադրողը դիտարկվում էր ոչ այնքան որպես հասարակական (Ժողովրդական), այլ առավելապես իբրև պետական մեղադրող: Հենց այդ պատճառով այս տեսակ «հասարակական» մեղադրողը այլ հասարակական մեղադրողներից ավելի արտոնյալ վիճակի ուներ (այս մասին առավել մանրամասն տե՛ս **Памятники российского права. В 35 т. Т.29.** Уголовно-процессуальные кодексы РСФСР: учебно-научное пособие/ под общ. ред. докт. юрид. наук, проф. **В. А. Лазаревой**, докт. юрид. наук, проф. **Р. Л. Хачатурова**. – М.: Юрлитинформ, 2016, էջ 91, տե՛ս, նաև, **Шифман М.Л.** նշվ.աշխ., էջ 43):

¹⁵⁰ Տե՛ս, **Памятники российского права. В 35 т. Т.29.** նշվ.աշխ., էջ 91:

կատարեց օրենքի և գոյություն ունեցող հասակական կարգի պահպանման հարցում հանրային-իրավական պարտականության հանրային գիտակցության ձևավորման գործում¹⁵¹:

Սակայն խորդիրդային իշխանության և մասնավորապես դատախազության «ամրապնդմամբ» ժողովրդական մեղադրողի ինստիտուտը մեղադրանքի կազմակերպման **ինքնուրույն ձևից սկսեց** վեր ավել դատախազի կողմից հսկվող, կախյալ ու առավելապես ձևական նշանակություն ունեցող, քան գործնական դեր կատարող մի ինստիտուտի, որն արդեն 1930-ականներին պետք է ունենար իր երկրորդ վախճանը:

1934թ. կայացած դատական-դատախազական աշխատակիցների առաջին համամիութենական խորհրդակցությունում խիստ քննադատության է ենթարկվում ժողովրդական մեղադրանքի ինստիտուտը, նշվում է, թե որպես այդպիսին այն բացակայում է, չկա հասարակական մեղադրողների կազմակերպված ինստիտուտ և որ տեղ են գտնում պատահաբար ընտրված մեղադրողների ելույթներ, որոնք անհրաժեշտ հրահանգավորում չեն ստանում դատախազության աշխատակիցների կողմից¹⁵²: Եվ արդեն 1939թ. ապրիլի 16-ին ԽՍՀՄ դատախազ Ա.Յա. Վիշինսկիու հրամանով փաստացի վերացվում է ժողովրդական մեղադրանքի ինստիտուտը: Հրամանում մասնավորապես նշվում էր, որ.

այսուհետ դատախազության օժանդակող հասարակական խմբերի անդամների գործունեության հիմնական բովանդակությունը պետք է դառնա կատարվող կամ նախապատրաստվող հանցագործությունների մասին դատախազությանը ժամանակին տեղեկացնելը¹⁵³.

Ինչպես նշում է դատավարագետ Ն.Ե.Պետրովան՝ այդպիսի հրահանգը ենթակա դատախազների կողմից ընկալվեց իբրև **դատավարական գործունեությունից հասարակությանը մեկուսացնելու հանձնարարություն**, և այդ ժամանակից դադարեցին քրեական գործերով հասարակական մեղադրողների մասնակցությունը¹⁵⁴:

Այդպիսով՝ 1939թ. ԽՍՀՄ-ում երկրորդ անգամ վերացվեց ժողովրդական մեղադրանքի ինստիտուտը: Սակայն, ինչպես և նախորդ անգամ, վերացումը վերջնական չէր. արդեն 1960-ականների ընդունված քրեական դատավարության օրենսգրքերով (ինչպես ՀԽՍՀ, այնպես էլ ՌԽՖՍՀ) այն նորից «վերածնվեց»:

ՀԽՍՀ 1961թ. քր.դատ.օր-ով նախատեսվեց հասարակական մեղադրողի ինստիտուտ: 241-րդ հոդվածում սահմանվում էր. «Քրեական գործերի դատավարությանը թույլատրվում է հասարակական կազմակերպությունների և աշխատավորական կոլեկտիվների ներկայացուցիչների մասնակցությունը: Դատարանը իր որոշմամբ կարող է հասարակական կազմակերպությունների և աշխատավորական կոլեկտիվների ներկայացուցիչներին թույլատրել մասնակցելու քրեական գործերի դատաքննությանը որպես հասարակական մեղադրողներ կամ հասարակական պաշտպաններ»: Նույն հոդվածով նաև սահմանվում էին հասարակական մեղադրողի լայն իրավունքներ՝ ապացույցներ ներկայացնելու, մասնակցելու ապացույցների հետազոտմանը, դատարանի առաջ միջնորդություններ հարուցելու և բացարկներ հայտնելու, մասնակցելու դատական վիճարանություններին՝ շարադրելով դատարանին մեղադրանքը ապացուցված լինելու, ամբաստանյալի և նրա կատարած արարքի հանրորեն վտանգավորության մասին կարծիք:

¹⁵¹ Տե՛ս Шифман М.Л. նշվ.աշխ., էջ 43:

¹⁵² Տե՛ս Резолюция 1 Всесоюзного совещания судебно-прокурорских работников. М.: Гос. изд-во Советское законодательство, 1934, էջ 23-24:

¹⁵³ Տե՛ս Ураков Л.И. Общественное обвинение и общественная защита. Юрид.лит. М. 1964, էջ 17:

¹⁵⁴ Տե՛ս Петрова Н.Е. Частное и субсидиарное обвинение. Самара: Изд-во «Самарский университет», 2004, էջ 107:

Հասարակական մեղադրողը կարող էր նաև նկատառումներ արտահայտել ամբաստանյալի հանդեպ քրեական օրենքի և պատժաչափի կիրառման առթիվ և գործի այլ հարցերի վերաբերյալ: **Ընդ որում՝ նա նաև ուներ իրավունք հրաժարվելու մեղադրանքից**, եթե դատաքննության տվյալները դրա համար հիմքեր էին տալիս:

Չնայած հասարակական մեղադրողի այսպիսի իրավունքներին, պետք է նկատել, որ այս ինստիտուտը լայն կիրառություն չտեսցավ, ինչը թերևս պայմանավորված էր հասարակական մեղադրողի պետական մեղադրողից խիստ կախվածության մեջ լինելու հանգամանքով:

Հասարակական մեղադրողը իրավասու չէր կազմելու մեղադրական եզրակացություն, չէր մասնակցում գործի մինչդատական քննությանը, որ նյութական մեղադրանքի հետ կապված դիտողություններ կարողանար ներկայացնել, հետևաբար ուզած-չուզած, պաշտպանում էր արդեն պետական մեղադրողի ձևավորված նյութական մեղադրանքը, այն էլ՝ միայն առաջին ատյանում, քանի որ դատական ակտի վերանայման վարույթում մասնակցելու հնարավորություն չուներ¹⁵⁵: Այդպիսի պայմաններում հասարակական մեղադրողը զուտ «դեկորատիվ»¹⁵⁶ և կախյալ դեր էր կատարում խորհրդային դատավարությունում, թեև ժողովրդական մեղադրանքը հռչակվում էր իբրև պետական մեղադրանքով «չկլանվող» և դրան «գուզահեռվող» ինստիտուտ¹⁵⁷: Հենց դա է պատճառը, որ գործնականում գրեթե զրոյանում է ինստիտուտի արդյունավետությունը:

Այսպիսով՝ խորհրդային դատավարությունում ժողովրդական մեղադրանքի կազմակերպման պատմության ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգելու, որ նախ՝ ինստիտուտը հայտնի է եղել նույնիսկ խորհրդային դատավարությանը:

Երկրորդ՝ ներդրումից հետո ինստիտուտի շատ արագ սահմանափակումները վկայում են այն մասին, որ գնալով հզորացող խորհրդային իշխանությունը չէր կարող «հանդուրժել» ժողովրդի ձեռքում իրական հզոր գործիքի առկայություն: Հենց այդ է պատճառը, որ հետևողորեն խորհրդային դատավարությունում ինստիտուտը արագորեն խիստ սահմանափակվում է, ինչպես ներկայացվեց վերևում՝ նույնիսկ վերացվում:

Մյուս կողմից՝ սեփական քրեական դատավարությունը արտաքուստ «ժողովրդավարական» պատկերելու միտումով պայմանավորված խորհրդային իշխանությունների կողմից՝ ժողովրդական մեղադրանքի «վերակենդանացումը» հանգեցնում է նրան, որ այն վերածվում է խիստ ձևական բնույթ կրող, գործնականում անօգտակար ինստիտուտի: Այլ կերպ ասած՝ այն ամբողջությամբ ձևափոխվում է, քանի որ «դեկորատիվ» բնույթը ոչ թե ժողովրդական մեղադրանքի էությունով է պայմանավորված, այլ խորհրդային իշխանությունների հետևողական քայլերով:

Հետևաբար հայկական քրեական դատավարությունում ժողովրդական մեղադրանքը կազմակերպելիս պետք է, հաշվի առնելով խորհրդային ժամանակաշրջանի բացասական փորձը, ժողովրդական մեղադրողին, ոչ թե վերածել «դատախազի» կամակատարի, դատախազին հանցագործության մասին միայն «հարողորմներ ներկայցնողի», կախյալ սուբյեկտի, այլ իրական իրավասություններով օժտված դատավարության անկախ սուբյեկտի, որպեսզի ինստիտուտի ներդրմամբ հնարավոր լինի իրական արդյունքների հասնել:

¹⁵⁵ Թեև պետք է արձանագրել, որ որոշ դեպքերում պրակտիկայում հանդիպել են դեպքեր, երբ, օրենսդրական կարգավորմանը հակառակ, հասարակական մեղադրողը մասնակցել է գործի վերանայմանը: Տե՛ս **Рахунов Р.Д.** Участники уголовно-процессуальной деятельности по советскому праву. М., госюриздат, 1961, էջ 236:

¹⁵⁶ Պետական մեղադրանքից բացի մեղադրանքի այլ ձևերի, այդ թվում ժողովրդական մեղադրանքի առկայությունը խորհրդային հեղինակների կողմից հռչակվում էր իբրև խորհրդային քրեական դատավարությունում **իրական ժողովրդավարության ցուցիչ**, տե՛ս, օրինակ, **Альперт С.А.**, Обвинение в советском уголовном процессе, учебное пособие, Харьков, 1974, էջ 29:

¹⁵⁷ Նույն տեղում:

3. Հնարավոր է արդյոք, և ինչպե՞ս (ի՞նչ չափաբաժինով) ներդնել ժողովրդական մեղադրանքի ինստիտուտը հայկական քրեական դատավարությունում

3.1 Ի՞նչ կերպ է քրեական դատավարության գործով օրենսգրքով և նախագծով կազմակերպվում մեղադրանքը. մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքի (ոչ պրոֆեսիոնալ մեղադրանքի) կազմակերպման ինչպիսի հնարավորություններ են ընձեռում դրանք:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքի (ոչ պրոֆեսիոնալ մեղադրանքի) կազմակերպումը:

Անկախացումից, մինչ 1999¹⁵⁸թ. ՀՀ-ում գործել է ՀԽՍՀ 1961թ. քր.դատ.օր-ը, հետևաբար էլ պետք է փաստենք, որ ժողովրդական մեղադրանքը, թեև ձևականորեն, խիստ սահմանափակումներով, այնուամենայնիվ փաստացի գոյություն է ունեցել մինչ 1998թ., մինչ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ընդունումը:

Ավելին, եթե նախորդ օրենսգրքով պետական մեղադրանքին զուգահեռ ոչ պրոֆեսիոնալ մեղադրանքը կարող էր իրացվել **ինչպես ժողովրդական մեղադրանքի ձևով** (լրացնող ժողովրդական մեղադրանքի ձևով), այնպես էլ **մասնավոր մեղադրանքի** (ինչպես հիմնական մասնավոր մեղադրանքի, այնպես էլ լրացնող մասնավոր մեղադրանքի տեսակներով) ¹⁵⁹, ապա արդեն 1998թ. ընդունված քր.դատ.օր-ը փաստացի քայլ կատարվեց պետական մեղադրանքի առավել ամրապնդման ուղղությամբ:

Բանն այն է, որ գործող քր.դատ.օր-ի կարգավորումներով ոչ միայն ամբողջությամբ վերացվեցին ժողովրդական մեղադրանքի ինստիտուտի վերջին նշույլները, այլ նաև՝ վերացվեց հիմնական մասնավոր մեղադրանքի իրականացման հնարավորությունը: Սակայն, եթե առաջինը՝ ժողովրդական մեղադրանքը «վերացվեց» բացահայտ կերպով, ապա երկրորդը՝ «քողարկված»՝ «պատրանք» ստեղծելով դրա շարունակական գոյության վերաբերյալ:

Փորձենք պարզաբանել ասվածը:

«Քողարկումը» սկսվեց հենց սկզբից՝ գլխի վերնագրից: Քր.դատ.օր-ի 4-րդ գլուխը ստացավ «*Քրեական հետապնդումը եւ դրա տեսակները*» վերտառությունը: *Տվյալ գլխում տեղ գտած 33-րդ հոդվածով էլ սահմանվում էր, որ* կատարված հանցագործության ծանրությունից և բնույթից ելնելով՝ քրեական դատավարությունում հետապնդումն իրականացվում է **հանրային և մասնավոր** կարգով: Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանվեց, որ քր.դատ.օր-ի 183-րդ հոդվածով նախատեսված գործերը համարվում են մասնավոր մեղադրանքի գործեր (քր.դատ.օր-ի 33-րդ հոդվածի 2-րդ մաս), իսկ մնացած բոլոր հանցագործությունների վերաբերյալ գործերը հանդիսանում են հանրային մեղադրանքի գործեր (քր.դատ.օր-ի 33-րդ հոդվածի 3-րդ մաս):

¹⁵⁸ Գործող քր.դատ.օր-ը ընդունվել է 01.07.1998թ., ուժի մեջ մտել 12.01.1999թ.:

¹⁵⁹ Մասնավոր մեղադրանքը իր հերթին 1961թ. ՀԽՍՀ քր.դատ.օր-ով կարող էր իրականացվել ինչպես **հիմնական մասնավոր մեղադրանքի** ձևով՝ երբ որոշակի շրջանակ գործերով (ՀԽՍՀ 1961թ. քր.դատ.օր-ի 102-րդ հոդվածով նախատեսված գործերով) կարող էր մինչդատական վարույթ ընդհանրապես չիրականացվել (ՀԽՍՀ 1961թ. քր.դատ.օր-ի 102-րդ, 232-րդ, 244-րդ, 250-րդ, 267-րդ, 286-րդ հոդվածներ): Այդ դեպքում մեղադրանքը պաշտպանում էր տուժողը կամ նրա ներկայացուցիչը **անմիջականորեն** (ՀԽՍՀ 1961թ. քր.դատ.օր-ի 48-րդ հոդվածի 3-րդ պարբերություն):

Մյուս կողմից 1961թ. օրենսգրքում մասնավոր մեղադրանքը կազմակերպվում էր նաև **լրացնող մասնավոր մեղադրանքի** ձևով՝ երբ 102-րդ հոդվածում թվարկված գործերը, թեև հարուցվում էին տուժողի կողմից, սակայն այդ գործերի կարևորությունից, հասարակական նշանակությունից ելնելով՝ «պետական և հասարակական շահերի կամ քաղաքացիների իրավունքների պաշտպանության» նպատակով դատախազը ներգրավում էր գործի քննությանը: Նշված դեպքում տուժողը չէր գրկվում **մեղադրանքի պաշտպանության իր իրավունքից**, սակայն մեղադրյալի հետ հաշտության դեպքում գործը չէր կարճվում (ՀԽՍՀ 1961թ. քր.դատ.օր-ի 102-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ պարբերություններ):

Բացի այդ՝ քրեական դատավարության հիմնական հասկացությունները սահմանող հոդվածում (քր.դատ.օր-ի 6-րդ հոդված) քրեական հետապնդման հասկացությունը սահմանվում էր որպես բոլոր այն դատավարական գործողությունների ամբողջություն «...որոնք իրականացնում են քրեական հետապնդման մարմինները, **իսկ սույն օրենսգրքով** (քր.դատ.օր-ով՝ Ա.Ղ.) **նախատեսված դեպքերում տուժողը՝** նպատակ ունենալով բացահայտել քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարած անձին...» (քր.դատ.օր-ի 6-րդ հոդվածի 17-րդ կետ):

Նման կանոնակարգումներով «փորձ արվեց» (ու թերևս բարեհաջող փորձ) ստեղծել այնպիսի պատկեր, կարծես օրենսգրքում դեռ պահպանվել է հիմնական մասնավոր մեղադրանքը, իբրև թե որոշ գործերով տուժողը հանդես է գալիս որպես հիմնական մասնավոր մեղադրող:

Սակայն, քր.դատ.օր-ի առավել խորագնին ուսումնասիրությունը, թույլ է տալիս մեզ փաստել հակառակի մասին, այն է՝ ներկայիս կարգավորումներում հիմնական մասնավոր մեղադրանքը վերացված է:

Բանն կայանում է նրանում, որ քր.դատ.օր-ի 183-րդ հոդվածում արդեն օրենսդիրը խոսում է միայն տվյալ հոդվածում թվարկված հանցագործություններով **գործերի հարուցումն ու դրա հետագա ընթացքի տուժած անձի կամքից կախվածության մեջ դնելու մասին միայն:**

Այսպես՝ քր.դատ.օր-ի 183-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասով... 242-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ **գործերը հարուցվում են** ոչ այլ կերպ, **քան տուժողի բողոքի հիման վրա**, և կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի հետ նրա հաշտվելու դեպքում **ենթակա են կարճման** (ընդգծումն իմն է-Ա.Ղ.):

Ընդ որում, ի տարբերություն ՀԽՍՀ 1961թ. քր.դատ.օր-ի կարգավորման, գործող օրենսգիրքը առանց բացառության բոլոր գործերով պարտադիր է նախաքննությունը (քր.դատ.օր-ի 188-րդ հոդվածի 1-ին մաս), և հաշվի առնելով որ նախաքննությունը կատարվում է միայն քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելուց հետո (քր.դատ.օր-ի 192-րդ հոդվածի 1-ին մաս), պետք է փաստենք, որ ներկա օրենսգրքի պայմաններում առանց բացառության բոլոր գործերով պարտադիր է մինչդատական վարույթը՝ և՛ քրեական գործի հարուցման, և՛ նախնական քննության փուլը:

Մյուս կողմից, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ քրեական գործ հարուցելու լիազորություն ունեն միայն **հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը** (քր.դատ.օր-ի 185-րդ հոդվածի 1-ին մաս) ստացվում է մինչդատական վարույթի պարտադիր լինելու պայմաններում, քր.դատ.օր-ի 183-րդ հոդվածով նախատեսված հանցագործություններով՝ **մասնավոր մեղադրանքի գործերով ևս քրեական գործ հարուցում են միայն հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը:**

Այս գործերով վարույթի յուրահատկությունը կայանում է նրանում, որ հանցագործությունից տուժողի բողոքը հանդիսանում է **պարտադիր պայման** քրեական գործի հարուցման համար : Այլ կերպ ասած՝ գործ հարուցելու լիազորություն ունեցող քննիչը, հետաքննության մարմինը և դատախազը նշված կատեգորիայի գործերի հարուցման համար, որպես կանոն¹⁶⁰, պետք է նախապես ստացած լինեն տուժողի բողոքը:

¹⁶⁰ ՀՀ վճռաբեկ դատարանը անմեղության կանխավարկածի և արդար դատաքննության իրավունքի լույսի ներքո գնահատելով քր.դատ.օր-ում տեղ գտած կարգավորումը, ըստ որի մասնավոր մեղադրանքի գործերով տուժողի (դիմողի) բողոքի բացակայությունը բացառում է քրեական գործի հարուցումը, անկախ ենթադրյալ հանցանք կատարած անձի համաձայնությունը ստանալուց, նշել է, որ նման կարգավորումը հակասում է «... հանդիսանում է անմեղության կանխավարկածի սկզբունքի և արդար դատաքննության իրավունքի խախտում... Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու հարցը լուծելիս վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է հաշվի առնել ենթադրյալ հանցանք կատարած անձի դիրքորոշումը: **Այն դեպքում, երբ մասնավոր հետապնդման գործերով անձն առարկում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով վարույթի դադարեցման դեմ, անկախ դիմողի (տուժողի) բողոքի բացակայության հանգամանքից, գործի վարույթը պետք է շարունակվի սովորական կարգով՝** հնարավորություն տալով ենթադրյալ հանցանք կատարած անձին արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի առջև ապացուցել իր անմեղությունը» (տե՛ս Վճռաբեկ դատարանի 2014թ. մարտի 28-ի թիվ ԾԴ/0012/1/13 որոշման 17-18-րդ կետեր):

Պետք է նկատենք, որ այդ գործերով ձևական առումով քրեական հետապնդումը նույնպես հարուցվում է քրեական հետապնդման մարմնի (հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի) կողմից (քր.դատ.օր-ի 6-րդ հոդվածի 18-րդ կետ), գործով ապացույցներ հավաքելու լիազորությունը վերապահվում է վարույթ իրականացնող մարմին:

Ինչ վերաբերվում է մյուս յուրահատկությանը՝ հաշտության դեպքում գործի կարճմանն ու հետապնդման դադարեցմանը, ապա տվյալ գործերով տուժողի և կասկածյալի (մեղադրյալի) հաշտվելը հանդիսանում է գործի կարճման և քրեական հետապնդման դադարեցման **հիմք** (քր.դատ.օր-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ): Պետք է արձանագրենք նաև, որ կողմերի **հաշտությունը հանդիսանում է քրեական և քրեական գործի վարույթի կարճման հիմք, իսկ գործի կարճմանն ու հետապնդման դադարեցման լիազորությունը այդ գործերով շարունակում է մնալ վարույթն իրականացնող մարմնինը**: Ընդ որում՝ որոշ դեպքերում, անգամ հաշտության առկայությունը չի արգելակում վարույթի հետագա ընթացքը և քրեական հետապնդման իրականացումը պետական մարմնի կողմից¹⁶¹: Մա մեկ անգամ ևս ընդգծում է մասնավոր մեղադրանքի գործերում՝ տուժողի **հիմնական մասնավոր մեղադրող չլինելու հանգամանքը**: Մասնավոր մեղադրանքի գործերով նույնպես քրեական հետապնդման իբրև **հիմնական մեղադրող հանդես է գալիս պետական մարմինն ու պաշտոնատար անձը, վերջիններս են հարուցումն ու իրականացնում այն՝ անկախ քրեական հետապնդմանը տուժողի ակտիվ կամ պասիվ մասնակցությունից**:

Մյուս կողմից սա արդյո՞ք նշանակում է, որ քր.դատ.օր-ի այսօրվա կարգավորումներով ընդհանրապես բացակայում է ոչ պրոֆեսիոնալ մեղադրանքը, արդյո՞ք տուժողն ընդհանրապես չի մասնակցում մեղադրանքին:

«Տուժողի» այսօրվա օրենսդրական կարգավիճակն այնպիսին է, որ թերևս կարելի է նրան համարել իբրև «լրացնող» մեղադրող:

Քանի որ տուժողն օրենքի կողմից օժտվել է այնպիսի իրավունքներով, որոնցով նրան հնարավորություն է տրված մասնակցելու քրեական հետապնդմանը (ընդ որում բոլոր գործերով թե՛ մասնավոր, թե՛ հանրային մեղադրանքի գործերով), մերկացնելու հանցանք կատարած անձին, օժանդակելու պետական մարմնի կողմից իրականացվող հիմնական քրեական հետապնդմանը:¹⁶²

Օրինակ՝ տուժողն այսօրվա օրենսդրական կարգավորմամբ ունի նյութեր ներկայացնելու, մեղադրանքին ծանոթանալու, հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի գործողությունները և որոշումները բողոքարկելու և մի շարք այլ իրավունքներ, որոնք կարծում ենք խոսում են օրենսդրի կողմից նրան իբրև լրացնող մեղադրողի իրավունքներով օժտելու մասին:

Այսպիսով՝ պետք է փաստենք, որ արդեն անկախության շրջանում ընդունված գործող քրեադատավարական օրենսգրքի կարգավորումներով պետական մեղադրանքի ձևով մեղադրանքի կազմակերպումը ավելի ամուր հիմքեր գեցե՞ դուրս մղելով մասնավոր անձանց կողմից իրականացվող մեղադրանքի մի տեսակին՝ ժողովրդական մեղադրանքին, և վերացնելով հիմնական մասնավոր մեղադրանքը: Փոխարենը օրենսդիրը տուժողին վերապահեց նաև այնպիսի իրավունքներ, որոնք բնորոշ են լրացնող մեղադրողին, այլ կերպ՝ օրենսգրքի այսօրվա կարգավորումներով պահպանվեց տուժողի՝ լրացնող մեղադրողի կարգավիճակը:

¹⁶¹ Խոսքը մասնավորապես ընտանիքում բռնության դեպքերի մասին է, երբ անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը (քր.դատ.օր-ի 183-րդ հոդվածի 4-րդ մաս):

¹⁶² Այդպիսով գործող օրենսգրքով տուժողը խիստ «մոտենում է» գերմանական «լրացնող» մասնավոր մեղադրողին: Մակայն միևնույն ժամանակ, ի տարբերություն, գերմանական «լրացնող» մասնավոր մեղադրանքի՝ հայկական «լրացնող» մասնավոր մեղադրանքը կազմակերպված է «լիարժեք» մասնավոր մեղադրանքի ենթատեսակի հետ համադրությամբ, այսինքն՝ տուժողի իբրև «լրացնող» մասնավոր մեղադրող է հանդես գալու հնարավորությունը սահմանափակ չէ՝ նեղ շրջանակ գործերով (հանցագործություններով): Գերմանիայում մասնավոր անձի կողմից իրականացվող հետապնդման մասին տե՛ս աշխատանքի նախորդ էջերում:

Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքի (ոչ պրոֆեսիոնալ մեղադրանքի) կազմակերպումը:

Ինչ վերաբերվում է քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի¹⁶³ կարգավորումներին, ապա այստեղ հարցի վերաբերյալ մոտեցումները որոշակիորեն փոփոխված են, և ոչ պրոֆեսիոնալ մեղադրանքի կազմակերպման վերաբերյալ նախագծային կարգավորումները խիստ մոտենում են քննարկված ՀԽՍՀ 1961թ. քր.դատ.օր-ի կարգավորումներին:

Նախագծի հեղինակները այս հարցում, որոշակիորեն փորձ են արել չեզոքացնել պետական մեղադրանքի գործող «գերակա դիրքը». փորձ, որն ուղղված չլինելով գործերի քննության արդյունավետության բարձրացմանը իր հերթին ոչ պրոֆեսիոնալ մեղադրանքի կազմակերպման հարցում առաջընթաց քայլ է ի համեմատ ներկա օրենսգրքի, սակայն, փորձ, որը այս հարցում զիջում է նույնիսկ ՀԽՍՀ 1961թ. քր.դատ. օր-ի կարգավորումներով ոչ պրոֆեսիոնալ մեղադրանքի համար նախատեսված «չափաբաժիններին»:

Այսպես՝ նախագծի 11-րդ հոդվածում գործող քր.դատ.օր-ի կարգավորումների նման ամրագրվեց այն, որ հանցանքի բնույթից և ծանրության աստիճանից ելնելով քրեական հետապնդումն իրականացվում է հանրային կամ մասնավոր կարգով: Սակայն, ի տարբերություն գործող օրենսգրքի, նախագծով նախատեսվում է հիմնական մասնավոր մեղադրանքի ամբողջական ինստիտուտ ներդնել: Նախագծի 440-րդ հոդվածում սահմանվում է հանցագործությունների որոշակի շրջանակ և նշվում, որ դրանցով վարույթը նախաձեռնվում է, երբ անձը, ով բավարար հիմքեր ունի ենթադրելու, որ տվյալ հանցագործություններով (մասնավոր մեղադրանքի գործերով) իրեն պատճառվել է վնաս, քրեական հայց է ներկայացնում դատարան:

Ընդ որում, ի տարբերություն գործող քր.դատ.օր-ի, նախագծով սահմանվում է, որ մասնավոր մեղադրանքով մինչդատական վարույթ չի իրականացվում (նախագծի 440-րդ հոդվածի 6-րդ մաս) և մասնավոր մեղադրանքի վարույթով որպես հիմնական մեղադրող հանդես է գալիս տուժողը, ով կրում է քրեական հայցում ներկայացված մեղադրանքն ապացուցելու պարտականություն ու (նախագծի 444-րդ հոդվածի 2-րդ մաս) ի պաշտպանություն մեղադրյալի բերված փաստարկների հերքման պարտականություն (նախագծի 17-րդ հոդվածի 3-րդ մաս):

Այսպիսով, ընդհանուր կանոնի համաձայն¹⁶⁴, ըստ նախագծային կարգավորումներ, մասնավոր մեղադրանքի գործերով մեղադրանքի կողմի վարույթի հանրային մասնակիցները չեն մասնակցում գործի քննությանը և քրեական հետապնդման գործառույթը ընկնում է մասնավոր անձի (տուժողի, նրա ներկայացուցչի) վրա:

¹⁶³ Այսուհետ նաև՝ նախագիծ:

¹⁶⁴ Նախագծում ելնելով հանցագործության գոհի շահերի արդյունավետ պաշտպանության հանգամանքից նախատեսվեց նաև կարգավորում, ըստ որի՝ դատախազն իրավասու է մասնավոր մեղադրանքի գործերով քրեական վարույթ նախաձեռնել, եթե անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ վնաս պատճառողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը: Այս դեպքում մասնավոր մեղադրանքով վարույթը կարճվում է, իսկ քրեական վարույթն իրականացվում է ընդհանուր կարգով և տուժողի ու մեղադրյալի հաշտության դեպքում քրեական հետապնդումը չի դադարեցվում (նախագծի 440-րդ հոդվածի 4-րդ մաս):

Փաստացի նախագծային այս կարգավորումները «հիմնական» մասնավոր մեղադրանքը մոտեցնում են գերմանական հիմնական մասնավոր մեղադրանքին:

Այսպիսի կարգավորումն իր հերթին, պետական մեղադրանքին զուգահեռ ներմուծում է ոչ պրոֆեսիոնալ մեղադրանքի մի տարատեսակ՝ «հիմնական» մասնավոր մեղադրանքը:

Արդյո՞ք հիմնական մասնավոր մեղադրանքի ներմուծմամբ և դրանով պետական մեղադրանքի մենիշխանությունը որոշակիորեն չեզոքացնելով կարող ենք հասնել այն նույն արդյունքներին, ինչ պետական մեղադրանքի՝ ժողովրդական մեղադրանքով (դրա տարբեր տարատեսակներով) չեզոքացնելով ենք հասնում:

Հարցին պետք է տանք բացասական պատասխան: Ավելին նախագծի կարգավորմամբ հիմնական մասնավոր մեղադրանքով քրեական հետապնդման արդյունավետությունը կարող է նույնիսկ ընկնել՝ որպես հետևանք հանգեցնելով հանցանք կատարած անձանց պատասխանատվությունից խուսափելուն:

Մասնավոր մեղադրանքի գործերով ներդնելով հիմնական մասնավոր մեղադրանքի ինստիտուտ և ամբողջությամբ քրեական հետապնդումը վերապահելով տուժողին՝ պետությունը այդ կերպ փաստացի «ձեռնպահ է մնում» այդ շրջանակ հանցագործություններով քրեական հետապնդման համար ռեսուրսներ ծախսելուց, ու նման ռեսուրսների ծախսման «պարտականություն» է դնում հանցագործության տուժողի վրա: Եվ հնարավոր է իրավիճակ, որ տուժողը քրեական հետապնդման իրականացման հենց այդ ռեսուրսների բացակայության պատճառով (բավարար ժամանակի, նյութական միջոցների, իրավական գիտելիքների և այլնի), ձեռնպահ մնա քրեական հետապնդման իրականացումից:

Մյուս կողմից, այն դեպքում, երբ տուժողը, որոշի ծախսել իր ժամանակը անձամբ քրեական հետապնդում իրականացնելու վրա, այնուամենայնիվ, նրա իրականացրած քրեական հետապնդման արդյունավետությունը կարող է ընկնել այն պատճառով, որ պաշտպանությունն իրականացնում է ոչ միայն մեղադրյալը, այլև՝ պաշտպանը: Եվ նախագծով մասնավոր մեղադրողին պետական միջոցների հաշվին պարտադիր ներկայացուցչով (իրավաբանական օգնություն ստանալու համար) ապահովելու պայման նախատեսված չէ, հետևաբար կարող է ստացվել իրավիճակ, երբ տուժողի ոչ պրոֆեսիոնալ մեղադրանքին հակազդի պրոֆեսիոնալ պաշտպանությունը, ինչի պայմաններում, ակնհայտ է դառնում քրեական հետապնդման արդյունավետության անկումը դրանից բխող բոլոր հետևանքներով:

Ինչ վերաբերվում է ոչ պրոֆեսիոնալ մեղադրանքի այլ տեսակին՝ ժողովրդական մեղադրանքին, ապա պետք է արձանագրենք, որ նախագծում դրա վերաբերյալ կարգավորումներ ընդհանրապես չկան:

Նախագծով նույնպես պահպանվել են տուժողի բավականաչափ լայն իրավունքներ (ծանոթանալ մեղադրանքին, վարույթի նյութերին կցելու և հետագոտելու համար ներկայացնել ապացույցներ, բողոքարկել վարույթի հանրային մասնակիցների և դատարանի վարութային ակտերը և այլն (50-րդ հոդված)), որոնք ինչպես քր.դատ. գործող օրենսգրքի կարգավորումները, թույլ են տալիս մեզ փաստելու, որ տուժողին վերապահված է իբրև լրացնող մեղադրող հանդես գալու իրավասություն ցանկացած քրեական գործով:

Պետք է փաստենք, որ նախագծով նախատեսվում է ներդնել հիմնական մասնավոր մեղադրանքի ինստիտուտ՝ այդ կերպ նաև չեզոքացնելով պետական մեղադրանքի գործող գերակայությունը: Սակայն, բացառապես հիմնական մասնավոր մեղադրանքով դրա չեզոքացումը, իր հերթին կարող է ունենալ ոչ թե դրական, այլ նաև հակառակը՝ բացասական հետևանքներ. հանցագործությունից տուժած անձը մասնավոր մեղադրանքի գործերով փաստացի «դրվում է» ավելի անբարենպաստ վիճակում, քան ներկա օրենսդրական կարգավորմների դեպքում նա գտնվում է:

Այսպիսով՝ պետք է փաստենք, որ ժողովրդական մեղադրանքը (թեև ոչ սովետական ձևախեղված տարբերակով) մինչ նոր օրենսգրքի ընդունումը շարունակել է իր գոյությունը նույնիսկ

անկախ Հայաստանում: Մյուս կողմից քրեական դատավարության օրենսգրքի ընդունմամբ այս մեղադրանքի տեսակը վերացվել է: Գործող օրենսգրքով խիստ նեղացվել է նաև մասնավոր անձի կողմից իրականացվող մյուս տեսակ մեղադրանքը՝ մասնավոր մեղադրանքը: Նախագծային կարգավորումներում նկատվում է միտում դեպի մասնավոր անձի կողմից իրականացվող հետապնդումը որոշակիորեն «ուժեղացման»՝ «հիմնական» մասնավոր մեղադրանք ներդնելու միջոցով:

Մասկայն, ինչպես փորձեցինք ցույց տալ վերևում, դրանով չի կարելի լուծել այն խնդիրներին, ինչ հնարավոր էր ժողովրդական մեղադրանքով¹⁶⁵: Մասնավոր մեղադրանքը չի լուծում ոչ քրեական դատավարությունը քաղաքականապես «չեզոքացնելու»¹⁶⁶, ոչ դատավարության հանդեպ հանրային վստահության բարձրացման հարցերը, ոչ էլ իրավական-տեխնիկական հարցերը՝ մասնավորապես՝ հանցագործությունների շարունակական աճի պայմաններում ընհանուր քրեական հետապնդման արդյունավետության բարձրացման հարցը¹⁶⁷:

Այսպիսի պայմաններում պետք է փաստենք, որ արդիական է հենց ժողովրդական մեղադրանքով պետական մեղադրանքի մենիչխանությունը չեզոքացնելու հարցը: Հետևաբար աշխատանքի հաջորդ հատվածում, պետք է քննարկենք, ինչ կերպ, ինչ չափաբաժինով է հնարավոր ժողովրդական մեղադրանքը ներդնել հայկական քրեական դատավարությունում՝ պարզելով խոչընդոտները ու դրանց հաղթահարման հնարավոր լուծումներ գտնելով:

¹⁶⁵ Ժողովրդական մեղադրանքի նշանակության մասին տե՛ս աշխատանքի համապատասխան ենթահարցում:

¹⁶⁶ Հայկական իրականությունը գուրկ չէ քրեական դատավարության վրա քաղաքական իշխանության տարատեսակ ազդեցություններից: Օրինակները շատ են. այսպես, 2017թ. մայիսին Երևանի ավագանու ընտրություններում ներկայիս վարչապետ Ն. Փաշինյանի և նրա համախոհների կողմից, ովքեր մասնակցում էին այդ ընտրություններին, քննական մարմիններին ներկայացվեցին «փաստաթղթավորված» տվյալներ կոնկրետ անձանց կողմից կաշառքի բաժանման և դրան օժանդակման մասին: Փաստի առթիվ << հատուկ քննչական ծառայությունում 2017թ. մայիսի 17-ին հարուցվեց քրեական գործ, որը, սակայն, ընդամենը մի քանի օր հետո մայիսի 25-ին կարճվեց՝ ենթադրյալ հանցանք կատարած անձանց արարքներում հանցակազմի բացակայության հիմքով (արդարացնող հիմքով – Ա.Գ.): Արդեն 2018թ. ապրիլ-մայիս ամիսներին տեղի ունեցած համաժողովրդական շարժման հետևանքով 2018թ. ազգային ժողովի կողմից Ն.Փաշինյանի վարչապետ ընտրվելուց ընդամենը 2 օր անց՝ 2018թ. մայիսի 10-ին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կայացրած որոշմամբ դատարանը վարույթն իրականացնող մարմնին պարտադրել է վերացնել բողոքաբերի (Ն.Փաշինյանի – Ա.Գ.) իրավունքների և ազատությունների խախտումները, որի արդյունքում 2018թ. հունիսի 7-ին ՀԿԳ քննության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազ Հ.Պետրոսյանի որոշմամբ քրեական գործով վարույթը կարճվելու մասին ՀԲԾ ՀԿԳ ավագ քննիչի որոշումը վերացվել է: Արդյունքում 2019թ. փետրվարի 4-ին Երևանի ավագանու ընտրություններին կաշառք տալու և դրան օժանդակելու փաստով 11 անձի նկատմամբ կայացվեց մեղադրական դատավճիռ: Առավել մանրամասն տե՛ս ԵԳ/0707/01/18 գործով կայացված դատավճիռը:

Փաստացի ստացվում է, որ չինքն հեղափոխությունը 11 հանցագործ կխուսափեին պատասխանատվությունից՝ նրանց նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու պատճառով, ինչը պետական մեղադրանքի «քաղաքականացվածության» խոտուն օրինակներից է (որը որևէորովում է քրեական հետապնդում չիրականացնելու ձևով) . նախորդ քաղաքական իշխանության ազդեցությամբ քրեական հետապնդումը դադարեցված էր, քաղաքական իշխանության փոփոխությունը հանգեցրեց հակառակ արդյունքին:

¹⁶⁷ ՀՀ-ում հանցագործության դեպքերի աճի (գրանցված հանցագործությունների դեպքերի) մասին կարող են վկայել գլխավոր դատախազի 2008թ. և 2017թ. ընթացքում հանցագործությունների քննության վերաբերյալ տարեկան հաշվետվությունների համեմատությունը: Այսպես, եթե 2008թ. գրանցվել է հանցագործության 9271 դեպք (<http://www.prosecutor.am/myfiles/files/pdf/report-2008.pdf>), ապա արդեն 2017թ. այդ թիվը կազմել է 20285 (<http://www.prosecutor.am/myfiles/files/pdf/haxordum.pdf>):

3.2. Ի՞նչ խոչընդոտներ են առկա, ի՞նչ կերպ է հնարավոր հաղթահարել դրանք և ի՞նչ չափով է հնարավոր ներդնել ժողովրդական մեղադրանքը հայկական քրեական դատավարությունում:

Հանրային-գիտական հարթությունում ինստիտուտի ճանաչելիության պակասը

Ինստիտուտի ներդրման ամենաառանցքային խոչընդոտը թերևս թե՛ իրավակիրառ գործունեություն իրականացնող անձնաց, թե՛ գիտական հանրության շրջանում դրա խիստ ցածր, գրեթե զրոյական ճանաչելիությունն է: Այսպես, մեր կողմից հարցման ենթարկած իրավակիրառ պրակտիկայի աշխատակիցներից ոչ մեկը ծանոթ չէր մեղադրանքի այս տեսակին (ժողովրդական մեղադրանքին), ավելին՝ ոմանք ենթադրում էին (թերևս «ժողովրդական» բառի իմաստաբանական վերլուծությամբ), որ ժողովրդական մեղադրանքը հանրահավաքների, միտինգների և երթերի ընթացքում մարդկանց կողմից հանցագործությունների, դրանք կատարած անձանց մասին միջոցառումների մասնակիցների կողմից բարձրաձայնելն է:

Ինչ վերաբերվում է ինստիտուտի գիտական ճանաչելիությանը, ապա պետք է փաստել, որ այս թեմայի վերաբերյալ առանձին ուսումնասիրություն չենք գտել հայ իրավաբանական գրականության մեջ:

Արդարացի լինելու համար պետք է, փաստել, որ հարցազրույթներ ենք անցկացրել նաև իրավաբանական գիտությունների դոկտորների հետ, որոնք տեղյակ էին ինստիտուտի մասին: Ավելին՝ նրանցից մեկը խիստ դրական էր գնահատում ինստիտուտի ներդրման հնարավորությունը՝ այնուամենայնիվ կանխատեսելով, որ պետությունը դժվար թե գնա այդպիսի քայլի և մեղադրելու իր իրավունքը «կիսի» հանրության անդամների հետ:

Կարծում ենք՝ այս ինստիտուտի ճանաչելիության խոչընդոտը կարելի է հաղթահարել առաջին հերթին ինստիտուտի գիտական ճանաչվածության բարձրացման միջոցով:

Մեր կողմից հետազոտության կատարման ընթացքում հրատարակության է հանձնվել գիտական հոդված ԵՊՀ հայտնի պարբերականներից մեկին¹⁶⁸: Սակայն պետք է նկատել, որ միայն մի գիտական հոդվածով անհնար է հասնել քրեադատավարագիտության մեջ ինստիտուտի ճանաչմանը: Այդ պատճառով կարծում ենք, որ պետք է՝

1. Ծարունակել հոդվածների տպագրությունը ժողովրդական մեղադրանքի թեմայով:
2. Հրապարակել գիտական մենագրություն այս ինստիտուտի վերաբերյալ,
3. Կազմակերպել տարատեսակ գիտական կոնֆերանսներ քրեական հետապնդմանը հանրության մասնակցության վերաբերյալ:

Հարցի գիտական ճանաչելիության բարձրացումից հետո, կարծում ենք, որ արդյունավետ կլինի տարբեր իրավապաշտպան կազմակերպություններին ներկայացնել եղած գիտական նյութերը՝ ցույց տալով ժողովրդական մեղադրանքի «գործիքի» կիրառման դրական դերը իրենց կանոնադրական նպատակներին հասնելու և ընդհանրապես իրավակարգի ամրապնդման գործում:

Կարծում ենք՝ առանց ինստիտուտի ճանաչելիության ընդհանրապես անհնար է խոսել ինստիտուտի ներդրման հեռանկաների մասին, քանի որ ամեն «նորը», (հատկապես՝ «հեղափոխական նորը») կարող է հակառակ ռեակցիա առաջացնել հանրության շրջանում:

Չարաշահման հնարավոր վտանգներ

Մյուս կողմից, հաշվի առնելով «Թավշյա հեղափոխությունից» հետո Հայաստանում որոշ սոցիալական խմբերի մոտ առկա ժխտողական տրամադրությունները, հեղափոխության

¹⁶⁸ «Պետություն և իրավունք» 2019թ. թիվ 1 (83):

արդյունքները չտեսնելու, հեղափոխությունը, նրա առաջնորդներին վատաբանելու միտումները, պետք է փաստել, որ ժողովրդական մեղադրանքի ինստիտուտի ամբողջական ներդրումը կարող է առաջացնել դրա չարաշահման վտանգ՝ իրականում դրական այս «գործիքը» վերածելով քաղաքական տարատեսակ խարդավանքների, վրեժխնդրության և այլնի միջոցի: Սակայն, միևնույն ժամանակ, այս փաստարկմամբ ընդհանրապես ինստիտուտի ներդրման հեռանկարից հրաժարվելը նույնպես սխալ է. չէ՞ որ ցանկացած իրավունքի անբաժան ուղեկիցն է դրա չարաշահման վտանգը: Այդ վտանգները չեզոքացնելու նպատակով կարելի է գոնե սկզբնական շրջանում ինստիտուտը ներդնել որոշակի սահմանափակումներով:

Կարծում ենք, որ սկզբնական շրջանում պետք է գերծ մնալ բոլոր քաղաքացիներին մեղադրելու հնարավորություն ընձեռելուց՝ իրավունքը վերապահելով միայն քաղաքացիների միավորումներին (տարատեսակ հասարակական կազմակերպություններ և այլն): Ընդ որում՝ կարելի է սկզբնական շրջանում նախատեսել, որ մեղադրելու իրավունքը վերապահվում է միայն իրավապաշտպան գործունեությամբ զբաղվող այնպիսի կազմակերպություններին, որոնք ունեն առնվազն իրավապաշտպան գործունեության 10 տարվա ստաժ՝ այդպիսով նաև վերացնելով ոչ իրավաչափ նպատակներով շուտափույթ ստեղծվող տարատեսակ միավորումների քրեական մեղադրանքի հնարավորությունը¹⁶⁹ և այն վերապահելով միայն արդեն երկար ժամանակ իրենց ազնիվ մղումները ցուցաբերողներին:

Մյուս կողմից՝ երկար տարիներ իրավապաշտպան գործունեություն ծավալած լինելու հանգամանքը, լուրջ, սակայն չարաշահման վտանգը իսպառ չվերացնող երաշխիք է: Այստեղ էլ պետք է նախատեսել ժողովրդական մեղադրանքի չարաշահման դեպքեր հայտնաբերելիս, դատարանի կողմից այդ կազմակերպությանը տվյալ գործով ժողովրդական մեղադրանքի իրավունքից զրկելու կարգ¹⁷⁰:

Այլ կերպ ասած՝ սկզբնական շրջանում առաջարկվում է ներդնել «սահմանափակ» ժողովրդական մեղադրանքը:

Բացի այդ, կարծում ենք, սկզբնապես ինստիտուտը պետք է ներդնել միայն «լրացնող» ժողովրդական մեղադրանքի ձևով: Սա թույլ կտա իրավակիրառ պրակտիկային «ծանոթ» դարձնել այս ինստիտուտին, միաժամանակ դրա ներդրումը կկազմակերպվի շատ «նուրբ» եղանակով, առանց ցնցումային փոփոխությունների՝ վարույթի հանրային մասնակիցները կշարունակեն իրականացնել մեղադրանքի հիմնական գործառույթը, իսկ ժողովրդական մեղադրողը միայն կօժանդակի վերջիններին:

Որոշակի ժամանակ անց, հետազոտելով ինստիտուտի փորձարկման գործնական արդյունքները (որքանով են տարատեսակ կազմակերպությունները ներգրավվում գործի քննությանը իբրև ժողովրդական մեղադրող, որքան ակտիվ են գործում իրենց այդ կարգավիճակում, ժողովրդական և պետական մեղադրանքների միասնությամբ գործերով մեղադրական դատավճիռների և միայն պետական մեղադրանքով մեղադրական դատավճիռների թվային ցուցանիշների համեմատություն և այլն), կարելի է նաև զարգացնել այս ինստիտուտը՝ ներդնելով նաև դրա «սուբսիդիար» տարատեսակը քրեական դատավարությունում:

Մյուս կողմից՝ քրեական գործերում շատ հաճախ կարող են տեղ գտնել տարատեսակ գաղտնի ինֆորմացիաներ, որոնք չպետք է հասարակության լայն զանգվածներին հասանելի լինեն: Այդ և այլ պատճառներով, կարծում ենք, որ պետք է ժողովրդական մեղադրանքը սահմանափակել

¹⁶⁹ Իհարկե, մենք չենք ժխտում, որ նոր ստեղծվող հասարակական կազմակերպությունները, կարող են հետապնդել (ու շատ դեպքերում հետապնդում են) իրավաչափ նպատակներ, սակայն սահմանափակումներ մտցնելով մենք փորձում ենք այդպիսով կանխել ժողովրդական մեղադրանքի չարաշահման հնարավոր վտանգները: Ընդ որում՝ ժողովրդական մեղադրանքի այսպիսի սահմանափակումը համահունչ է միջազգային փորձին: Գործունեության ստաժը հիմք ընդունելով «սահմանափակ» ժողովրդական մեղադրանքի սահմանափակմամբ մենք մոռելավորվող ժողովրդական մեղադրանքը մոտեցնում ենք ֆրանսիական ժողովրդական մեղադրանքին, որտեղ նույնպես առկա էին ստաժով պայմանավորված սահմանափակումներ: Մասնագիտական գործունեության 10 տարվա ստաժը հատկապես ընտրվել է հաշվի առնելով, որ դա հայկական իրականության համար ՀԿ-ի կայացվածության իրական ցուցիչ կարող է հանդիսանալ:

¹⁷⁰ Պետք է փաստենք, որ չարաշահման հետևանքով իրավունքի կորուստը գիտության մեջ դիտարկվում է իբրև իրավունքի չարաշահման իրավական հետևանք: Ընդ որում՝ այդպիսի մոտեցում, առկա է նաև պոզիտիվ իրավունքում, օրինակ Գերմանիայի սահմանադրության 18-րդ հոդվածով փաստացի խոսվում է տարատեսակ հիմնական իրավունքներ չարաշահելու դեպքում նույնիսկ դրանցից սահմանադրական դատարանի որոշմամբ զրկվելու հնարավորության մասին:

նաև գործերի շրջանակով, այլ կերպ ասած՝ ներդնել այսպիսի մեղադրողի գործելու հնարավորություն ոչ թե բոլոր քրեական գործերի քննության, այլ միայն դրանց մի մասի քննության դեպքում: Օրինակ՝ ժողովրդական մեղադրանքի հնարավորություն նախատեսել միայն քրեական օրենսգրքի «մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների դեմ ուղղված հանցագործությունները» և «ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունները» 19 և 20-րդ գլուխներով նախատեսված հանցագործությունների քննության համար միայն: Հետագայում արդեն ինստիտուտի գործարկման արդյունքում, թերև և դեմ կողմերը վեր հանելով, կարելի է այս գործերի շրջանակը ընդլայնել¹⁷¹:

Սահմանադրաիրավական հնարավոր խոչընդոտներ

ՀՀ սահմանադրության (2015թ. փոփոխություններով) 176-րդ հոդվածում թվարկված են դատախազության գործառույթները (լիազորությունները), որոնից մեկն էլ քրեական հետապնդման հարուցման գործառույթն է (Սահմանադրության 176-րդ հոդված 2-րդ մասի 1-ին կետ): Ընդ որում՝ այդ գործառույթը ամրագրված էր նաև Սահմանադրության սկզբնական խմբագրության մեջ (1995թ. (103-րդ հոդված)), այնպես էլ դրա արդեն 2005թ. փոփոխություններում (103-րդ հոդված):

Պետք է նկատել, որ հայ իրավագիտության մեջ, ելնելով դատախազության սահմանադրական գործառույթներից, սկզբնապես գերիշխող կարծիք էր ձևավորվել, համաձայն որի դատախազության սահմանադրական գործառույթները **վերջինիս բացառիկ գործառույթներն են:**

Այս առիթով տեղին է մեջբերել դատավարագետ Ա.Ղամբարյանի քննադատական խոսքը քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային այն դրույթին, որով նախատեսվում էր **տուժողի սուբսիդիար մեղադրանքի ինստիտուտի ներդրման հնարավորություն**¹⁷²:

«Արտասահմանյան առանձին երկրների օրենսդրությամբ նախատեսված է սուբսիդիար մեղադրանքի ինստիտուտը, սակայն այն ՀՀ իրավական համակարգ ներմուծելու հարցը նախ և առաջ անհրաժեշտ է քննարկել ՀՀ սահմանադրաիրավական կարգավորման շրջանակներում: Բանն այն է, որ սուբսիդիար մեղադրանքի ինստիտուտ ունեցող երկրների Սահմանադրություններում, **ի տարբերություն ՀՀ Սահմանադրության, ամրագրված չեն դատախազության**

¹⁷¹ Պետք է փաստենք, որ չարաշահման հետևանքով իրավունքի կորուստը գիտության մեջ դիտարկվում է իբրև իրավունքի չարաշահման իրավական հետևանք: Ընդ որում՝ այդպիսի մոտեցում, առկա է նաև պոզիտիվ իրավունքում, օրինակ Գերմանիայի սահմանադրության 18-րդ հոդվածով փաստացի խոսվում է տարատեսակ հիմնական իրավունքներ չարաշահելու դեպքում նույնիսկ դրանցից սահմանադրական դատարանի որոշմամբ զրկվելու հնարավորության մասին: ¹⁷² Պետք է փաստենք, որ այս հետազոտության շրջանակներում մեր կողմից կազմակերպված քննիչների, հետաքննության մարմնի աշխատակիցների, ինչպես նաև դատախազների հետ անցկացված քննարկում- հարցազրույցներից առաջ նախ վերջիններիս տրվել է հարց, արդյո՞ք ծանոթ եք ժողովրդական մեղադրանքին, որին հարցվածների 100% տվել է բացասական պատասխան: Այնուհետև մենք ներկայացնելով ժողովրդական մեղադրանքի էությունը, այն մասնավոր մեղադրանքից տարբերակելու չափանիշները, դրա նշանակությունն ու տեսակները, նրանց բաժանել ենք հարցաթերթիկներ գնահատելու ժողովրդական մեղադրանքի ներդրման հնարավորությունը: Ընդհանուր հարցվածների (28 հոգի) 78.6% (22 հոգի) հնարավոր է համարել հայկական քրեական դատավարությունում ժողովրդական մեղադրանքի ինստիտուտի ներդրումը, իսկ, 21.4% (6 հոգի) այն համարել է անհնար:

Ընդ որում՝ ինստիտուտի ներդրումը հնարավոր համարողներից 15-ը, այսինքն՝ ընդհանուր հարցվածների 53,6% հնարավոր է համարել ժողովրդական մեղադրանքի ներդրումը հենց «սահմանափակ» ժողովրդական մեղադրանքի տարատեսակով: «Սահմանափակ» մեղադրանքի ներդրումը կողմ արտահայտվածներից 6-ը գտել են, որ այն պետք է զուգակցվի ժողովրդական մեղադրանքի «ոչ լիարժեք» ու «լրացնող» տարատեսակների հետ, 3-ը նշել են, որ այն պետք է զուգակցվի «լիարժեք» ու «լրացնող» տարատեսակների հետ, 2-ը՝ «լիարժեք» ու «սուբսիդիար» տարատեսակների հետ, 4-ը՝ «ոչ լիարժեք» և «սուբսիդիար» տարատեսակների հետ:

«Անսահմանափակ» ժողովրդական մեղադրանքի ներդրումը հնարավոր են համարել 7- անձ, այսինքն՝ ընդհանուր հարցվածների 25%: Նրանցից 5-ը գտել է, որ «անսահմանափակ» ժողովրդական մեղադրանքը պետք է համադրվի «ոչ լիարժեք» և «լրացնող» մեղադրանքների հետ: Մեկ անձ հնարավոր է համարել «անսահմանափակ», «ոչ լիարժեք», «լրացնող» ժողովրդական մեղադրանքի տարատեսակների համադրությունը, մեկ անձ հնարավոր է համարել «անսահմանափակ», «լիարժեք», «սուբսիդիար» ժողովրդական մեղադրանքի տարատեսակների համադրությունը:

¹⁷² Թեև այս քննադատությունը արված է տուժողի սուբսիդիար մեղադրանքի ներդրման փորձին, այնուամենայնիվ այն կարող է բերվել նաև ժողովրդական մեղադրանքի ինստիտուտի ներդրման հնարավորության դեմ

գործառնությունները, ինչն օրենսդրին հնարավորություն է տալիս ընթացիկ օրենսդրությամբ նախատեսել համապատասխան կարգավորումներ: Մինչդեռ ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածում թվարկված են քրեական դատավարության ոլորտում ՀՀ դատախազության սահմանադրական գործառնությունները: Առավել տարածված մոտեցման համաձայն՝ քրեական դատավարության ոլորտում ՀՀ դատախազության գործառնությունները և դրանցից բխող լիազորությունները **պատկանում են բացառապես ՀՀ դատախազությանը և որևէ այլ սուբյեկտ չի կարող իրականացնել նշված գործառնությունները և լիազորությունները...** Այս համատեքստում **հանրային մեղադրանքի պաշտպանությունը նույնպես հանդիսանում է ՀՀ դատախազության բացառիկ սահմանադրական գործառնությո՞ւմ, ուստի այն չի կարող ընթացիկ օրենսդրությամբ վերապահվել դատավարության մեկ այլ սուբյեկտի»¹⁷³ (ընդգծումներն իմն են - Ա.Ղ.):**

Քրեական հետապնդման՝ իբրև դատախազության բացառիկ գործառնությո՞ւմ մոտեցումը տեղ է գտել ոչ միայն տեսաբանների շրջանում, այլ նաև գործնականում: Այսպես, օրինակ, ՀՀ գլխավոր դատախազի դիմումի հիման վրա քր.դատ.օր-ի 21-րդ հոդվածի 4-րդ մասի սահմանադրականության հարցը քննարկելիս դիմող կողմը (ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնական ներկայացուցիչը՝ ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ Ա. Մանուկյանը) իր՝ նշյալ հոդվածի մասին տեսակետն արտահայտելիս նշել է, որ հոդվածի նման մեկնաբանությունը «...գրկում է ՀՀ դատախազությանը՝ որպես քրեական հետապնդման բացառիկ գործառնությո՞ւմ ունեցող հանրային իշխանության կրողի, արդյունավետ ձևով հանցագործությունից տուժած անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությունն իրականացնելու հնարավորությունից»¹⁷⁴ (ընդգծումն իմն է - Ա.Ղ.):

Դեռ ավելին՝ գիտության մեջ և պրակտիկայում տարածված այս մոտեցումը 2007թ. ստացավ նաև իր օրենսդրական ամրագրումը. Դատախազության մասին ՀՀ օրենքի¹⁷⁵ 24-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդման հարուցման սահմանադրական գործառնությո՞ւմ դիտարկվեց իբրև **«դատախազի բացառիկ լիազորություն»:**

Այսպիսով, ընդհանրացնելով գիտության մեջ և պրակտիկայում ամուր հիմքերը գցած մոտեցումը, որը ստացել էր նաև օրենսդրական ամրագրում, փորձենք ձևակերպենք ժողովրդական մեղադրանքի ներդրման «սահմանադրական խոչընդոտը», այն է՝ Սահմանադրության մեջ ամրագրված դատախազության գործառնությունները հանդիսանում են վերջինիս բացառիկ գործառնություններ և հետևաբար քրեական հետապնդումը ժողովրդական մեղադրանքի ձևով կազմակերպելը կարող է առաջացնել սահմանադրականության խնդիր:

Այսպիսի «խոչընդոտը» սակայն, մեր կարծիքով, թվացյալ է և կարող է հաղթահարվել, սահմանադրական նշյալ դրույթին (Սահմանադրության 176-րդ հոդված) այլ մեկնաբանություն տալու միջոցով:

Դրա համար մենք, կփորձենք հիմնավորել, որ Սահմանադրության 176-րդ հոդվածով թվարկված ոչ բոլոր գործառնությունն են, որ հանդիսանում են դատախազության բացառիկ գործառնություններ: Այդ հիմնավորումը մեզ թույլ կտա դատախազության գործառնությունների հարցում դրսևորել այլ մոտեցում՝ գործառնությունների շարքում տարանջատելով **բացառիկ և ոչ բացառիկ գործառնություններ:**

Այդպիսի դասակարգման հնարավորությունն ինքնին հիմք կհանդիսանա, որով հնարավոր կլինի «հաղթահարել» «կոշտ» մեկնաբանությունը՝քրեական հետապնդման հարուցումն ու իրացումը միայն դատախազության բացառիկ գործառնությո՞ւմ դիտարկելու մեկնաբանությունը՝ հնարավորություն ընձեռելով ավելի «մեղմ» մոտեցման՝ քրեական հետապնդման հարուցումն ու իրացումը դիտարկելով իբրև դատախազության ոչ բացառիկ գործառնությո՞ւմ այդպիսով

¹⁷³ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային առանձին դրույթների և քրեական դատավարության օրենսգրքի նախագծի ընդհանուր մասի տեսագործնական վերլուծություն /Կ.Քիշարյան, Ա.Ղամբարյան.- Եր.: Վարդհրատ, 2012, էջ 29:

¹⁷⁴ Տե՛ս ՀՀ ՍԴՈ-1319 որոշման 2-րդ կետ:

¹⁷⁵ Նկատենք, որ 2017թ. ընդունվեց «Դատախազության մասին» ՀՀ նոր օրենքը, որն ուժի մեջ մտավ 2018թ.:

«հաղթահարելով» ժողովրդական մեղադրանքի «հակասահմանադրականության խոչընդոտը»: Փորձենք հիմնավորել:

Սահմանադրության քննարկվող հոդվածի ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ դրանում, դատախազության այլ գործառույթների հետ մեկտեղ, տեղ են գտել նաև դատախազության մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության, դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները բողոքարկելու, պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու գործառույթները (Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 4-րդ և 5-րդ կետեր):

«Կոշտ» մեկնաբանության դեպքում, ստիպված պետք է արձանագրել, որ վերը թվարկյալ երեք գործառույթները նույնպես հանդիսանում են դատախազության **բացառիկ լիազորություններ և հետևաբար չեն կարող իրականացվել այլ պետական մարմինների կողմից, ոչ էլ վերապահվել մասնավոր անձանց:**

Այնինչ, պետք է փաստել, որ դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները բողոքարկելու իրավասությունը ոչ միայն չեն կարող հանդիսանալ դատախազության բացառիկ գործառույթ, այլ հանդիսանում են մարդու հիմնարար իրավունքների բաղադրատար և երաշխավորված կոնվենցիոնալ ու սահմանադրական իրավունք:

Սահմանադրության 69-րդ հոդվածի ուժով հանցանք կատարելու համար դատապարտված յուրաքանչյուր ոք ունի իր նկատմամբ կայացված դատավճիռի՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով **վերադաս դատական ատյանի կողմից վերանայման իրավունք:**

Անձի նշված սահմանադրական իրավունքի ապահովման ինքնուրույն մեխանիզմ են հանդիսանում քր.դատ.օր-ով կասկածյալի (63-րդ հոդվածի 2-րդ մասի 17-րդ կետ), մեղադրյալի¹⁷⁶ (65-րդ հոդվածի 2-րդ մասի 20-րդ կետ), հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, **դատարանի գործողությունները և որոշումները**, մեղադրյալի դեպքում՝ նաև դատավճիռը և դատարանի այլ վերջնական որոշումը բողոքարկելու իրավասությունը¹⁷⁷:

Դատախազության՝ պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու գործառույթը նույն կերպ չի կարող հանդիսանալ նրա բացառիկ լիազորությունը: Բանն այն է, որ «հարկադրանքի այլ միջոց» են հանդիսանում նաև քրեական դատավարությունում կիրառվող խափանման միջոցները, ինչպես նաև ձերբակալումը: Արդյո՞ք խափանման միջոցների և ձերբակալման օրինականության նկատմամբ հսկողությունը միայն դատախազության բացառիկ լիազորությունն է: Հարցին պետք է տրվի բացասական պատասխան:

Քրեական դատավարության խափանման միջոցներից շարքին է դասվում նաև կալանավորումը (քր.դատ.օր-ի 134-րդ հոդված): Ու քանի որ կալանավորման դեպքում մենք գործ ունենք անձի աճնական ազատության սահմանադրական և կոնվենցիոնալ իրավունքի սահմանափակման հետ, դրա կիրառումը մինչդատական վարույթում օրենսդիրը հնարավոր է համարում միայն նախնական դատական վերահսկողության կարգով (քր.դատ.օր-ի 285-րդ հոդված): Այլ կերպ ասած՝ քրեական դատավարությունում անձի կալանավորման որոշում կայացնելու լիազորություն ունի միայն դատարանը, հետևաբար էլ՝ մինչդատական վարույթի ընթացքում այդ խափանման միջոցի կիրառման օրինականության նկատմամբ վերահսկողություն է իրականացնում դատարանը¹⁷⁸: Կալանավորման օրինականության և հիմնավորվածության դատական վերահսկողությունը բխում

¹⁷⁶ Քր.դատ.օր-ի կարգավորումներով մեղադրյալը, որի վերաբերյալ գործը նշանակված է դատական քննության, կոչվում է ամբաստանյալ, իսկ այն մեղադրյալը, որի վերաբերյալ կա օրինական ուժի մեջ մտած դատարանի դատավճիռ, որն ամբողջությամբ կամ մասնակիորեն մեղադրական է, կոչվում է դատապարտյալ, եթե դատավճիռն ամբողջությամբ արդարացման է, նա կոչվում է արդարացված (քր.դատ.օր.-ի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր):

¹⁷⁷ **Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի թիվ 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածով նույնպես նախատեսվում է զանգատարկման իրավունք, ըստ որի քրեական հանցագործություն կատարելու համար դատարանի կողմից դատապարտված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ իր դատապարտումը կամ դատավճիռը վերանայվի վերադաս դատական ատյանի կողմից:** Այդ իրավունքի իրականացումը, ներառյալ դրա իրականացման հիմքերը, կարգավորվում է օրենքով:

¹⁷⁸ Ասվածը հավասարապես վերաբերելի է նաև կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավին:

Է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի պահանջներից, որի անձի անձնական ազատության և անձեռնխելիության իրավունքն ամրագրող 5-րդ հոդվածի 3-րդ կետը, որպես անձին ազատությունից զրկելու գործընթացում օրինականության ապահովման երաշխիք պահանջում է, որ **ազատությունից զրկված անձն անհապաղ տարվի դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, ով օրենքով լիազորված է իրականացնել դատական իշխանություն:**

Քննարկվող կոնվենցիոնալ պահանջով է պայմանավորված նաև 2018թ. քր.դատ.օր-ում կատարված այն փոփոխությունը, որով ստեղծվեց ձերբակալման իրավաչափության դատական ստուգման օրենսդրական կառուցակարգ (քր.դատ.օր-ի 289.1-289.5-րդ հոդվածներ):

Նույն կերպ է հարցը լուծվում նաև դատախազության մեկ այլ գործառնությի՝ մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության դեպում (Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ): Մինչդատական վարույթի օրինականության ապահովման երաշխիք է հանդիսանում ոչ միայն դատախազական հսկողության, այլ նաև մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտը (քր.դատ.օր-ի 39-րդ գլուխ):

Մինչդատական վարույթի դատական վերահսկողության ինստիտուտն իր հերթին իրականացնում է սահմանադրական մի շարք իրավունքների պաշպանության ապահովման գործառնությի, ինչպիսին են, օրինակ, բնակարանի անձեռնմխելիության (Սահմանադրության 32-րդ հոդված), հաղորդակցության ազատության և գաղտնիության (Սահմանադրության 33-րդ հոդված) և այլ իրավունքները:

Հետևաբար պետք է փաստել, որ Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դատախազի՝ մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության գործառնությի նույնպես չի կարող մեկնաբանվել իբրև վերջինիս բացառիկ լիազորություն¹⁷⁹:

Այսպիսով՝ մենք, սահմանադրական տարբեր նորմերի, ինչպես նաև օրենսդրության վերլուծության միջոցով, փորձեցինք հիմնավորել, որ Սահմանադրության 176-րդ հոդվածով թվարկված դատախազության ոչ բոլոր լիազորություններն են **հանդիսանում նրա բացառիկ լիազորությունները, ուրեմն և՛ հակառակ պնդումները ճիշտ չեն:**

Ինչ վերաբերվում է դատախազության՝ քրեական հետապնդման հարուցման լիազորությանը, ապա եթե մենք ընդունում ենք դատախազության՝ Սահմանադրության 176-րդ հոդվածով թվարկված գործառնությից առնվազն մի քանիսի ոչ բացառիկությունը, ոչինչ չի խանգարում նաև քրեական հետապնդման հարուցման հարցում դրսևորել նույնպիսի մոտեցում:

Ընդ որում՝ թեև վերը նկատեցինք, որ դատախազի՝ քրեական հետապնդման հարուցման գործառնությի բացառիկությունը 2007թ. նաև ամրագրվել է դատախազության մասին օրենքում (24-րդ հոդված), այնուամենայնիվ պետք է փաստել, որ այդպիսի օրենսդրական կարգավորումը չէր համապատասխանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կանոնակարգումներին:

Այսպես, ըստ քր.դատ.օր-ի 6-րդ հոդվածի 18-րդ կետի քրեական հետապնդման հարուցումը հնարավոր է հետևյալ եղանակով կա՛մ ձերբակալելու, կա՛մ նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու, կա՛մ անձին որպես մեղադրյալ ներգրավելու եղանակներով: Ընդ որում՝ քր.դատ.օր-ի 202-րդ հոդվածով անձին որպես մեղադրյալ ներգրավելու որոշում կայացնելու լիազորություն ունեն և՛ **քննիչը**, և՛ **դատախազը** (քր.դատ.օր-ի 202-րդ հոդվածի 2-րդ մաս), իսկ ինչ վերաբերվում է քրեական հետապնդման հարուցման մյուս եղանակներին՝ ձերբակալմամբ կա՛մ խափանման միջոցի կիրառմամբ քրեական հետապնդման հարուցմանը, ապա այդպիսի լիազորություն քր.դատ.օր-ը վերապահում է նաև **հետաքննության մարմնին** (քր.դատ.օր-ի 57-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետ և 3-րդ մաս, 135-րդ հոդվածի 1-ին, 136-րդ հոդվածի առաջին մասեր):

Այսպիսով՝ քր.դատ.օր-ի 57-րդ, 135-րդ, 136-րդ և 202-րդ հոդվածների, ինչպես նաև քր.դատ.օր-ի 6-րդ հոդվածի 18-րդ կետի համադրված վերլուծությունից կարող ենք արձանագրել, որ քրեական

¹⁷⁹ Դատախազական հսկողության, դատական վերահսկողության ինստիտուտների մասին տե՛ս Սահմանադրական դատարանի 844 որոշում, տե՛ս նաև Լաուրա Գարեգինի Չարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԿԴ/0081/11/09 որոշումը:

դատավարության գործող օրենսգրքով **դատախազը չունի** քրեական հետապնդման հարուցման **բացառիկ լիազորություն**։ այն կարող է հարուցվել նաև **հետաքննության մարմնի և քննիչի կողմից**։

Ինչ վերաբերում է դատախազության մասին օրենքի և քր.դատ.օր-ի միջև եղած հակասությունը մինչ 09.04.2018թ¹⁸⁰ քր.դատ.օր-ի 1-ին հոդվածի ուժով այն պետք է լուծվի «ի օգուտ» քրեադատավարական օրենսգրքում տեղ գտած կարգավորումների։

Այս առումով, պետք է նկատել, որ 2017թ. ընդունված դատախազության մասին նոր օրենքում արդեն փոփոխության ենթարկվեց դատախազի՝ քրեական հետապնդման հարուցման վերաբերյալ նախկին մոտեցումը՝ այն համապատասխանեցնելով քր.դատ.օր-ի կարգավորումներին։ Ու եթե նախկին օրենքի՝ 24-րդ հոդվածը ուներ երկրորդ մաս, որով հռչակվում էր քրեական հետապնդման հարուցման դատախազի բացառիկ լիազորությունը, ապա արդեն նոր օրենքում այդ երկրորդ մասն ուղղակի հանվեց։

*Այսպիսով՝ ներկա օրենքական կարգավորումներում մենք չենք գտնում քրեական հետապնդման հարուցման և իրացման դատախազի բացառիկ լիազորության մասին որևէ կանոնակարգում, ընդհակառակը՝ օրենսդրության վերլուծությունը հնարավորություն է տալիս փաստելու, որ օրենսդիրը իր քաղաքականությամբ որդեգրել է դատախազի Սահմանադրության 176-րդ հոդվածով սահմանված լիազորությունների մեկնաբանման «մեղմ» մոտեցում, ըստ որի դատախազության որոշ գործառույթներ, այդ թվում նաև քրեական հետապնդման հարուցման գործառույթը **չեն հանդիսանում նրա բացառիկ գործառույթը**։*

Այս դիտարկումը բավարար է փաստելու, որ ժողովրդական մեղադրանքի ներդրման «սահմանադրական խոչընդոտը» գուտ թվացյալ է, քրեական հետապնդման հարուցումն ու իրացումը չի հանդիսանում դատախազության բացառիկ լիազորություն, այն կարող է վերապահվել այլ մարմինների (ինչպես ներկայումս է վերապահված) և մասնավոր անձանց՝ առանց սահմանադրական որևէ դրույթի հետ հակասություն ունենալու։

¹⁸⁰ Դատախազության մասին նոր օրենքի ուժի մեջ մտնելու ամսաթիվը։

Եզրակացություն

Այսպիսով կատարված հետազոտությունը թույլ է տալիս փաստել, որ ժողովրդական մեղադրանքի ինստիտուտը համատեղելի է հանցագործության հանրային իրավական նշանակության գիտակցության հետ:

Երկրորդ՝ հստակ տարանջատում մտցնել մասնավոր անձի կողմից իրականացվող հետապնդման երկու տեսակների՝ մասնավոր մեղադրանքի և ժողովրդական մեղադրանքի միջև՝ դրանցով ուղղակիորեն պաշտպանվող շահը դիտարկելով իբրև այս երկու մեղադրանքների տարանջատման չափանիշ:

Երրորդ՝ սխալ դիտարկելու այն պնդումները, թե դատախազության (պետական մարմինների) մերօրյա գոյության պայմաններում արդեն ժողովրդական մեղադրանքի առկայությունը անիմաստ է և հետևաբար՝ այդպիսի պայմաններում ժողովրդական մեղադրանքը հնացած մի ինչ-որ ինստիտուտ է. հետազոտության ընթացքում վեր հանված ժողովրդական մեղադրանքի թե հասարակական-քաղաքական և թե գուտ իրավական-տեխնիկական նշանակությունը վկայում է մեր ժամանակներում նշված մեղադրանքի տեսակի գոյության անհրաժեշտության մասին:

Չորրորդ՝ պատմական-համեմատախրավական վերլուծության արդյունքում պարզ դարձավ ինստիտուտի «ունիվերսալությունը», այն դրսևորվել(վում) է ինչպես Հռոմում, անգլոամերիկյան և մայրցամաքային քրեադատավարական համակարգերին պատկանող երկրներում, անգամ գոյություն է ունեցել ԽՍՀՄ-ում: Սա ինքին վկայում է այն մասին, որ ինստիտուտը չի հանդիսանում միայն մի քրեադատավարական համակարգի տարր, ինչն էլ թույլ է տալիս պնդել, որ այն հնարավոր է ներդնել նաև հայկական քրեական դատավարությունում:

Հինգերորդ՝ թե գործող, և թե քրեական դատավարության նոր օրնեսգրքի նախագծով մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքը արտահայտված է միայն մասնավոր մեղադրանքով, որով չի լինում հասնել այն դրական արդյունքներին, որի հնարավորությունն էր ընձեռում ժողովրդական մեղադրանքը:

Վեցերորդ՝ բացակայում են ժողովրդական մեղադրանքի ներդրման սահմանադրաիրավական խոչընդոտները, դրանք գուտ «թվացյալ» են, ինչը հաղթահարվում է սահմանադրական նորմերի մեկնաբանման միջոցով:

Յոթերորդ՝ փաստելով, որ ժողովրդական մեղադրանքը հանրային շահի ապահովման գործուն միջոց կարող է հանդիսանալ, պետք է արձանագրել նաև դրա հակառակ կողմը. առկա նաև ժողովրդական մեղադրանքի չարաշահման վտանգ, ինչը հնարավոր է այդ «բարերար» գործիքը դարձնի «չարիք»: Մյուս կողմից գուտ չարաշահման վտանգը ինքին խոչընդոտ չէ նշված մեղադրանքի ներդրումից հրաժարվելու համար: Հետևաբար ժողովրդական մեղադրանքը ներդնելիս պարտադիր պետք է հաշվի առնել վտանգները և ստեղծել ժողովրդական մեղադրանքի չարաշահման դեմ հստակ մեխանիզմներ:

Առաջարկություններ

Ինչպես արդեն նկատել ենք՝ քրեական դատավարության ներկայիս օրենսգիրքը չի ճանաչում ժողովրդական մեղադրանքի ինստիտուտը: Հետևաբար դրա ներդրման համար (վերը ուրվագծված չափաբաժինով) պետք է քրեական դատավարության օրենսգրքում կատարվեն լրացումներ: Սույն աշխատանքի ծավալների սահմանափակվածության պատճառով չենք կարող քրեական դատավարության օրենսգրքում կատարվելիք բոլոր փոփոխությունները նախատեսել, դրա համար կպահանջվի առանձին մի ինքնուրույն աշխատանք, սակայն այնուամենայնիվ մի քանի հիմնական դրույթներ կփորձենք այստեղ ձևակերպել, որոնց համեմատ քր.դատ.օր-ում կատարվելիք մնացյալ փոփոխությունները կունենան առավելապես տեխնիկական նշանակություն:

Նախ պետք է ստեղծվի քրեական դատավարության մեղադրանքի կողմում գտնվող առանձին մի սուբյեկտ «ժողովրդական մեղադրող» անվանմամբ: Առաջարկում ենք, քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելով սահմանել 59.1 հոդված¹⁸¹

1. Իբրև ժողովրդական մեղադրող կարող է ճանաչվել այն իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը, որն ունի առնվազն 10 տարվա իրավապաշտպան գործունեության ստաժ: Տվյալ դեպքում ժողովրդական մեղադրողի իրավունքները և պարտականություններն իրականացնում է կազմակերպության ներկայացուցիչը:

2. Ժողովրդական մեղադրող ճանաչվելու համար տվյալ հասարակական կազմակերպության կողմից լիազորված անձը պետք է դիմի վարույթ իրականացնող մարմնին՝ ներկայացնելով 10 տարվա իրավապաշտպան գործունեություն ծավալած լինելու մասին փաստաթղթային հիմնավորումներ:

3. Ժողովրդական մեղադրող ճանաչելու մասին որոշում են կայացնում հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը:

4. Քրեական գործով միաժամանակ կարող են հանդես գալ մի քանի ժողովրդական մեղադրող:

5. Ժողովրդական մեղադրողի մասնակցությունը թույլատրվում է միայն ՀՀ քրեական օրենսգրքի «մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների դեմ ուղղված հանցագործությունները» և «ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունները» գլուխներով նախատեսված հանցագործություններով քրեական վարույթ նախաձեռնելու դեպքում:

6. Այն բոլոր դեպքերում, երբ քրեական գործի քննության մինչդատական վարույթում հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը արձանագրում են ժողովրդական մեղադրողի մեղադրանքի իրավունքի չարաշահման ակնհայտ դեպքեր, վերջիններս իրավասու են դիմել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան տվյալ կազմակերպությանը կոնկրետ գործով ժողովրդական մեղադրողի իրավունքից զրկելու համար:

7. Միջնորդությունը դատավորի կողմից քննվում է միանձնյա այն ստանալու պահից տասն օրվա ընթացքում՝ այդ մասին տեղյակ պահելով վարույթն իրականացնող մարմնին և ժողովրդական մեղադրողին: Ժողովրդական մեղադրողի կամ վարույթն իրականացնող մարմնի չներկայանալը չի խոչընդոտում միջնորդությունը քննելուն, սակայն դատավորը կարող է պարտադիր համարել վարույթի նշված մասնակիցների ներկայությունը: Վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է դատարան ներկայացնել միջնորդության վերաբերյալ նյութեր: Վարույթն իրականացնող մարմինը և ժողովրդական մեղադրողը բացատրություններ տալու իրավունք ունեն:

¹⁸¹ Գիտակցում ենք, որ առաջարկվող փոփոխությունների մեջ կան դրույթներ, որոնք իրավական տեխնիկայի առումով ավելի նպատակահարմար կլինեն ամրագրել ոչ թե քր.դատ.օր-ի 7-րդ գլխում («Մեղադրանքի կողմը»), այլ 39-րդ գլխում («Դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ»), հետևաբար՝ մեր կողմից նշվող հոդվածների թվերը, դրանցում տեղ գտած մասերի հաջորդականությունը (59.1, 59.2) խիստ պայմանական բնույթ են կրում:

8. Միջնորդությունը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում ժողովրդական մեղադրողի կարգավիճակը դադարեցնելու մասին: Գտնելով, որ վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը անհիմն է, դատարանը որոշում է կայացնում միջնորդությունը մերժելու մասին: Դատավորի որոշման պատճենն ուղարկվում է վարույթն իրականացնող մարմնին, ժողովրդական մեղադրողին:
9. Եթե ժողովրդական մեղադրողի մեղադրանքի իրավունքի չարաշահման ակնհայտ դեպքեր հայտնաբերում է դատարանը դատական վարույթներում, ապա նա իրավասու է, անկախ կողմի միջնորդությունից, սեփական նախաձեռնությամբ քննել և լուծել ժողովրդական մեղադրողի կողմից մեղադրանքի չարաշահման հարցը:

59.2 – ընդհանուր կանոններով նախատեսված ժողովրդական մեղադրողի իրավունքներն ու պարտականությունները:

«1. Ժողովրդական մեղադրողն, օրենքով սահմանված կարգով, իրավունք ունի՝

1. ներկայացնել նյութեր քրեական գործին կցելու և հետազոտելու համար
 2. ծանոթանալ առաջադրված մեղադրանքին
 3. տալ բացատրություններ
 4. հայտնել բացարկներ
 5. հարուցել միջնորդություններ
 6. առարկել քրեական վարույթն իրականացնող մարմինների գործողությունների դեմ և պահանջել իր առարկությունները մտցնել քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրության մեջ
 7. պահանջել կատարել քննչական գործողություններ
 8. պահանջել կատարել դատավարական գործողություններ
 9. ծանոթանալ քննչական և այլ դատավարական գործողությունների արձանագրություններին, որոնց նա մասնակցել է և դիտորդություններ ներկայացնել արձանագրությունում գրառումների ճշտության և լրիվության կապակցությամբ, քննչական և այլ դատավարական գործողությանը մասնակցելու, դատարանի նիստին ներկա գտնվելու դեպքում պահանջել նշված գործողության կամ դատարանի նիստի արձանագրության մեջ գրառումներ կատարել այն հանգամանքների մասին, որոնք, իր կարծիքով, պետք է նշվեն, ծանոթանալ դատական նիստի արձանագրությանը և ներկայացնել դրա մասին իր դիտորդությունները
 10. նախաքննության ավարտման պահից ծանոթանալ գործի բոլոր նյութերին, դրանցից պատճեններ հանել և գործից դուրս գրել ցանկացած ծավալի ցանկացած տեղեկություններ
 11. մասնակցել առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նիստերին
 12. իր խնդրանքով անվճար ստանալ քրեական գործը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու, որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումների պատճենները, մեղադրական եզրակացության կամ եզրափակիչ որոշման պատճենը, ինչպես նաև դատավճռի կամ դատարանի՝ այլ վերջնական որոշման պատճենը
 13. բողոքարկել հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի գործողությունները և որոշումները, այդ թվում՝ դատավճիռը և դատարանի այլ վերջնական որոշումը.
 14. առարկություններ ներկայացնել դատավճռի կամ դատարանի՝ այլ վերջնական որոշման դեմ բերված դատավարության այլ մասնակիցների բողոքների վերաբերյալ
 15. ունենալ ներկայացուցիչ և դադարեցնել ներկայացուցչի լիազորությունները:
2. Ժողովրդական մեղադրողը պարտավոր է՝
1. Քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնել ներկայացուցչի՝ իր լիազորությունները հաստատող փաստաթղթերը

2. ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով
 3. ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախագահողի իրավաչափ կարգադրություններին
 4. դատարանի նիստում պահպանել կարգուկանոն:
3. Ժողովրդական մեղադրողն ունի նաև քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այլ իրավունքներ և պարտականություններ:

Կարծում ենք՝ սրանք սկզբնական շրջանում այն առանցքային, ուղենշային լրացումներն են, որոնց իրականացմամբ հնարավորություն կստեղծվի իրագործել ժողովրդական մեղադրողի ինստիտուտի «մուտքը» հայկական քրեական դատավարություն: Իհարկե, առաջարկվող լրացումները չեն հավակնում սպառիչ լինելուն, և դրանց զուգահեռ մի շարք այլ փոփոխությունների ու լրացումների անհրաժեշտություն թերևս առաջանա:

Օգտագործված գրականության ցանկ

Հայալեզու գրականություն

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային առանձին դրույթների և քրեական դատավարության օրենսգրքի նախագծի ընդհանուր մասի տեսագործական վերլուծություն /**Կ.Բիշարյան, Ա.Ղամբարյան.**- Եր.: Վարդհրատ, 2012

Ղամբարյան Ա. Դատարանում մեղադրանքը փոխելը եւ մեղադրանքից հրաժարվելը, Եր., «Իրավունք» հրատ., 2009

Ղամբարյան Ա. Քրեական հետապնդումը (մեղադրանքը) մինչդատական վարույթում: Ուսումնական ձեռնարկ: Եր.: 2016

Ռուսալեզու գրականություն

Альперт С.А., Обвинение в советском уголовном процессе, учебное пособие, Харьков, 1974

Бобылев М.П. Обвинение как предмет уголовного правосудия в современной России. Автореф. Дисс. ...канд. юрид. Наук. Уфа, 2004

Бутов В. Н. Уголовный процесс Австрии.— Красноярск: Изд-во Краснояр. ун-та, 1988

Васильева Е.Г. Уголовный процесс: догматико-аксиологическое исследование. Монография. М.: Юрлитинформ, 2013

Вернер Б., Уголовно-процессуальное право ФРГ: Учебник. 6-е изд., пер.с нем. Я.М. Плошкиной; Под ред. Л.В. Майоровой. – Красноярск : РУМЦЮО, 2004

Ветрова Г. Н. Субсидиарное обвинение и принцип состязательности // *Известия Алтайского государственного университета. Юридические науки.* № 3, 2017

Гегель Г. В. Ф. Философия права. Пер. с нем.: Ред. и сост. Д. А. Керимов и В. С. Нерсесянц; М.: Мысль, 1990

Глазер Ю. Руководство по уголовному процессу, Т.1 (пер. А. Лихачева). СПб, 1884,

Головко Л. В. Альтернативы уголовному преследованию в современном праве. –СПб.: Изд. «Юридический центр Пресс», 2002

Головко Л.В. Материалы к построению сравнительного уголовно-процессуального права: источники, доказательства, предварительное производство // Труды юридического факультета. Кн. 11. – М.: Правоведение, 2009

Курс уголовного процесса / Под ред. д.ю.н., проф. **Л.В. Головко.** – 2-е изд., испр. – М.: Статут, 2017

Гуценко К. Ф., Головко Л. В., Филимонов Б. А. Уголовный процесс западных государств. М.: Зерцало-М, 2002

Гуцев В.Е., Александров, А. С. Народное обвинение в уголовном суде. Н.Новгород: НЮИ МВД РФ, 1998. (http://kalinovskiy-k.narod.ru/b/aleksandrov_1998/2.html#22)

Зелинский Ф.Ф. Римский уголовный процесс // М. Туллий Цицерон. Полное собрание речей в русском переводе.Т.1. СПб, 1901

Иванов, А.А. Римское право: учеб. Пособие для студентов вузов, обучающихся по специальности 030501 «юриспруденция». М., 2012

- Квачевский А.** Об уголовном преследовании, дознании и предварительном исследовании преступлений по Судебным уставам 1864 года. Ч. 1: Теоретическое и практическое руководство.. СПб., 1866
- Кистяковский А.Ф.** О пресечении обвиняемому способов уклоняться от следствия и суда. СПб., 1868,
- Советский энциклопедический словарь / Издание 2-е, науч.- ред., совер: А.М.Прохоров и др., гл.ред. С.М.Ковалев., М.,1980
- Козлова А.Н.** Публичность как принцип уголовного судопроизводства: дис. к.ю.н., Москва, 2007
- Памятники российского права. В 35 т. Т.29. Уголовно-процессуальные кодексы РСФСР: учебно-научное пособие/ под общ. ред. докт. юрид. наук, проф. **В. А. Лазаревой**, докт. юрид. наук, проф. **Р. Л. Хачатурова**. – М.: Юрлитинформ, 2016
- Мельников Е.А.**, Уголовное преследование в условиях действия системы разделения властей (досудебное производство), дисс. ...канд. юрид.наук. Москва, 2017
- Муравьев Н.В.** Прокурорский надзор в его устройстве и деятельности: Пособие для прокурорской службы. Т. 1. Прокуратура на Западе и в России. – М., 1889
- Петрова Н.Е.** Частное и субсидиарное обвинение. Самара: Изд-во «Самарский университет», 2004
- Покровский И.А.** История римского права. Пг. Изд-е юридическ. книжн. Кл. «Право». 1918
- Покровский И.А.** Право и факт в римском праве. Часть 2, Генезис преторского права. – Киев, 1902
- Покровский И.А.** Частная защита общественных интересов в Древнем Риме // Древнее право. IVS ANTIQVVM. - М.: Спарк, № 2 (5), 1999
- Полянский Н.Н.** К вопросу об участии частных лиц в публичном обвинении (Принципиальная основания actio popularis в уголовном процессе), 1915
- Полянский Н.Н.** Право обществ на уголовный иск // Вопросы права. Кн. 6(2),1911
- Рахунов Р.Д.** Участники уголовно-процессуальной деятельности по советскому праву. М., госюриздат, 1961
- Случевский В.** *Учебник русского уголовного процесса. Судостройство - судопроизводство* (издание 4-е, дополненное и исправленное). - С.-Петербург, типография М. М. Стасюлевича, 1913
- Большой юридический словарь/ Под ред. А.Я.Сухарева, М., 2010
- Ураков Л.И.** Общественное обвинение и общественная защита. Юрид.лит. М. 1964
- Фаткуллин Ф.Н., Зинатуллин З.З., Аврах Я.С.** Обвинение и защита по уголовным делам. Казань, Изд-во Казанского ун-та. 1976.
- Фойницкий И. Я.** Курс уголовного судопроизводства. Том I (издание 4-е). - С.-Петербург, типография товарищества "Общественная польза", 1912
- Фойницкий И. Я.** Курс уголовного судопроизводства. Том II (издание 3-е, пересмотренное и дополненное). - С.-Петербург, Сенатская типография, 1910
- Фон-Резон А. К.** О преступлениях, наказуемых только по жалобе потерпевшего по русскому праву. - СПб., 1882
- Чельцов-Бебутов М.А.** Курс советского уголовно-процессуального права. Очерки по истории суда и уголовного процесса в рабовладельческих, феодальных и буржуазных государствах. М., 1957
- Шифман М.Л.** К вопросу о развитии обвинения в советском суде (К 25-летию советской прокуратуры) // Советское государство и право, № 5, М., 1947

Жирова М.Ю. Особенности доказывания по делам частного обвинения: монография.- М., Юрлитинформ, 2013

Անգլալեզու գրականություն

- Bessler J.**, The Public Interest and the Unconstitutionality of Private Prosecutors, 47 Ark. L. Rev. 1994
- Burns P.** Private Prosecutions in Canada: The Law and a Proposal for Change, McGill Law Journal, 21,1975
- Cardenas J.** The Crime Victim in the Prosecutorial Process, 9 HARV. J.L. & PUB. POL'Y, 1986
- Douglas H.** Controlling the English Prosecutor. Osgoode Hall Law Journal 21.2, 1983
- Edmonds T., Jugnarain D.**, Private Prosecutions: A Potential Anticorruption Tool in English Law, 2016
- Gil J. P.** Private Interests Seeking Punishment: Prosecution Brought by Private Individuals and Groups in Spain, Law & Policy, 2003
- Gómez R. S.** Revisiting Popular Action, 10 DePaul J. for Soc. Just., 2017
- Hungerford-Welch P.** Criminal Procedure and Sentencing. – London and New York: Routledge. 2014
- Jones E.** The Office of Attorney-General // The Cambridge Law Journal. Vol. 27, 1969
- Kaufman I. R.** Criminal Procedure in England and the United States: *Comparisons in Initiating Prosecutions*, 49 Fordham L. Rev. 26, 1980
- Klerman D.** Settlement and the Decline of Private Prosecution in Thirteenth-Century England Independent Institute Working Paper 19, 2000
- Langbein J. H.** Controlling Prosecutorial Discretion in Germany, The University of Chicago Law Review, Volume 41, No 3,1974
- McCormack M. T.** Note, The Need for Private Prosecutors: An Analysis of Massachusetts and New Hampshire Law, 37 SUFFOLK U. L. REV, 2004
- O'Neill M. E.** *Private Vengeance and the Public Good*, U. PA. J. CONST. L. Vol. 12:3, 2010
Promoting Prosecutorial Accountability, Independence & Effectiveness, Comparative Research, Open Society Institute Sofia
- Sidman A.** The Outmoded Concept of Private Prosecution, 25 AM. U. L. REV., 1975
The Legal Framework for Universal Jurisdiction in France, Human Rights Watch, 2014

Օրենսգրքեր, նորմատիվ իրավական ակտեր և այլն:

ՀՀ Սահմանադրություն

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի թիվ 7-րդ արձանագրություն

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծ

ՀՀ օրենքը դատախազության մասին (ընդունված 17.11.2017)

ՀՀ օրենքը դատախազության մասին (ընդունված 22.02.2007)

1917թ. նոյեմբերի 24-ին հրապարակված Դատարանի մասին դեկրետ (Դատարանի մասին դեկրետ No1

1918թ. մարտի 7 (22 փետրվարի)) ընդունված Դատարանի մասին 2-րդ դեկրետ
1918թ. նոյեմբերի 30-ին ընդունված «ՌԻՖՍՄՍ ժողովրդական դատարանի մասին» դեկրետով :
Victim Crime Act of 1984,
Victims' Rights and Restitution Act of 1990,
Victims of Trafficking & Violence Protection Act of 2000.
Violence Against Women Act of 1994 and Act of 2000,
Crime Victims' Rights Act 2004
<https://www.justice.gov/usao/resources/crime-victims-rights-ombudsman/victims-rights-act>

<https://www.arlis.am>
<https://www.hse.ru/data/2012/06/09/1252752628/Artnis91.pdf>,
<https://www.legislation.gov.uk/ukpga/1985/23>
<http://www.mondaq.com/uk/x/541522/Crime/The+Rise+of+Private+Prosecutions>,
<https://www.independent.co.uk/news/uk/crime/two-tier-justice-private-prosecution-revolution-9672543.html>
<https://view.pagetiger.com/RSPCA2017PR/RSPCA2017prosecutionreport>
https://nj.gov/state/dos-statutes-elections-19-31-39.shtml#ele_19_34_63
https://www.gesetze-im-internet.de/englisch_stpo/englisch_stpo.html
<https://www.legifrance.gouv.fr/content/location/1741>
<https://www.supremecourt.uk/cases/docs/uksc-2011-0115-judgment.pdf>
<http://www.prosecutor.am/myfiles/files/pdf/report-2008.pdf>
<http://www.prosecutor.am/myfiles/files/pdf/haxordum.pdf>

ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներ

ՀՀ ՍԴԸ-1319 որոշում

ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներ

Արկադի Պատվականի Պապյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թ. նոյեմբերի 5-ի թիվ ՏԴ/0115/01/09 որոշում

Արմեն Ջիվանի Բարսեղյանի և Սուրեն Ռազմիկի Թումանյանի գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԴԴ/0044/01/11 որոշում

Լաուրա Գարեգինի Չարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԿԴ/0081/11/09 որոշում

Առաջին ատյանի դատավճիռներ

Դատական գործ համար ԵԴ/0707/01/18

ԱՄՆ Քերազույն դատարան որոշումներ

Linda R.S. v. Richard D., 410 U.S. 614 (1972)